Հռոմուլոս՝ որք արբեանց կարճեցին զկեանս թագակցին քո ։ Աչօք իմովք տեսի զՏատիոս անկանել 'ի Հարուածոց սրոյ չորից ոխակալեաց ։ Այս ձեռամբ սպանի զերկուս 'ի նոցունց ․ այլ միւս երկուքն փախստական եղեն զերծեալ 'ի ձեռաց իմոց, և գուցէ մնացեն անպատիժ, մինչև դուք տայցեն զվրէժ ։ Քաջ դիտես զկապանս արեան որք յօդեն զիս ընդ արքային սաբինաց, չես թերևս յոյժ Հասու լեալ գորովալիր ակնածութեան զոր ունէի առ նորին առաքինութիւն ։ Նորոգին աղաղակք այսոքիկ զվէճ և զարտմտութիւն պատրաստութիւն զնեն 'ի վր իմ, ակնունիմ կատարել զնմ ։ Ա՛րքայ Հռովմայ՝ կաթողին եմ ես Հերսիլեայ, կեանք իմ առանց նր ոչ ինչ են վս իմ, այլ խստտացայ երդուայ եւ տայցիսն՝ մինչ յոգնիս պարգեւն ապառնոյն՝ լինել այլ դատելն իւրոյ, կատարեցից զերդումն իմ։ Գիտեմ ես յետ առ քեզ զխոստացեալ նութիւն քո, հրաժարել 'ի մի միայն բարւոյն որ ցանկալի է ինձ, եւ խնդրել 'ի քէն զհանճարութիւն քո առ 'ի լինել ապերջանիկ մինչեւ իսպառ։

Զայս օրինակ խօսի Նումայ եւ կորակնի։ Ապշացեալ Հռոմուլոսի՝ մնայ պահ մի առանց պատասխանելոյ. հեղձխեղեալ ընդդիմամարտեալ՝ թողու 'ի ձեռաց իւրոյ զքնարն անկանել. պաղատանօք անշարժ սպասէ յայտնութեան խորհրդոյ մնացին Հռոմուլոսի՝ առ 'ի ուրախանալ կամ տրտմել։

Յառնէ 'ի վախճանի արքայն ահաւոր, եւ հայեցեալ 'ի Նումայ զի յասմանն՝ Երիտասարդ դու՝ ասէ ցնա, արդ լեալ էր ինձ զմահուանէ աթոռակցին իմոյ, արդէն հրաման հանեալ է իմ կալնուլ եւ դատել զյանցաւորսն։ Որ եւ իցէ անձն քո առ տայցիս, մարթ է քեզ զհօր վրէժխնդրութիւն սպանմանն թագաւորի միոջ՝ 'ի թագաւոր ոք առնել ապաստանս։ Բայց՝ եթէ զխոստմ՝ ես պատուհասել զյանցանս, ոչ Նումայ զխոստմ՝ ե զիշխանաւէրս նուաճել։ Նումայ՝ արդեւ լեալ քեզ սանուցք կին զդուստրն արքային Սաբինաց, զի խրատուցք նորա առ զաւակն հայրենի, կարասցեն յաւուր միում՝ հասուցանել ինձ չարիս, փոյթ ոք ընդ քո փոխանակ հատոս տեղիք 'նմա այլ։ Արքան առ արհամարհութիւնն որով ահաձեցար ընդ դուստրն իմ, փոյթ մի բայց յորդորեալ մարտի՝ կարասցէ վճարացուցանել, բայց կամ է ինձ բարւոք նկատել զհասակն քո, զանչափ քաջասրտութիւն որ զմեզ անջրպեաց, եւ զկռիւն ամի յիշել զի օգնական եղեր դու զօրաց իմոց։

Զկնի արտասանելոյ զբանս զայսոսիկ բարբառով ինքն զոր նկատէր մեղմացուցանել, արտաքս ել նէ Հռոմուլոս առանց պարտելոյ պատասխանատուոյն Նումայի ։ Ապերջանիկ սիրահարս այս կամի խօսիլ ընդ Հերսիլիայ . բայց անողորմն ամեհի խեթիւ և արհամարհանօք հայի ընդ նա , անցանէ մերձ առ նա առանց պատասխանելոյ և ոչինչ , և ապաստանեալ 'ի համայն զօրականաց գնայ առ հայր իւր ։

Այս յոխորտութիւն՝ այս արհամարհութիւն Հերսիլիայ 'ի խոր խոցեցին զսիրտ Նումայի , բայց առաւել գրգռեցին զառաջին զպատուական զոր առնէր ։ Յառուցել ընդ դէմ Հռոմուլոսի , պչարել ընդ դէմ զօրեր նորա , հաստատելով 'ի միտս դիւցազնաւ լինել ամենայն արկածից առ 'ի կալ մնալ հաւատարիմ՝ արքային իւրոյ , առաւել հաստատուն և առաւել յեղամիտ դառնայ Նումայ առաքինապաշտ յապարանս սաբինեայ ։

Ո՛վ դուստր երանեալ Տատիոսին 'ի պատկառելոյս՝ ասէ ցնա առ նա մերձեցեալ , ներեա՛ եթէ 'ի մէջ դառնագին ցասուց քոց և արտասուաց գամ՝ ես խօսիլ ընդ քեզ զհարսանեաց ։ Հայր քո 'ի մեռանելն զքեզ ինձ աւանդեաց ։ Ակրոնի Հոգի նորին երդմամբք իմով մխիթարեցաւ , զոր երդուայ նմա առնուլ զքեզ կնութեան . և Հռոմուլոս արգելու ինձ , չանի ինչ իրաւունս Հռոմուլոս ։ Գիտեայք սաբինացիք ես և դու , ընդ իշխանութեամբ արքային սաբինացւոց ամենեքեան , Տատիոսիւ նման զկնի մահուան նորա է պարտաւորութիւն իմս յոյժ առաւել խնդրել ։ Ո՛չ կամիմ՝ ծածկել 'ի քէն զի կոթոտանէի 'ի վերայ Հերսիլիայ . բայց յետ մահուանն սորայ՝ փառաւորութիւն ամենաջանն քեւ հանդերձ նախատանելի երեւի ինձ , քան զպաշտօն ընդ դասեր արիասանաց նմ ։ Եթէ շնորհ է քեզ այս իմն յօժարութեամբ , պատրաստ եմ առ ոտն հարկանել և սարսափա ասնել ընդ իս զպարսաւանս Հռոմուլոսի , հանդերձեալ տեսանել զերծ փայլակնացն մարմնոյ հօր քո լինել մեզ փոխանակ ընդ ջահի հարսանեաց ։

Առէ նումայ , և տայցես յանձնիւս կայծել սրտանայ ։ Ցուցեա՝ որ ՚ի վաղուց հետէ սածէր ՚ի սրտի խորում՝ զսէր իմն թաքուն և ապերջանիկ առ դիւցազն , պատասխանէ նմա հառաչունելով՝ թէ նա է սէր միծակլին իւրոյ ։ Նումայ խոստանայ նմա , և լնուլ առաւել աներկեան զնմանէ ՚ի պատմանալեաց անուանի հռոմուլոսի , որ զամենայն ճարս ՚ի գործ եդեալ էր վասն խոչընդոտան լինելոյ նմա , յայլ ինչ ոչ զբաղի նա առաւել քան ՚ի յուղարկաւորութեան մարմնոյ քաջին արքային ։

Այն ինչ առաւօտն ՚ի գիշերոյն մերկանայր , գօտի ընդ մէջ ածէ նումայ յուղի անկանիլ հանդերձ գնդաւ միով սաբինացւոց՝ գնալ ՚ի բարձրաբերձ լերինս հատանել զմայր ՚ի պէտս փայտակուտին • ամփոփեալ են ցաւք սրտի իւրոյ ՚ի բարեպաշտական հոգոց նմա , զոր ոչ առնէ ումեք յանձն ։ Բայց մինչ ուղւոյ լինէր , յանդիման լինի նմա Հերսիլեայ , և խնդրէ լռելեան խօսիլ ընդ նմա ։

Չէ ևս խորհեալ առանձինն այն , որոյ մեղմնչաւուն հայեցուածք խուժապեցուցանէին զյանդուգն որ համարձակէր պշնուլ ընդ գեղ նր • չէ ևս դիւցազնուհին այն , որոյ բազուկն անյաղթելի զխատապաստ յերկիր կործանեաց զայնքան թշնամիս , է նա խանդակաթ ոմն յուսաբեկութիւն մատնեալ , որոյ այտք լեալ են ակօսաբեկք յարտասուաց յորդելոց անտի • որոյ աչք նուաղեալք ՚ի լալոյ՝ փայլեն տակաւին ՚ի միգէ անտի թախծութե̄ , որ ծածկէ զնա • հերք նորա սփռեալք , հանդերձք անյերիւրք , և ներգործութիւն ցաւոց՝ որ աղօտացուցեալ է զհրապուրանաց նորուն զփայլիւն , տայ նմ̃ անկոյն տակաւին վայելչութիւն իմն առաւել ներգործակ ։

Նումայ՝ առէ ցդիւցազն , տեսանես յոր սահման-

հա

հատուցանէ զիս սէրն. Հեռախլեալ գամ խնդրել զքեզ յապաստանս քո. Հեռախլեալ ողբքաւոր՝ գամ թերեւս ընկալնուլ ՚ի քէն զսփոփութիւն ինչ։ Ո՛հ՝ եթէ գիտես դու զխորտակութիւն իմ, պարտ է քեզ խորհել զիարդ տենչալի ես դու ինձ, պարտ է քեզ գիտել.... Եւ դու կարի քաջ խելամուտ ես, ապաշնորհ. ոչ կամիմ այնքան խոնարհիլ ասել քեզ՝ գուցէ ՚ի զուր. կամ՝ է ինձ առանց ճապաղելոյ զինե, խօսիլ ընդ քեզ զքէն միայնոյ։

Գիտեմ՝ զքեզ՝ Նուամայ, վստահ եմ՝ զի խափանումն հօր իմոյ առնիցէ զքեզ փութացուցանել ըզհարսանիս քո ընդ դստերն տայխաւի. բայց դու ոչ ճանաչես զհոգի իմ, եթէ խորհիս զի թողու քեզ զայդ։ Մեր հաւաստի՝ զի ՚ի նմին իսկ ժամու, յորում իշխեսցես դու ստորանալ հրամանաց նորա, գլուխ քո ընդ մրճով սակրաւորայ անկցի։ Նման երկուանաց սպառնալիքս այս ոչ կասեցուցեն զքեզ, այլ ոչ սասանեսցես դու միայն. արիւն տայխոյ ընդ արեան քո պարտի ճապաղել։ Նա փոքկանիս դու՝ թէ սացեան այս, յիշատակն որոյ յարգի է քեզ, ոչ առ ոտս անկեալ խնդրէր ՚ի քէն զկեանսն իւրոյ զեղեանս առրէյութեան։ Յորժամ եւ քեզ խոստանամ այլ նորա լինել, սոսկմամբ վարկաւ զպաշտպան մի, հանդերձեալ անգութ եւ զերծ կացուցանել զնա յամենայն վտանգաց. բայց եթէ այս հրամանք առին ինձ մահու է վասն տայխոյ, եթէ կորանեան նորա լինի պատճառ հաճառուլնութիւն քո, զանցանես դու նախ զգխոմամբ հօր նորա, երկրորդ մօրին առ տայխոյ իսկ։

Ո՛չ խօսիմ ընդ քեզ զինէն. զինէն՝ ով սպեքախտ, որ սիրեցեր զոլ վարկանելի. զինէն՝ վա՜յ հեղեր մոռացիր զայրն քո։ Նախ երջանկութիւն թերութիւն, չէ իմ՝ պարապեալ ինչ մի նուամայի. բայց այնքան իրաւունս ռամա ումի՛ նա առ իմ երախտագիտութիւն, զի համարիմ՝ զյատուկ բարերարութեն և զշնորհս նր̅ իբրև զյաւերժական յուշս, որք զիս կապակցել պարտին ընդ նմա ։ Այո՛ նուամիյ, վ̅ն հերախիլայ միայն եղէր գիւցազն, նմա պարգևեցեր զայս վահանս երկնային, որ զնա արար անյաղթելի, զնոյնս տպրեցուցեր զարև՝ զքեզ նուիրելով նիզակաձգութեան լեօի, քեզ պարտիմ՝ զփառս իմ, քեզ պարտիմ զկեանս • և դու կամեցիր բարձի թողլ առնել զիս՝ զկնի հարկադրելոյ և պարտաւորելոյ զիս սիրել զքեզ ։ Ա ո̅ էր ուրեմն փրկէիր դու զկեանս իմ, ընդէ՞ր վ̅ն իմ միայն լինէիր դու առաւել մեծն և առաւել սիրելին գիւցազանց ։ Տուր ինձ պատասխանի, խօսեա՛ց, չեղէ՞ քեզ հաճոյ • ուսեա՛ ինչ թշնամանել զիս • իցէ՞ թէ ոչ ցուցի զբաւականն սէր առ քեզ ։ Ա՛հ ներեա՛ զառերս հառաչելոյս, այսմ՝ որոյ չէ խոստովանեցուցեալ երբէք զայս առ թագաւորս՝ որք պաշտեցինն զնա • ներեա՛ նմա վ̅ն կամելոյ նր̅ թաքուցանել զհօրն զառաջինս որովք փառաւորեալ խաբուկեցաւ ։ Արդ, կրեցի ես յոյժ առաւել քան զքեզ, հարկն՝ զոր առնէի և տագնապն տառապանաց՝ յոր ընդ սիրտ իմ արկանէի, բաւական յուսահատէր զիս զերայոնութ̅ ։ Ո՜ այս զառաջուն տեսանես լինի՞չ է յեղանակել • հայեա՛ց ընդ իս, անկեալ եմ՝ առաջի քո՝ աղաղակեմ՝ առ ոտս քո ։ "Նուամիյ՝ խոստովանեցայ զայս քո, ճանաչեա՛ զհերախիլայ • և իշխեա՛ սրտմտել զամեհութ̅ նր̅ ։

"Նուամիյ գրեթէ յոգնի ատամանամն եղեալ՝ երկնչէր ի պշնլոյ ընդ հերախիլայ, և ի մի միայն հնչմանէ ձայնին նր̅ զգայր կթոտիլ յոյժ և լքանիլ ։ Տեսանէր Նուամիյ առ ոտս իւր զայն՝ զոր սիրէին առաւել քան զկեանս իւր • ընդ նմին կրկնէ՝ բայց ի քէն յայլ ոք չեմ՝ ես խոստովանեալ ։ Մինչդեռ նա խօսէր՝ յառաջադրութիւնք գիւցազին տակաւ առ տակաւ ի բաց փառաւորէն, ըստ օրինակի ձեանց՝ որք ծածկեն զլեառնս մի, լուծանին և չքանան ըստ չափու արեգականն ներգործելոյ 'ի կատար նորա ։ Նուաբ՝ գլխաւորն Նուաբ սկսանէր ճաշակել զքաղցրութիւն անբախտան պայծառաբանութեանց Հելախկլայ · սիրտ իւր արդէն 'ի հրոյն սիրոյ տոչորեալ, աղիք իւր փլեալք, կարեվէր խոցեալ 'ի վերջին բանից Բամբշին, գրեթէ մերձ էր 'ի գլորումն, այն ինչ ծերունին մեծիտ զօրագլուխն ապրինացեալ գայ խափանել զայս փոխանպաւար թարթափումն ։

Որդի պանդխտի՝ ասէ ցնա ցաւագին և իշխանական իմն ձայնիւ · մեք առաջինքս 'ի սուտ դառնութեանս խնդրեսցուք զքեզ, այս ժողովուրդ՝ որ զհայր իւր կորոյս, կամի տեսանել զառաքինութեանցն նորին զժառանգ ։ Ո՛վ իշխան՝ եկ սփոփել զվշտացեալ սուգապրանութեն և ցաւոց նոյ, խոստանալով նոց սիրել զնոսա սիրելին տացես, երդնուլ նոյ թեւարկել և պաշտպանել զարժանի ռուսայն լաւագունին ազգայնոյ ։

Նոյնժամայն առ դուրս ապարանից լսին ձայնք հեծութեանց ողբոց նաև ժողովրդեան ։ 'Ի միջոյ ցաւագին կականմանց անտի նոցա լսի անունն Նուաբի ։ Ողբացէ՛ք առաքինիք զայս Նուաբ՝ աղաղակէին նոքա · երևեցի՛ դիւցազն մեր՝ բարեկամն մեր, մի միայն յաջորդ իշխանաց մերոց, մի միայն յոյս անապաստանն և ամայի ժողովրդեան մերոյ ։ Ո՛վ Նուաբ՝ եկ ծանո մեզ զվերջին կամս բարի արքային մերոյ · տեսցես դու ըզմեզ հետևել նմին ուղւով չափ ։

Ունէքս այսօրիկ՝ աղաղակէք՝ յանդիմանութիւն մեռելոյ որ լսէր աղէտալով՝ արիւնն ասացեալ որով տոչորեալ կայր դեռեւս պատմուճանն Նուաբի, այս նա՛ ողջախոհացուցանէն զդիւցազն 'ի պահուն՝ յորում այլ թաքէին ։ Հեռախկլայ՝ աղաղակէ Նուաբ, բարով մի սիրոյ.քո ճենճերիմ՝, բուրիցս առաւել ցանկալի ես դու ինձ քան զկեանս իմ՝, բայց ախորժագոյն է ինձ քան ըզքեզ պարտաւորութիւն իմ՝։ Դիք որք զաչս արկանեն զինեւ, ժողովուրդս այս որոց պիտոյ է ինձ լինել ուղեցոյց, միայն իմ՝ զոր պատրել ոչ մարթիմ՝, այս եմ՝ անձնայինս օրինակէ ինձ զերդմունս զոր երդուեայ կատարել։ Ա՛ կայ կարողացի պատուէրս մօր իմոյ. որքան դառն և ցաւագին իցէ զոհն՝ ճենճերելոցի։ Գիտեմ զի մեռայց, բայց....

Ո՛չ անագորոյն, ո՛չ, դու ոչ մեռցիս, ընդ միջեաց հերքելոյ ցաւանակք, առ այլ որք դարձուցից ըզսրտմտութիւն բարկութեան հօր իմոյ. ցուցից նմա զդապանդն զոր պարտի հարկանել. իսկ որքան առ քեզ՝ կեցցես դու, և կեցցես առ ՚ի լուծանել զընդերկար պատիժ քոյոց յանցանաց, առ ՚ի տալ ինձ ժամանակ և զառիթ հանելոյ ՚ի քէն զարդարին վրէժ քինու իմոյ։ Ա՛նօրէն, ո՛չ իշխես տալ զերդմունս զոր երդմնեցոյց քեզ ասացիս։ Ա՛ռ ո՛չ ինչ համարիս զոր միանգամ՝ արարեր ինձ։ Մի՛ թէ խնդրեցի ՚ի քէն՝ ուղղաշնորհ, զի ընդ կերպարանաւ առաքինութեան թագուցանիցես զխաւարամիտ նախանձ քո՝ լինել թշուառ սաբինոյցւոց, և յափշտակել զաթոռ հօր իմոյ։ Մոռացեալ ՚ի վիճակէն որ քեզ սահմանայ, դողա՛ ՚ի չարեացն զորս դու քեզ պատրաստես։ Մի՛ ակնունիցիս ձողոպրել յայսցանէ, մանաւանդ եթէ հեռանալոյն շուրջ պատեալ զքեզ զթշնամիս։ Մոլորեալ և դանդաչուն, հալածեալ և գաղթական, փարատեալ և տարաշխարհիկ, ամենայն ըզթշուառութիւն քոյ և զկեղծաւորութիւն առաքինութեան առ անձանձն ժողովուրդս խոտալից, որք յիւրեանց անտի մերժեսցեն զքեզ։ Մատնեալ յանձնարին և սակայլի տառապանս սաստկագոյն տարաձգութեան խաղճի վասն զինահանաց քոյ պատճառելոյ, վասն բաղձի

թո

թողլ առնելոյ զկաթոգինն քոյ , լայցես և ողբասցես յամ ժամ զքոյս անհաստատութիւն քոյ ։ Սրտակէզ և հեղձամղձուկ լինիցիս անձկով տարփման Հերսիլեայ ․ ձգեսցես առ նա զձեռս ողորմուոր ․ այլ Հերսիլեայ առաւել զչարեսցի հալածել զքեզ ։ Մինչև ցապառումն ընչոյ խոյ հուր ՚ի ձեռին զհետ քո մտից ․ և թէ լքումն քո զմահ ինձ հատուսցէ , սաստեր խմ՝ զնմայէ յարիլ յանհնի տագնապս տարակուսի , առ ՚ի սաստկացուցանել զդժնդակութիւն քոյ տանջանաց ։

Զայս ասելով թողու զՆումայ և ՚ի բաց մեկնի ։ Նումայ որ զամօթի հարեալ յոխորտ դերձուեցներ , ոչ իշխէ հայիլ ՚ի մեռելս , և փութայ մխիթարել զսաբինացիս ։ Բայց առկային խռովեալ ՚ի սպառնալեաց Հերսիլեայ և զանգիտելով ևս յոձոէ խնդրէ ՚ի դիմաց հանդիսաւորի , հրամայէ ծեր սպարապետին զգուշանալ պահապանօք ապարանացն տաճարին ։ Համանգամայն ՚ի չու անկանի հեռացեալ ՚ի խալէէ պնդելոյ , գնալ հասանել ՚ի լերանց զմայրս նոցա փութերեալս չքծուհեալս կիսեղցոյ , զհայեցեալս , յորոց կապեալք առ դրաս տաղորէին յարեան մահկանացուաց , և զբարձրաբերձ հագանիս , և զայլ հատանէս փայտս ։ Ամենեքեան ձայնս արձակեն ՚ի կրկնակի հարուածոց տապարին ։ Տիրասեռակ նոճիք թաւալգլոր հոսին ՚ի հովիտս , և ընդ այլ փայտոց գահավիժեն դղրդմամբ ։ Հատանին կանաչագեղ և սաղարթապաճոյճ սոճիք նոցա , և տառալից կոճեղք գլորին յափունս Տիբերոս գետոյն , ուր ոչ հեռի ՚ի քաղաքէն ամբարձեալ դիզանին փայտակոյտն որ այրելոց է զմարմինս տարերոյն ։

՚Ի փողէն ժամանէ՝ տեսանի մարմին այս փառքայական զգեցեալ զծիրանին , և բարձեալ ՚ի նախարարաց ատենացս ։ Պատանիկք հազար նորահասակք գնան առաջի ․ խաղան հակադարձեալ զինուք խոնարհեալ գլխովք․ ընթանան յամր ընթացիւք ՚ի տխրական ձայն սրագոչ փողոյն ։ Նարդահատանելն տայիս զգածեալ սգաւորական քօղով, պսակեալ թաւոստովք տրտմական ՚նոճւոյ՝ արկանէ ՚ի վր դագաղին զծաղիկս ոռոգեալս արտասուօք իւրովք ։ Նման ՚նմա ՚ի սուգ. մտեալ ՚նումայն՝ Թեկն ածէ դանդաչուն ընթացից նր, մխիթարէ զնա լալով ընդ նմին, և հոգտանի յուսարեկութե նր ։ Ի ձայնէ աղաղակի ողբոց և կականմանց ամ սաբինեան ժողովրդեան որք խռնին զնովօք՝ որոտ ընդ որոտ հնչէ բայասխայլն ։

Լայր քան զամենեսեան մետիոս՝ ծերունին մետիոս անդադարն ՚ի վախճանն ամաց հեռէ բարեկամն և մտերիմն ալքայլին իւրոյ, բաղխէ զկուրծս իւր մետիոս, ցեմէ զալիս իւր, և անկանելով յերկիր՝ ո՛վ տր իմ գոչէ, ո՛վ ամենագոհայրդ ՚ի սպասակաւորս՝ անողորմ մահն ոչ խնայեաց ՚ի յիս ուրեմն, եթէ ոչ առ ՚ի տեսանել զքեզ ՚ի գերեզման իջանել, առ ՚ի կորուսանել միանգամայն զբարեկամ՝ զհայր՝ և զթագաւոր իմ ։ Ո՛վ տատիս տատիս, դու էիր այն՝ զոր յերկնատուրդութեան իմում այնքանիցս տեսի դիմադրաւ լինել մահու․ դու՝ զոր տեսի շուրջ պատեալ ՚ի թշնամեաց՝ փառաց պատահել միշտ, և ոչ երբէք մահու․ արդ ՚ի մէջ ժողովրդեան քո, ՚ի մէջ որդւոց քոց ՚ի հայրասպանից սրախողխող եղեալ տեսանեմ զքեզ ։ Սիրտ քո այն բացեալ անդադար թշուառացելոց ապաւէն՝ խոցեա՞լ եղև յապերախտից, և դիք ո՞չ հասին քեզ ՚ի թիկունս ․ Թողի՞ն դիք չարաստանջ խողխողել այսմ, որ էր ՚ի վր երկրի պատկեր բարերարութե իւրեանց ։ Ո՛վ տատիս տատիս՝ տակաւին ՚նոճայ ողբամ ես քան զամենեսեան որք լան ՚ի վր քո այսօր, ակնունիմ ոչ յետ բազմաց գալ և ես զկնի քո ։

Այսպիսիք էին ողբերգութիւնք մետիոսի․ ամ

Ի ժո

ժողովուրդն որ կայր 'ի լսել նմա , յողբս և 'ի հեծեծանս ձայնակցէր նմա :

'Ի վերջոյ դնեն զմարմինն 'ի մ̄ջ փայտակուտին. հանեն զպղոհս : Նուման հեղու 'ի վերայ երկրի զերկուս անօթս լի գինւով՝ զերկուս կաթամբ՝ և զերկուս արեամբ. Ընծայմունք ընդունելիք աստուծոյ : Զկնի կարդայ մեծապէս բարբառով զհոգին տատիոսի , և դարձուցեալ զերեսս յածուցանէ զլուցկին հուր արկանել 'ի փայտակոյտն : Բորբոքի հուրն առժամայն , ծառանացեալ 'ի մէջ հատուածս փայտից : Ժողովուրդն սաստկացուցանէ զաղաղակ իւր , զօրականք 'ի վեր ամբառնան զվահանս իւրեանց . բայց Նումայ հրամայէ ն̄ց լռել . և ակնարկելով բարեպաշտական յարգութեամբ յետին ողջունեալ զդէմն տատիոսի՝ որ չէր տակաւին հարեալ 'ի բոցոյն :

Ո՛վ արքայատոհմդ Թագաւորաց՝ աղաղակէ , 'ի վերջին փայլակնի աւուրց քոց խոստացայ քեզ լինել այր դստեր քո . Երդուայ քեզ կեալ առ 'ի սիրել զնա՝ պաշտպանել զնա . արդ կատարեմ զերդումն իմ : Այս փայտակոյտ սեղանն մեր եղիցի , 'ի մ̄ջ այսր սեղանոյ մեծոյ՝ առաջի աստուծոյ քոյ՝ առաջի ժողովրդեանս այսորիկ որ ողբայ զքեզ , 'ի լոյս աւոյ ջահիցս այսոցիկ , առաջի աչաց դից ահաւորաց առ երդմնադրութեան՝ առնում կին իմ զտատիայս : Այո՛ սիրելեայք , պատուհասեսցեն զիս դիք վրէժխնդիրք՝ դուք ինքեանքդ՝ ամենայն բարեկամք տաթիոսի , եթէ յընթացս հոլովման աւուրց կենաց իմոց ոչ փոյթ 'ի մէջ առեալ պարապեսցիցի երջանկացուցանել զամուսինն գերադաժան զոր ետ ինձ տաթիոս : Ընկեսցի 'ի վերայ գլխոյ իմ՝ արիւն պատուհասականութեանն թշուառոյ , եթէ ոչ ջանասցիմ եղէց հատուցանել [illegible] դստերն իւրոյ փոխանակ մեծամեծ՝ երախտեացն զոր պարտիմ հօր նորա :

Յանկըն զայս՝ յորէ զձեռն իւր 'ի ձեռն տացիայ և կամի ձգել զերկաթեան առ փայտակոյտն ։ Բայց տացիա զինքն ամփոփել ոչ կարէ, դանդաչէ, անդամք նորա Թմբրին, ցուրտ իբր քրտունք հոսին 'ի դիմաց նորա, լեզու նորա Թանձրացեալ բան մի ևեթ արտաբերել ոչ մարթի, շրթունք նորա կապուտակեալ անճարին խիթից դառնութեան են նշանակք. տացիա անկանի յերկիր, Թարթափի, Թաւալգլոր լինի 'ի զուր ուժելով. և ոչինչ օգտելով նպաստից և օժանդակութեց նուանյի և սաքինայեաց զարհուրագին դառնալով ամենեցունց ։

Իւ այր սոսկալի ունոյ յուզի ժողովուրդն ամն Հատուածի են նշանք մահադեղին, որպէս շշուկն հրատարակի, քրթմնջիւն շփոթել իմ՝ հանգոյն ալեատար հողմոյ յորժամ սկսանի ամբոխել զծովս ։ Օ՛ խնամողք՝ քաղաքացիք առ իրեարս ակնարկեն, ցասումն երևի 'ի դէմս նց. սրտմտութիւնն բորբոքէ զսիրտս նոցա. անուանք հռամնուլոյ և հերսիլեայ անիծիւք և նզովիւք միշտակէին ։ Համանգամայն առ հասարակ ամ՝ սաքինայեաց խառնեալ պռուամնյին ձայն բարձել աղաղակեն՝ ա՛ռ զվրէժ մեր, հա՛ն զվրէժ քինուն տացիայի և դստեր նր. մեռան նոքա 'ի հարուածոց անոսի հռամնուլոյ. ա՛ծ զմեզ ընդ դէմ՝ անաստուածոյն Թգւորին այսմիկ՝ բնութիւնն և կրօնն հրամայեն քեզ ։ 'Ի նմին իսկ ժամու խաղացուք 'ի վր հաւկինց, քանդեսցուք աւերեսցուք տապալեսցուք զայս քաղաք անօրէն մինչ ապանակ ճատարքեր սաքինայեաց ։

‘Նուսայ՝ առաքինին նուանց պարապեալ՝ պնդեալ 'ի յուսակտուր ժողովրդենէ առնի, գրգռեալ 'ի տեսլենէ սարսափելի մահուն տացիայ, զչարեալ արդար իմն զարհուրանօք, զոր եղեռնութիւնն պատճառէ մաքուր հոգւոյ միում, նուանց զծառայութեամբ հարեալ թէ դիւն է միայն պատուհասել զթագաւորս, և յառաջին ոմն ներքնաշարժ յուզման կրից բարկութեան խաղաղ 'ի վերայ հռոմէից առաջնորդեալ ամեհի սաբինացւոց:

Բայց կորովամտութիւն Հռոմուլոս նախատեսեալ էր զայս մրրիկ ամբոխման: Ո՛ գայրացեալ՝ կը ընդդէմ արգելման իւրոյ կատարելոյ էր նուաճ զերդմտունս իւր, թելադրեալ յանգթականէն հերոսիզմոյ, կամելով առնուլ զվրէժ դատելոյն իւրոյ միանգամայն և իշխանութեան իւրոյ արհամարհելոյ, արքայն հռովմայ տուեալ էր խառնել զանհագեղ ինչ յոյժ հատու 'ի սակաւ կերակուրն զոր էր առեալ դուստրն Տատիոսի: Որպէս ոճիրք զոճիրս ծնանին, այսպէս մինչ եղեռնունն ինչ առաջին ածէ առ այլ եղեռնունն մեծագոյն:

Հռոմուլոս որ զանգիտէր 'ի խռովութենէ խմբէն, ոչ կամեցաւ պատմել 'ի հանդիսի անդ յուղարկաւորութեան, առ 'ի ապահովացուցանել զհռովմ: Դրունք քաղաքին փակեալ են արդէն, պահապանք զգուշացեալք զօրականօք: Սպառնամբ Հռոմուլոսի սաստել ամբագոյն ամբոխեան եւս ճարէ առ 'ի կասեցուցանել զխռորանջութիւնս, հրամայէ ունել 'ի բնակութեան անդ իւրեանց զկանայս զմանկունս զծերս սաբինացիս, որք չէին կարացեալ գնալ 'ի յուղարկաւորութիւն մարմնոյ արքային իւրեանց, դնէ զնոսա 'ի վերայ պարսպաց, և ծածկէ ներքոյ զզօրականս իւր:

Գան հասանեն սաբինացիք առաջնորդեալ 'ի ցասմանէ՝ վրէժխնդրութիւն գոչելով և ցնցելով ըզնիզակս իւրեանց: Բայց կասեն կասեցեալք առ զարհուրանաց ընդ նշմարելն զծերսն զայնոսիկ զմարս ըզտղայս, զորս հարկանել ունէին անմիջապէս՝ յառաջ քան զյարձակիլ դիմելն 'ի վերայ զինուորաց արքային հռովմայ: Ինչոյն հետևի խորին լռութիւն ձայնի

աղա

աղաղակաց նոցա, ակնարկեն առ միմեանս, նման արձանացեալք՝ բերանաբացեալք և բազկատարածք, անկանին յերկիր զէնք 'ի ձեռաց նոցա :

Այս միայն վայրկեան զգաստացուցանէ զՆումայ : Տեսանէ զձախողումն չարեաց զոր պատճառէ իւրն յանձնապաստանութիւն, զայրանայ վասն վտանգին յոր եթող արշաւել զայս բարեմիտ ժողովուրդ, և 'ի տագնապ փութոյ յամենայն դասս արշաւելով· սի՜րելիք՝ աղաղակէ առ նոսա՝ առաւել քան զվրէժխնդրութիւն խաժառ եղկելի սրտից ձերոց : Ապրեցուցէք զհարս և զտղայս ձեր, այս պարտաւորութիւն է ևս առնելի, քան զառնուլ զվրէժ արքային ձերոյ : Ընդէ՞ր զինելոց էք հայրասպան վասն սիրոյն որ առ Տատիոս · վասն է՞ր Ծերքս այսորիկ և մատաղ մանկունքս եղկելին զոհք, զորս առաքեսջիք 'ի դժոխս : Ո՜հ դուք որ ծանուցեալ էք զնա, խորհեցարուք եթէ առաջէր նորա ընկալցի [illegible] վասն մխիթարութեան : Սաբինայք սաբինայք՝ յամենայն ուրեք փառքն եղիցի 'ի յաղթութեան, այլ առ 'ի յաղթելն : Մետիոս՝ առ զոստ մի ձիթենւոյ և երթ 'ի գլուխ արքային հռովմայ, ասա նմա՝ թէ եկեալ ես դու 'ի դիմաց սաբինացւոց խօսել զհաշտութենէ նոցա, ասա նմա զի պատրաստ են տալ զպատանդս, ճանաչել զինքն միայն [illegible] վեհագոյն՝ միայն թէ երդնուցու ներել նոցա : Եթէ պահանջէ զոհ մի՝ է 'ի պատրաստի, որ ես եղէց : Այս միայն զանձնիմ պարգեւոր ծերոտեաց սաննեցուն կացուցանեմ, զիս միայն բարեպաշտեմ՝ 'ի յետկարէ թողութեան : Արդ փութա, մի՛ կորուսաներ ըստ վայրկեան մի · [illegible] զհաշտութիւն · խոստացիր զգլուխ իմ եթէ հարկ է նմա · քաղցր է ինձ մեռանել վասն փրկութեան ժողովրդեան իւրոյ :

Զայս օրինակ խօսի Նուման : Մետիոս կամի պատասխանել նմա, բայց դժկամակէ դիւցազն ընդ նմա ·

մինչ

մէջ զնա դեռ 'ի պալատականն հանդիսից: Գնոյ մեծափառ՝ սայ բանալ նկըեանն զդրունս: Առօրէն դառնայ ընդկրունկն աւետել զհաշտութիւնն եւ զխաղաղութիւն, միայն զի Նումայ առժամայն եղեւ 'ի սահմանացն հռոմէացւոց:

Առ այս պատրաստեալ աղաղակ բարձեալ սաբինացւոյ՝ վերստին անդրէն կամին զէն առնուլ զանձամբ: Այլ հրահանգէ զնոսա Նումայ, ողոքէ զնոսա, հրամայէ նոցա հնազանդել. ցուցանէ նոցա զանհնարին չարիս, որոց ինքն միայն առիթ է լինելոյ. սպառնայ նոցա 'ի մահ մատնել զանձն իւր առաջի աչաց նոցա, եթէ ոչ ընդունիցին զայս պայմանս հաշտութեան. եւ մեկուսանալով համանգամայն ընդ Մետիոսի՝ որում գիրկս արկանէ. գերապանծն սիրելի իմ՝ ասէ ցնա, ընթե՛ռ զպալատօր աչաց քոց, այս ստորագրութիւն որ փրկէ զազգն իմ, պատճառագոյն է անդորրութեան իմոյ: Մարթ էր ինձ միւսանգամ զՀռոմուլոս սպանանել. Պարտ էր ինձ հանդուրժել զժխտեաց երեսաց այնր ապառում՝ Հերսիլիոյ, չամբշութիւն որոյ առանց երկնչանաց կցորդ է յետին եղեռնութեանս վասն որոյ 'ի սրտմտութիւն բարկութեան վառեալ է մեր: Ո՜հ Մետիոս, ապաքինեալ է սիրտ իմ յանհնարին ախտէ իմմէ, որ թունաւորէր զկեանս իմ՝, բայց զինքեան ժամանակս տակաւին վէրք իմ բղխելոց են զարիւն: Սիրելի՛ մեծագոյն թշնամւոյ, առաւել զգայլն 'ի չարիս՝ է հարկիլ զգենուլ զամօթվն կերպ որք եղեն մեզ առաւել ախորժելիք: Ներեա՛ արտասուացս զորս հեղում՝, եւ սոքա յետինք զորս ընծայեմ սիրոյ, զայլս իմ՝ ապաշաւանաց ողբերգեցից: Յանձն առնեմ քեզ՝ Մետիոս իմ ազնիւ, ամփոփել զաճիւնս արքային մերոյ՝ եւ նորին ապերջանիկ դստեր, պարտ է նոցա հանգչել 'ի միասին 'ի վերայ դամբարանի մօր իւրոյ առընթեր շիրմին Տուղղոսի: Խոստացի՛ր ինձ դու ինքնդ անձամբ առնել զայս, եւ մի՛ յայլ

ոք

որք առնել տարապատում փոյթ հոգ, մի՛ որոց նոցունց նախանձի ընդ քեզ: Այ՛ց բարեաւ գերապանծ սիրելի իմ, դի՛ք երկայնամտութեան զքոյդ ծերութի: Յիշեա՛ զի դու միայն մնաս մեզ ապաւինացոյս, չէ՛ք ես քաջ ալքայն նոց, մահուանն առհամանեցուն տայցես, նոցունց երկթայ վարել զաւուրս տարաշխարհիկ 'ի նոցունց, մետիստ պարտի սփոփել զնս 'ի տղայ կորստեանն իւրեանց: Յանձնեմ քեզ զնս՝ գերապատւոյ սիրելի իմ, յուսամ փոխարինել քեզ յաւուր միում ընդ բարեաց զոր արարեալ իցէ քո նոցա:

Ընդվայր կամէր Մենտոր հեռանալ նմա եւ յարել 'ի վիճակ նր: Այնժամ տայր ժողովրդեանն այնմիկ մնացելոյ հանապազ: Յասեն զգանս գայլոյն 'ի սադնալ փութով զերբեւեալ վտարանի անաւի, եւ կալաւ զճանապարհ երկրին մերոյ:

«Նոյն ձանձրապատճառ էր՝ ընդ որ սակաւ տանել յառաջ անցեալն էր. մեծագոյնքն նուաստաց զկայլակցանայն զկապանօս մնայոյ զանձանց արկեալ յառաջոյ սփոփանացւոյ՝ արբեալ սիրով՝ կշկաթելով ընկնել զիւ ցասումն ամն, եւ հաւատայր եղով թէ փառքն առաջնորդէր նմա յերջանկութի: Աղօթեալ էր զկառս զոյս . անցանել դարձեալ ընդ այն տեղիս՝ անոք՝ սարսափելի՝ պատառեալ 'ի ցաւոյ, փախստեայ յերեսաց այլեւայլն որում ծառայեաց, ընթանալ յանօթոյ մն այնորիկ՝ 'ի ձեր որոյ այնքան զսկսասեցաւ, եւ տեսանել 'ի հայրենի գնալ 'ի ժողովրդեանն յաղթահարելոյ յիւրեան՝ խնդրել զպատուէն:

Գնայ՝ երանէ համանմանութեան բառս առհեմնման հար մուրաբի . եւ թուէր նմա ամենայնին խնդի ծանրաբեռնութէ գոլ թեթեւացեալ: Հասանել 'ի խաւաւարենս մեծանեղիս, մինչ 'ի ծործոր մի՝ ընդ որ գնայր առաւաւակաղաքս հեզեղաւ մի ահագնակի՝ յայսկոյս յայնկոյս ուռենեօք եւ բարտեօք զարդարեալ: Հեռանէր նոցա ընթացից փը-

սաւ

սակին, խուցոյն յանձուկ բլրոյ միոջ նշմարէ զայր մի խոր-խորշին:

Զգեստ ՚ի խոտախոջմանէ համադարահաս ծառոյն վըտաշին, մտանէ Նումայ ՚ի յայրն: Յէր զարմանս գրաւի ՚ի գառամեալն անդրէն զինուորական մարտիկ ամս զառիւծենի զանձամբ արկեալ, և ՚ի նմին խոնարհեալ ՚ի վերայ մահակի իւրոյ: Հայի ընդ նա Նումայ և ճանաչէ. քանզի ծերն է այն՝ զոր գնայր նա խնդրել յաշխարհին մարդոյ, այն է որոյ քաջութեան էառ զչափ, զորոյ զբարեկամութեանն առնել ունի զճաշակ:

Զարթուցեալ Լէօի տեսանէ զՆումայ, և ՚ի սաստնապ վարութոյ անկանի ՚ի գիրկս նորա: Երկոքեան դիւցազունքն գիրկ ընդ գիրկ խառնեալք խանդաղատանօք: Ո՜վ որդեակ իմ՝ ասէ ծերունին, գնայի ես ՚ի խնդիր քո: ՚Ի հռոմէ գայիր դու՝ հարցանէ ցնա Նումայ: Այո՝ պատասխանէ նմա ծերն համարձակ և զուարթացեալ. փորեցայ՝ ասէ, չիք ես լինէ առաջուէն, գնայի խնդրել զայն՝ յաղթահարողէն զիս:

Ո՜վ աղեկոյս՝ մի՛ ևս խօսեսցուք զյաղթութէ, յորում եղբայր Նումայ, խօսեսցուք զիրերաց զմիմեանս: Ծանի թէ կամի բաղդն անլուծանելի պահել զհանգոյց մերոյս բարեկամութեան, վիճակեցուցանելով զմեզ մի և նոյն փորձ: Տարաահման եղէ և ես ըստ քեզ, գնայի նմանապէս զազատութիւն խնդրել ՚ի քէն: Քաջ յիշես զորինչ մինչ օրինակ յարոյն վը բարերարինն հաւատոյ. ես միայն ապրեցուցի ըզքո անձն. ընդ փոխարինի ծառայութեանց իմոց ես սպանանել սրով զարեանն թագաւորին իմ, զիւրաքանչիւրն տեղակալ սպայ, և եթէ համարձակէի ՚ի հռոմայ մտանել՝ հայի կեր ողողել զայն արեամբ, կամ զգլուխ իմ դահճաց նուիրել: Նասին՝ սիրելի, արդարութիւն գառածամանի թագաւորաց, ահա զմորդգիտեն նոքա առ զկշռն մասնակոյ:

«Որդեակ՝ պատասխանէ ըեօ, ծառայելի ես հաստատակայութեան, առեալ դու զիս մինչ զմարտ պատերազմի մասն նորա, թէպէտ չէ.քո մտացեալ ըզհրճուանս բանականին հաւանեցելոյ, և զառաւելն քաղցրին աւետարանին. զայլ խեն ոչ յիշեցին մարք, բայց եթէ զօրն արտաքսնեան լերանց: Երբե կնքեցաւ հաշտութեանն պայմանն, և դարձաւ զօրն ՚ի ընակութիւն մեր, յխորան ծերակոյտ՝ որ զիշխանութիւն զօրուն ինձ էր աւանդեալ, ես զիս յանդիման կացուցանել առենին պահանջել յինէն զհամար իրակութեանց իմոց: Համին յիշխանութէ կորանօք զծերն ստիանոր. տարամերժեցին զիս յերկրէ իւրեանց, մի պատրելոյ իմ ՚ի հարից հօմանըրամ, մի արկանելոյ իմ զզօրն յորդայթ, զոր լարեալ էր.քո ինձ: Արեղի՝ ահա դատաստան հաստատակայեւութեանց, կամ յանէրս այս է դատաստան մարդկան, ամենն երախտակորոյս են և ապաշնորհ. անարժան են սիրելոյ ամենն: Սակայն չէ նուազ կարելի ծառայել նոյս առ ՚ի հաճոյանալ դիից և բաւական առնել զախտ մեր:

Արտաքեցուք մեք զայս պաշտօն՝ ասէ ցնա նումայ. հեղցուք մեք զարիւն մեր վս՟ հայրենեաց: Անդժեն զմեզ հայրենիք յերեսաց իւրեանց, դարձուցանեն մեզ յետս զխրատուսն կելոյ վս՟ մեր: Ո՛վ ըեօ՝ եկ ընդ իս յանապատն մի ապենսինոյ. վարեսցուք զայն ձեռօք մերովք. մշակեսցուք զերկիր և առաւել չնորհաւատոյց քան զմարդիկ. կեցցուք հեռի ՚ի նոցանէ, և բարեկամութիւնն շնորհեսցէ զմի միայն հրճուանս ոգւոյ մեծի արժանիս:

Զայս խմն գոգցես երկնային՝ յասեն զքանս զայսոսիկ, բոցափայլէր յաչս նորա: Եօ զպարանոցանն անկանի՝ զցնծուն հեղով զարտասուս: Ո՛յր՝ ասէ ցնա, եկից զինի քո, ոչ ևս թողլոյ զքեզ․ քեզ նուիրեմ զսիրտ իմ և զկեանս։ Այսր ընդ երկար ելից անձն դառնութեամբ զաւուրս իմ; ժամ է արդ վարել զժամանակս վասն բարեկամութեան։

Ո՜վ աղէտից՝ աղաղակէ նուագս, դու խօսիս ընդ սիրոյ, փորձ ես դու ուրեմն տանջանաց նր, չի՞ք ոք մահկանացու, զորոյ չիցէ խռովեալ զաւուրս այս չափ ահաւոր։ Յոր զանգս չարեաց զորս պատճառեաց ինձ նա, և հաճեաց աւանդել ինձ 'ի կողմանէ քումմէ զաղէտս սիրելւոյ միոջ, առանց որոյ հաստատեալ եմ՝ զի ոչ ևս կարայցից կեալ։

Առաքինին լէօ ունիս դու յայնժամ մտադիր, և նուագս վկայէ նմա զպատմութիւն իւր անդստին 'ի ծննդենէ իւրմէ մինչև ցայս օր։

Այս ճառ պատմաբանեալ մաքրամտութեամբ և համեստութեամբ զմայլեցուցանէ զխանդակաթն լէօ, և յարէ զնա ևս քան զևս 'ի գերարժան սիրելին, զոր ընտրեաց սիրտ իւր։ Ողբայ զմահն տաղերգուի և քաջի արքային տաբինացւոյ, և նզովէ զչար պարսաւադիր լինի յամեհին Հռոմուլոս, երանէ զնուագս վն բաւելոյ յաղթահարել և սանձել զվէրն իւր որ առ չարեաց-պարան հերախլեայ։

Սիրելի՛ ասէ ցնա, կսկծագին լեալ է զոհն, հարկն ստիպեալ է ընտրել ընդ մէջ սիրոյն և առաքինութեան․ և նախապատիւ մեծարեալ է քո զառաքինութիւնն, ահաւասիկ դու վտարեալ 'ի Հռովմայ, թափառական, փախստեայ, անապաւէն, կրելով տակաւին զսլաքն որ թափանցեաց զսիրտ քո։ Բայց համարձակիմ հարցանել ցքեզ ինքնդ, թէ զմոռացութեամբ հարկանելով զերդումն քո, եթէ կոխան առնելով զաճիւնս տարփոսի լեալ էիր այր հերախլեայ, զի՞նչ թուէր քեզ՝ վայելէիր դու արդեօք զերջանկութին․ քա՛ն՝ խիթք խղճի անճարինք բնակէին յոգի քո, և փեսայն Հռոմուլոսի, ժառանգորդն զօրութ՟են ն՟ր, ստացօղն չքնաղագեղ բամբշի միոջ, եւս ողբալի եւս տառապեալ լինէր, քան առաքինազարդն Նումայ տարագրել։ Նումայ Նումայ՝ ես ինքնս զչափ առեալ եմ, քանզի բարձրեալն՝ որ ստեղծ զերկոսին զմեզ առ՚ի սիրել, թուի եղեալ գոլ յաղէտս մեր զհանգիստութ՟ին որ է ՚ի հոգիս մեր։ Ո՜ ոչհեցի ես զն՟մ՝ իմոյս պարտաւորութեան. առանց երկուճանաց կորուսի զմեծամեծ բարիս, բայց այս եմ բարիք ՚ի մի հաւաքեալք ոչ արժեն զխաղաղութիւնն՝ զյեցամնութիւնն՝ զոր անդադար կրեմ ընդ իս։ Մաքուր է սիրտ իմ իբրև զայս ականակիտ վտակ, աւասիկ եղանակն առաջին լինելոյ երջանիկ. երկրորդն է ունիլ զբարեկամ ոք, յօրէ սատորի յայսմանէ գտի զայն։ Լուր զպատմութ՟ի անցից իմոց. բաւեսցեն այնք ներգործել ՚ի քեզ զխանդաղատական ցաւակցութ՟ին որով ես ցաւակցեցայ ՚ի լսելն քեզ։

Առ այս բան՝ գիրկս արկանէ Նումայ վերստին բարեկամին իւրոյ. և դիւցազն Մարս հաւէ զպատմութիւն իւր՝ օրինակ զայս։

ՎԱԽՃԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

ՆՈՒՄԱՅ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Լէօ պատմէ Նումայի զպատմութիւն առաջին կենաց իւրոց . [illegible] իւր առ մայր իւր [illegible] . [illegible] իւր ընդ [illegible] . [illegible] իւրոց , և զոր [illegible] 'ի մահիճս մահու : Նումայ [illegible] ընդ Լէօի 'ի [illegible] նորա : [illegible] 'ի [illegible] : Նումայ [illegible] ծերունւոյ [illegible] և [illegible] : Տեսանէ զնա [illegible] :

ԾՆԱՅ ԵՍ ՅԵՐԿՐԻՆ ՄԵՐՁԱԿԱՅ Ի լերինս ապեննինեայ : Մայրն իմ՝ մերատալ անուժացեալ սնանկ և ախտաժէտ՝ ունէր ընդամ՝ հօտ մի փոքրիկ , գիւղ մի և զպարտէզ մի : Զկնի սակաւուց ամաց ծննդեան իմոյ կորուսեալ էր զհայրն իմ, սիրէր զիս որքան հնար է մօր միում՝ սիրել զմիամօր իւր :

Մինչդեռ 'ի մատաղ հասակի իմում՝ զգայլենի մի զանձամբ արկեալ՝ զոր մայրն իմ՝ մերատալ ըստ չափու իմ էր յօրինեալ , զինեալ փոքու աղեղամբ՝ զոր վարժեալ էի ձգել , գնայի պահպանել զհօտ մօր իմոյ , մինչ հետևեալ յերկուց ահարկու շանց պատրաստելոց 'ի պաշտպանութիւն խաշանց և հովուին : Ոչ զանգիտէի բնաւ 'ի գայլոց . նա զի ըղձանայի 'ի գործ դնել ընդդէմ նոցա զնոյն նորաբողբոջ արիութիւն : Նստէի 'ի վեր ընդ քարաժայռս և ընդ ապառաժուտս կարի դըժնեայս , 'ի լող անցանէի ընդ գետս առաւել սրընթացս առ 'ի փոյթ յանկարծուստ ըմբռնել զուլս այծեմանց , և 'ի բարձանց մայրից զձագս վայրի աղաւնեաց Կրթունայ նոյ իւրեանց։ Այս ամ մի մօր իմոյ առնէի, այս նորատակ դիւրացուցանէր ինձ զամ՝ դժուարութի, և յորժամ՝ զննու անձի թէ այս կերակուր փափուկ կարէր երկայնել զաւուրս իմ, կամ՝ հաստատել յառողջութե, առաւել երջանիկ զիս վարկանէի յաղքատանայն իմ՝ զաղանձիս, քան զԹագաւոր որ ՚ի տիրելն գաւառոյ։

Յերեկոյին անձի զխաշին ՚ի խուցն մեր, բերկրապատար սրտիւ ցուցանէի ՚ի հեռաւոր զաղաւնիս՝ կամ՝ զոլթն երամս, զոր բերէի ինձ ՚ի յաղթանակ։ Այլ իմ՝ գործակիցք յանախանձու առնէր ինձ, սպառնայր փարելով զինև՝ չթողուլ ևս զիս երթալ արտաքս ՚ի տանէ, ոչ հաճէր մերթ ընդ ընծայս իմ՝, կամ՝ ոչ ընդունէր մինչև խոստացեալ էր իմ՝ նմա հայրենեաց չարկանել զիս մասնակցամ ՚ի վիճակ։

Սիրելի որդեակ իմ՝ սէր ցիս, աւա՜ղ զի ոչ զօրեմ՝ գալ ընդ քեզ ՚ի լեառն, յորմէ վիճակեալ երկնչէի կորուստ քեզ լինէի։ Բայց անզօր՝ ծնդեալ՝ կարկամեալ ՚ի ցաւոյ ՚ի խաղս յայսմիկ, որ յայս իմ՝ ընդարձակն իբրև ապականիս դու առողի. սիրտ իմ՝ և միտք սրտանս զինի քո։ Մանկաբերեան մեք իցեն արդեօք զարհուրանք իմ՝, մերթ մնայ աչօք ՚ի կախ տեսանել զքեզ ՚ի սպառնածոյ շեղածայր մայրի մեռջ, մինչև ծառն ողջոյն կարի անզօր թուէր ինձ, առ ՚ի կարօղ լինել ՚ի վէր ունել զքեզ. մերթ տեսանել զքեզ հանել ընդ հեղեղատ մի, զորմ քո գթել ՚ի վէր բարձուն վլխի, ձգես դու զբազուկս քո՝ և յորձանք փրփրահանք ընկլուզանեն զքեզ։ Ո՛վ որդեակ իմ՝ սիրելի, շատասցի արհամարհել զհօտս մեր. կաթն խաշանց մերոց՝ բանջարք պարտիզին մերոյ հերիք է մնացեան մերոյ։ Մի կորզել յեղանց և ՚ի տառապանաց զանեն չալի ձայնս իւրեանց, մի՛ դուցէ կինք և որջք յափշտակեսցեն յինէն և ոչ զորդին իմ։ Ո՜հ խոստացի՛ր ինձ զմանկոյ չմնանել երբէք ՚ի յայլս,

ուր

ւոր ամենհի գաղափարս սրբուհիք պահեն զկուսութիւնս իրեանց ։ Երդուիր ինձ լեօ իմ աղջիկ, զի թէ ոչ վա՛յ քո գոնէ վա՛յ իմ հոգւոյ ։ Յիշեա՛ զի ոչ կեամ ես, եթէ ոչ որդւով իմով. զմտաւ ած՝ զի յաւուր յորում ժամ մի յամեցուցես զսովորական պահն դարձին քո, գտցես զմայր քո 'ի սաստկապէս սոսկալուսի և 'ի ցաւոց յոգւոց պարզել տապաստան եղեալ ։

Օ՜ այս օրինակ խօսէր ընդ իս մայրն իմ միրտաւ ։ Աներկեան առնէի զնա ողջագուրելով. խոստանայի նմա խորշել 'ի վտանգաց յորոց զանգիտէր . յայնժամ փարէր զինև, հարցանէր ցիս զոր ինչ միանգամ արարեալ էր իմ յաւուրս, պատմէր ինձ 'ի կողմանէ իւրմէ՝ 'ի պատրաստելն զընթրիս մեր, զպատահմունս առանձնութեան իւրոյ ։ Անցանէր երեկոյն համանգամայն յայսմ զուարճալի և քաղցր խօսակցութե ։ Գաղտագողի մայրն իմ՝ նախ քան զննջելն պատրաստէր ինձ զպաշտօն յաղագս վաղուեան աւուր . պատուիրէր ինձ վերստին զգոյշ կալ, գիրկս արկանէր ինձ բիւրիցս, փայփայէր զերկու հաւատարիմ շունս իմ, իբրու թէ յանձն առնէր նոցա հսկել 'ի վերայ որդւոյ իւրոյ և պաշտպանել զնա ։

Գործնական կեանքն զոր վարէի, վաղ աճեցոյց յիս զկարիս իմ. 'ի տիս մանկութեան իմոյ զարգացեալ էի արդէն և քաջակորով ։ 'Ի հնգետասան ամն իմ ոչ ևս զանգիտէի ոչ 'ի վայրագաց և ոչ յարջոց . նիզակ իմ թաթաւեալ էր յարիւն նոցա, և ծածկեալ էի զայս 'ի միրտուէ մօրէ իմոյ ։ Շունք իմ՝ որոց պաշտպանեալ էր զմանկութի՛ իմ, ծերացեալ էին և անզօր, վա՛յ ինձ անկանէր պահել զնոսա ։ Յեցամիտ երջանիկ՝ 'ի պահելն զհօտն իմ հարկանէի զսրինգն իմ, կամ զհետ մտանէի անտառաբնակ կենդանեաց ։ Իմիք ոչ ցանկայի, զայլ ինչ բայց 'ի մօրէ իմմէ ոչ ուրէի ։ Մի միայն վիշտ իմ էր տեսանել զամենն որ ըստ օրէ եւս քան զեւս ՚նուաղեցուցանէր զառողջութի՟ն նորա հիւծեալ եւ մերձ յանկումն ։

Յաւուր միում՝ մինչ նստէի ՚ի վ՟ր քարաժայռի միոջ՝ ուստի գահավէժ հոսմունք հարիւր ոտնաչափ ՚ի խոր անկանէր հեղեղատ մի ՚ի ներքոյ իմ՝ զարհուրագինս շառաչելով, յանկարծուստ տեսանեմ՝ զեղջերու մի նետահար, որ փախչէր զարիւն իւր ճապաղելով, եւ գայ անկանիլ ՚ի գետոն զհովացուցեալ ՚ի ջուրսն հոսմանէ ՚ի փախուց քարաժայռին ։ Նուօրին երեւի ամենագեղն մի մատաղատունկ՝ զառիւծենի մի զանձամբ արկեալ՝ կապարճ ՚ի յուս՝ աղեղն ՚ի ձեռին՝ խթելով զկողս օդապարիկ երիվարի միոյ, որ ՚ի թեւս հողմոյ խոյանայր ըզհետ վիրաւորեալ եղջերուին ։ Գիտնայ եւ էթ է այսքան գեղատեսիլ ։ Երկայնաձիգ սեաւթոյր հերք ծածանէին զթիկամբք նր՟ . արոճարութ՟ին եւ աշխուժութ՟ի յաչս նորա փայլէին, եւ քաղցրութ՟ին փայելչակերպութ՟ե նորա չէր բնաւ այլայլեալ ։ Մինչդեռ յապշումն պարտեալ՝ դրեթէ անշշունչ պշուցեալ հայիմ ընդ նա, տեսանեմ զամեհի երիվար նր՟ ՚ի գետոյն հրոսիլ, որոյ սրընթացութ՟ին անհնարին յափշտակեալ տանի զնա ։ Ընդվայր ջան դնէ ամենագեղն յանկարծ անցուցանել, փրկածին յորձանք դիմակալէն նմա ։ Համանգամայն դերեւ լինի երիվարն ՚ի տորէ նր՟, եւ թաւալի ընդ յորձանաց, նոյն ինքն ամենագեղն յափշտակի ՚ի ջուրց եւ աներեւութանայ յաչաց իմոց ։

Արդէն ՚ի մէջ կոհակաց էի ես ։ Հարուստ մի լուղիս տամնց գտանելոյ զոր միանգամ փրկել կամէի, յուսկ յետոյ ձեռն իմ կալաւ զերկայնաձիգ հերաց նորա, ածեմ՝ զնա ՚ի ցամաք ամենեւին զգայազիրկ եւ անհագագ ։ Յուսահատուր լինելով ՚ի տեսանելոյ զնա անկար զգալ եւ ուշաբերիլ, տանեմ զնա ՚ի խուղն մեր, ուր փոյթք եւ խնամք մօր իմոյ ըղձմնեցուցին զնա, եւ սան նմա 'ի վախճանի զաչսն բանալ ։ Ո՛հ՞ զի հրաշագեղ և քաղցրահայեաց ակնարկքս այսոքիկ հուր իմն վառեցին 'ի սրտի իմում՝, որ ոչ ևս դադարիւր շիջանել ։ Ինչևէ ապշնուլ ընդ այս գեղեցկութիւն ճոխաշխարհիկ, զոր գունաստութիւն նորա և քան զևս սխրալի առնէր, և զգացի 'ի յիս զվրդովումն ինչ և զտառապանս, զոր ոչ գիտէի ։ Այսու ամենայն ոչ կարէի յագել 'ի հայելոյ ընդ նա, ոչ մարթէի անջատիլ 'ի նմանէ, և յորժամ՝ արձակեաց զեղանակն՝ բացեալ զբերան իւր չորրհակաղ ընէր զինէն, շառաչառաչունէի և կարկաչունէի, եհարց ցիս զանուն իմ՝, մինչզի իմ՝ հարկաւորեցաւ պատասխանել ։

Այսպէս անմահադրմն գեղապանծ՝ զկնի ժամու ինչ հանգստանալ առնլոյ, հանդերձէր կազմել թռչուլ զխրձիթն մեր՝ առանց յայտնելոյ մեզ զի՛ լինելն իւր ։ Սակայն զոսկի մօր իմում՝, այս նուէր ուրախացոյց զմեզ ։ Գիտաց նա, հանմանազանայն յետս առնել զոսկին իւր, ընծայէ 'ի սպասաւորս իւր զբաւականն մի ասնուածքն, և արկանէ զպարանոցաւ միորոյն ։ Այսու ես անկարելի եղէ կալուլ զիմ շնորհակալութիւն, մերկանայ զոսկեմանեակն, զոր ունէր զանձանակ 'ի վզի ծիրանաւորն զգեստոյ, և մատուցանէ ինձ ասելով, մեծն Ալկիդէս զգեցաւ զայս, և վերընծայեաց հաւան իմն 'ի շնորհակալութիւն աստուածականութեանն զոր Ալկիդէս տուեալ էր առ նա ։ Զնոյն առնեմ զոր արարին Հերքիլէս, ընծայեմ զայս զվերանս իմ փրկողին ։ Եթէ հաւատս ընծայեմ նախապատուութեան իմոյ, այս մնիցէ 'ի համար որ սխրալեաց զորդին արամանղութեան, յանարժան 'ի ձեռս ոչ անկցի ։

Յետ բանիցս այսոցիկ՝ գիրկս արկանէ մօր իմոյ, յիս արկանէ զհայեցուած իմն քաղցր և վեհերոտ, արգելու զիս զձայն զհետ իւր, տասնապատիկ եռանդմամբ սպասել 'ի մենջ ։

Մայր իմ և ես առ իրեարս ակնարկէաք ։ Հանգամանք անձին՝ յորում տեսաք մեք զնա , մեզ միայն տալ խորհիլ կարէին՝ թէ չէր օտարականս այս աստուածութիւն իմն ։ Յապշութիւն պարտեալ և արձանացեալ սխրանօք զառիւծենին նկատէի , որ տակաւին խոնաւ էր ՚ի ջրոյ հեղեղատին , յիշատակն ՚ի կեր արկանելոյ զայն աստուածանմանի ուրուք ՚նուազ քաջաւէտ յաչս իմ հանդիսացուցանէր , քան զոր տեսեալն էի զԹիկամբք սանազգունին ։ Աղերսանք նորա՝ ձեռնաշարժութիւնք նորա և ամենայն շարժմունք նորա քանդակեալ էին յոգի իմ․ բանք նորա հնչէին ՚ի լսելիս իմ․ զառաջին նուագս ՚ի կեանս իմ՝ ունկն դնէի մօր իմում՝ մերացեալ և մոռացեալ․ Թագուցի ՚ի նմանէ զխորոյն ներգործութիւն որ լնոյր արդէն զսիրտ իմ ։

Ի վաղիւն ընդ մերկանալ այգուն էի ես ընդ խաշանց իմոց ՚ի վերայ ջրհոս քարաժայռին , արկեալ էի զինև զառիւծենին չքնաղադիտա , յետ որոյ սպառացուցեալն էր զնա՝ զգացեալ էի յանձին իմում զզօրութիւն իմն նորագոյն հեղանիլ՝ և զարիութիւն ինչ աննուաճելի , և գլուխ ամի զհուր իմն այրատուիչ , տապն որոյ բորբոքիլ Թուէցաւ , իբրև եղէ ՚ի նմին վայրի՝ ուր տեսեալ էր իմ զանծանօթն հրաշագեղ ։ Իջանեմ յափն գետոյն՝ որոնեմ զտեղին ուր էի ապրեցուցեալ զնա , անխորժիմ նստիլ ՚ի վերայ նոյն դալարագեղ սիզոյ՝ ուր էի եղեալ զնա Թալկացեալ ։ Յոգւոց ելանեմ՝ տագնապիմ՝ հայիմ շուրջ զինև , և լերինքս այդոքիկ՝ զառ ՚ի Թափ կարկաջասահ հոսանս այս ջրոյ՝ այս տեսիլ զուարճալի որ երբեմն զմայլեցուցանէր զիս , ոչ ևս ձգեն յինքեանս զակնարկութիւն իմ ։ Ամայացեալս գտանեմ զժայռս զայսոսիկ , ամայաստան այս Թուի ինձ զարհուրելի․ անփոյթ լինիմ զխաշանց իմոց , տաղտկացուցանէ զիս որսորդն իմ , ՚ի մռայլսն արկանեմ զանձն

ԻԲ իմ

իմ․ այլ ոչ կարեմ՝ լքանել զվէպս զայսոսիկ անխորժելի լեալ անխրութեանս իմոյ ։

Ի գաղտնարանս առ մայրն իմ, ոչ ևս ճաշակեմ ըզքաղցր խաղաղութիւնն զայն, զոր գտանէի միշտ առ նա ։ Ծառայքն՝ զորս ՚ի խորհս նորա անցուցանէի, երևէին ինձ երկրպագելիք , հազիւ հազ տայի պատասխանի հարցմանց նր․ բիւր հազար հայթհայթէի տալ բարբառել զօտարականն անձի, եւ ինքնս ոչ իշխեմ խօսել ընձէն․ Մեհենականն այն՝ զոր մերուստ կրէ զպատանուշս իւրով, յինքն ձգէ անդադար զհայեցուածս իմ․ յանձնականի գիրկս արկանեմ՝ մօր իմոյ՝ առ ՚ի կարել զքաղցն զայն պաղատանել ։

Արդէն աւուրք երեք էին անցեալք․ յիւրաքանչիւր առաւօտու՝ ընդ մերկանալ այգուն, դարձ առնէի ՚ի ժայռն ջրաբուղխ, անդրէն սպասէի արևուն մտանելոյ, զաչս յառեալ ՚ի ճանապարհ լերինն, ընդ որ յառաջնում նոճայի անմաքրին էր երևեալ ։ Հուսկ յետոյ ՚ի չորրորդում աւուր տեսանեմ զնա վերստին ։ Նստեալ էր որպէս յառաջն, աշտանակէր զերկնայ մի ոսկեթել մարմիւք սխնապարեալ․ շառաւիղունքն զդէմսն նր ծածկեալ ՚ի նշմարելն զնա ՚ի վերայ ժայռին ։

Սակայն առ նա երագեմ ։ Իջանէ յերկիւղածէն՝ կաայէ զնա զծառոյ միոջէ, նստի ՚ի վր քարի միոյ, և հրաւիրեալ զիս նստել, հանդէպ քաջ՝ առէ ցիս, գիտ հաւատացի էի գտանել զքեզ աստանօր, ՚ի պատճառս քո գամ եւ աստ ։ Ապրեցուցեր դու զկեանս իմ, եւ զքոյդ կամիմ երջանկացուցանել, այս է աղագն վն որոյ եկի ։ Սու ինձ ուրեմն համարձակ, զի՞նչ ինչ պիտոյ է քեզ ՚ի վայելել զերջանկութիւն, որո՞յ իմիք կարօտի մայր քո ։ Գիտեմ զի անչափ է շնորհապարտութիւն իմ, և կամքն իմ՝ հաւասար է գրեթէ՝ շնորհապարտութեան իմոյ ։

Պատասխանեմ նմա ակնկորեալ, ձեր դու՝ զոր

զի

զխորդ. սնոտեանեցից ոչ գիտեմ, դու՛ որ զայս պատկառուկս յանձին իմում՝ արկանես, զոր ոչ ունէր զգայի բայց միայն դէպ, հանեցայր յիշել զհոգին մի, և գալ տեսանել զնա մերատոյն: Ո՛վ սքանչելագործ մեծի, մեծագոյն է այս մարդասիրութիւն քան զօձանն զոր քեզ մատուցի, 'ի ժամէ տարի յայտնանէ անել և պատշաճէ ինձ լինել քեզ երախտապարտ: Հարցանես զիս զորոց պէտք են ինձ լինել երջանիկ. Նախ քան զտեսանելն իմ՝ զքեզ՝ ոչ իմիք կարօտէի: Ո՛չ եւս մեք՝ ես և մայր իմ. ունիմք մեք զխուղ մի, որ 'ի լեմանաց օդոյն զմեզ պաշտպանէ. զպարտէզ մի՝ որ զմեզ բուծանէ. հօտ մի՝ որ զգեցուցանէ. ևեւ՝ գնամ ես յաճախ 'ի շէնս մերձակայս զգեղմն խաշանց մերոց զյաւելորդն վաճառել, և բերեմ առ մայր իմ՝ զհատորս արծաթոյ թէ և անպիտանս վն̄ մեր, սակայն ցնծութբ̄ շնորհեմք զայնս ծերագոյն տնանկաց, որք ընդ ժամանակս ժամանակս գան խնդրել 'ի մէնջ զօժանդակութի̄: Արի միայն եղանակ մնայ քեզ ուրեմն առնելոյ զաւուրս իմ՝ առաւել երջանիկ, և է զոր կանուագ այսօր. զի ահա վայելչագոյն օրն կենաց իմոց:

Օպոտէր ամաղրմն 'ի լսելն ինձ: Ո՛չ է՝ պատասխանէ ինձ, որովհետև տեսութե̄ իմում՝ և էթ կարօտիս, եկից երբեմն յայցելութե̄ քոյ, երախտապարտութիւնն պարտաւոր առնէ զիս: Բայց ոչ տայից քեզ ո՛ եմ ես, շնոր լիցի քեզ գնալ զի կամիլըս կոչէ անուն իմ, և ո՛ և իցէ ազգատոհմին իմոյ խորհուրդ, հաւատամ զի քաղցր է յոյժ կամիլըյ՝ զկեանս իւր լեօի
պարտիլ:

Օ՛ կնի առնելոյ զյետին բանս զայսոսիկ կաթոգին իմն ձայնիւ, յառնէ՝ լուծանէ զերիվարն իւր, աշտանակէ 'ի նա, ակնարկէ առ իս, և անհետ լինի:

Մնամ ես արբեալ ցնծութբ̄: Տարփալի յիմաստն զոր ցուցեալն էր ինձ, հայեցուածն աչաց՝ զոր ՚ի չոգելն իւր ՚ի վերայ իմ էր արկեալ, խոստումն իւր դառնալոյ վերստին, այս ամ՝ յիշեցուցանէր և բորբոքէր զսէրս իմ։ Կրկնէի զանուն Կամիլլայ, հանդերձէի կազմէի ամենայն արձագանգաց լերանց ուսուցանել վանկել զանունն այն անձկալի, քանդակել կամէի զայն ՚ի վերայ պատենից ամենայն ծառոց։ Կամիլլա միայն զուգէր իմ՝ յոգւոյ, ոչ ևս տեսանէի զայլ ինչ բայց ՚ի Կամիլլայ յամենայն արարածս բնութեան։

Ի ժամէ աստի յայսմհետէ ոչ ևս որսամոլն, ոչ ևս տաղտկութիւն. անապատքս այսոքիկ երևեցան ինձ տեղիք աղանդեալք, ծառաստանքս այսոքիկ՝ պարտէզքս՝ և հոսանքս այսոքիկ ամենեքեան նորահրաշ վայելչութիւն զգեցեալ յաչս իմ, ամենեքեան գեղով սիրոյս պայծառանային։ Թուէր ինձ թէ բնութիւն էր հաւաքեալ ՚ի մի յարկ զմայլեցուցիչ առանձնութեան զվայելչութիւնս իւր զամենայն, երկնչէի մի՛ գուցէ վրիժեսցի ինձ յումեքէ, ցանկայի զօրել փակել զայն ամենայն մերձակայն։ Առաւել զուարճալի թուէր ինձ խրճիթն իմ, դառնամ՝ առ մայրն իմ՝ առաւել խնդամտութեամբ, զոր չէր իմ՝ երբեք զգացեալ. առաւել քաղցր եղեն գրկախառնութիւնք մեր, ևս օրհնելի և կաթոգին խօսակցութիւնք մեր։

Ուխտակատար եղև Կամիլլա, եկն դարձեալ յետ երկուց աւուրց։ Ո՛վ թէ զիարդ փութանցիկք եղեն բոպէք զորս շնորհեաց ինձ նա։ Հարիւրիցս առ ձեռն եղև ՚ի բերանոյ նմին ուսանել սիրոյս խոստովանութիւն, մինչ ՚ի շրթունս իմ՝ եղև շնչասպառ։ Յորժամ հայէի ընդ Կամիլլա՝ սթափ կայի ՚ի խօսել, իբրև Կամիլլա առ իս ակն արկանէր՝ պատկառանքն զլեզու իմ՝ պապանձեցուցանէր։

Զօր ամ՝ գայ փութով Կամիլլա ՚ի հօտանան։

Առանց ասելոյ իմ՛ նմա թէ սիրեմ՝ զքեզ, առանց լսելոյ ՚ի բերանոյ զխոստովանութիւնն սիրեցեալ լինելոյ իմ՛ նմանէ, զգուշացութիւնք մեր էին երկուց տարփածուաց ։ Յարաժամ՝՝ նախ քան զանջատիլն մեր յիրերաց, ժամանակ կարգէաք անդրէն զմիմեանս տեսանելոյ, և իւրաքանչիւր ՚ի մէնջ կանխէր յառաջ քան զժամն սահմանեալ ։ Ո՛վ թէ որով ցնծութեամբ գտանէաք զմիմեանս, որով ախորժանօք և բերկրապատար սրտիւ պատմէաք միմեանց զոր ինչ միանգամ խորհեալ էր մեր ։ Կամիլլս ոչ այլ ինչ բայց եթէ զինէն խօսէր, և ես զկամիլլայ պատմէի նմա ։ Քաղցր խօսակցութիւնք այսորիկ՝ նոյն էին հանապազ, և երևէին միշտ զանազանք ։

Ոչ այլ իմն թագուստ ՚ի լէօէ չունէր կամիլլս, բայց ՚ի յազգատոհմէ իւրոյ ։ Ոչ ի՞նչ փոյթ քեզ՝ ասէր, զատոհմէ իմմէ, մինչ քաջ ճանաչես զսիրտ իմ, մինչ սիրտս այս խանդակաթ չունի ինչ յօժարութիւն որ չիցէ վասն քո ։

Փարելին կամիլլս պարապէր ևս ՚ի կրթութիւն և ՚ի հրահանգումն ոգւոյ իմոյ ։ Ուսանէր նա, և ուսուցանէր ինձ․ պատմէր ինձ զանցս թագաւորացն Յունաց, զաւաքումն Արգոնաւորդաց, զպաշարումնս Թեբայ և Տրովայ, ուսուցանէր ինձ զտաղանաւորս Հեսիովդայ և Հոմերոսի ։ Ո՛րքան բարւոք ՚ի միտ առնուի զաւանդեալսն առ ՚ի նմանէ զգրականս ուսմանս ։ Այն ամենայն որ ՚ի բերանոյ նորա ելանէր տպաւորէր յոգի իմ, ոչ ևս մոռանալ կարէի, զոր կամիլլոյ գամ մի էր ինձ աւանդեալ ։ Ո՛վ թէ որպիսի քաղցրութեամբ ՚ի նմա լսելն առնուի զճաշակ․ զի մերթ զգայի սիրտ իմ բորբոքիլ ՚ի պատմելն նորա զշահատակութիւնս Աքիլլեայ, և յորժամ Հոմերոս զփրփրածինն նկարագրէր զԱնահիտ, գտանէի զկամիլլս ևս գեղաւոր ։

Այնգունակ անցանէին աւուրք իմ։ Զտիւն ողջոյն 'ի սէր զբաղեալ, և զգիշերն ողջոյն յորդիական խանդաղատանս էին պարապեալք. զի սէրն իմ որ առ կամիլլա՝ փոխանակ նուաղեցուցանելոյ զհպատականս իմ առ մայրս, կրկնապատիկ զօրացուցանել թուէր։ Ոչ բաժանիւր սիրտ իմ բնաւ ընդ մէջ մօր իմոյ, և նշանեալոյն իմ, իւրաքանչիւր 'ի նոցունց անտի ունէր զայն ողջոյն և անթերի. և այս աներկեան շնորհ իմն էր դիյ, զի սէրն ևս սաստկագոյն՝ յորժամ է առաքինի, ևս քան զևս յորդորէ առ ամենայն առաքինութիւնս ոգւոյ մերոյ։

Ոչ տևեաց ընդերկար իմս երջանկութ̃ի։ Օր մի ողջոյն էանց առանց երևելոյ կամիլլայ։ 'Ի հետևեալ յաւուրն՝ կիսահագագ 'ի ծփմանց անճարին մտայուզութեանց, սպասէի հեծեծելով երևելոյ նր̃ աչաց իմոց։ Գայ ժամանէ՝ բայց այլագունութիւնն զդէմս նորա ծածկէր։ Սիրելի իմ ասէ՝ 'ի մերձենալն առ իս, բարեբաստութ̃ի մեր վճարեցաւ. գնալք մեք ողբալ և պատասխանօք մերովք չափել զանդրադարձն կարի սուղ ժամանակին որ տևեաց։ Մինչև ցարդ ծածկեալ էի զոր լինելն իմ 'ի քէն, երկնչէի գուցէ գիտելով քո զազգատոհմն իմ՝ զահի հարկանէիր սիրել զիս. և ախորժելի էր ինձ լինել սիրեցեալ 'ի քէն, առանց հասու լինելոյ քո տոհմականութեան իմոյ։ Ժամ է այդ զծածկութիւն խորոցն բացերևակ առնել քեզ. առ վատաբախտութ̃ի իմոյ՝ դուստր եմ թագաւորի միոյ։

Առ այս բան հերք իմ դիզացան, ցուրտ իմն քիրտն հոսեցաւ ընդ անձն իմ բոլոր, ծունկք իմ դողդոջուն 'ի գուճս խոնարհէին, լեզու իմ կարկեալ բան մի ևեթ ոչ մարթանայր բարբառել։ Այնու զձեռանէ իմմէ կամիլլա, նստուցանէ զիս առընթեր իւր, և ըզկնի ջանաջնար լինելոյ փարատել յինէն զյանկարծադէպ

դէպ զարհուրանօք յորմէ կալեալ էր, դառնայ 'ի կարգ բանին՝ օրինակ զայս ։

Հայրն իմ՝ է Թագաւորն վեստինաց․ սակաւ հեռի է աստի կինդեղիայ՝ մայրաքաղաքն նր․ ըղձանքն որդորդութեան պատճառանք են ինձ առ 'ի տեսանել զքեզ զօր ամենայն ։ Ակնածէի հարուստ ամանակս փոխել զայս երջանկութիւն, բայց դուստր միածին եմ՝ հօր իմոյ, Թագաւորութ̃ն նր ընկալելոյ է պարտքն իմ․ և ամ՝ իշխանք Իտալիոյ խնդրել են զիս առնուլ կնութ̃ ։ Գեր.քան զամենեսեան սպառնան մեզ զմարտ պատերազմ՝ եթէ ոչ արարից ես զխնամութիւն ինչ ։ Մի յերկուցն է արքայն մարուկայ․ տէրութիւնք նորա սահմանակից են մերայնոց․ Թշնամի է միշտ ժողովուրդ նր մերոյս ժողովրդեան ։ Գրաւելն իմ որդւոյ նր՝ շիջուցանելով մինչև իսպառ զհուր մարտի պատերազմացս այսոցիկ, զտէրութիւն մի հզօր արասցէ ։ «Քաջախոհութիւն՝ իրաւունքն՝ մարդասիրութ̃ն են 'ի կոյս իշխանին մարուկայ, որ անդադար 'ի մանկութէ իւրմէ բազմակայեալ՝ շրջի ընդ կողմս յունաստանի, ոչ ունելով զայլ ոք ընդ իւր. բայց 'ի զգօնամիտ դաստիարակէ միոյ՝ առ 'ի ուսանել և հրահանգել 'ի մեծի արուեստին վարելոյ զԹագաւորութիւն ։ Նա 'ի ճանապարհի դարձին իւրոյ առ հայրն իւր ։

Առաւել ահաւոր ընդդիմակին նր է Տելեմնոս արքայն Սալենտինացւոց ։ Զօրութ̃՝ ճոխութիւնք՝ մեծանձնութ̃ն նր (սերի նա 'ի Տելեմաքէ և յԱնտիոպայ) այս ամենայն ընձեռէ նմա զգերակայութ̃ 'ի վերայ իշխանին մարուկայ ։ Բայց սակաւ երկնչիմք 'ի սալենտինացւոց վասն կարի տարանջատ գոլոյ նոցա 'ի մէնջ բազում աշխօք և ժողովրդովք․ և դեսպանք արքային տելեմնացւոց դժուարաւ նախապատուեցին արքային մարուկայ, որ եկեալք են յարքունիս հօր իմոյ խնդրել զիս վասն որդւոյ իւրոյ ։

Յիւրաքանչիւր կողմանց հաւաստի է վասն իմ տղայն, որովհետեւ հայրն առաքեաց հրաժեշտ տալ անձնիշխանութե̃ իմք, զոր պահել կամէի մ̃ն զքեզ սիրել մարթելոյ հանապազ ։ Բայց դու քաջ խելամուտ ես՝ ո՛ չէ՛ քան զայլ ոք, զոր միանգամ՝ պատուել մի պարտի հօր իւրոյ. յեցեալ է հայրն իւ՛ յալիս ծերութեան, զինքն պաշտպանելոյ անկար, առաքէ զիս ընտրել ընդ մէջ երկոցունց, երդմնեցուցանէ զիս յալիս իւր ծաղկեալս մի՛ ձգել 'ի վերայ իւր զպատերազմ մի, որ առիթ թշնամութեան իւրոյ և ամ̃ ժողովրդեան է լինելոց ։ Ո՛ր ինչ պա՛րտ է ինձ առնել, քեզ հարցանեմ ։

Կամիլլա՝ պատասխանեմ նմա, (քանզի վեհութ̃ և երջանկագործութիւն քո ոչ մարթեն ներգործել 'ի յիս առաւել ակնածութիւն քան զանունն միայն Կամիլլա) սիրտ մի՝ որ հնազանդեալ է սիրել, սիրոյն պարտի զոհել զամենայն, այլ սիրտ մի առաքինազարդ զտէրն պարտաւորութե̃ իւրոյ պարտի ընձեռել ։ Արդարեւ իմ հաւաստէ ինձ թէ պաշտպանեսցիս զտէրութեան քո զսահմանս, թէ զինեալ մահականս սպառնիք՝ ծածկեալ առիւծենեաւս նումիդիոյ վանեսցիս հարից հալածեսցիս 'ի պարսպաց քոց զնորուկս զաղէտաւորս և զամ̃ ժողովուրդս իտալիոյ ։ Բայց յորժամ վեհագոյն դիցազանց հանդիսացոյց, յորժամ՝ նահատակութիք հաւասարեցեն արութեանցն Ռոմուղեայ, կարացեն յայնժամ պահանջել ամուսին քոյ լինել ։ Նմա՝ և ամենեքին ոչ մարթիմ՝ տուեալ զքեզ՝ ասեմ՝ ցնա յորտասուս ցնդելով, դու ես դուստր արքայի՝ և ես խաշնարած մի եղկելի ։ Ո՛վ անմտութեանս մեծի . . . . Կամիլլա Կամիլլա, զիա՛րդ լուծանեմ զպատիժ անգիտութեան իմոյ ։

Մի՛ թէ նուաճ̃ղ յաւիմ՝ ես քան զքեզ, ընդ միջնէց կա կամիլլա, Թուի՞ քեզ արդեօք թէ սիրտ իմ՝ թախծեալ ոչ այնքան մորմոքեալ ճնշելի որքան քոյդ : Բայց մնայ ինձ տակաւին նշոյլ իմն յուսոյ. գիտեմ՝ ես զարքայն մարուկայ, թագաւորութեան իմոյ և ոչ կամիլլայ փափագէ վասն որդւոյ իւրոյ : Կանայցից յոյժ պահել նմա զամենայն, երդուեալ յանդիման նր թողուլ նմա զթագաւորութիւն իմ՝՝ յետ մահուան հօր իմոյ, եթէ կամի կծկել յինէն զձեռս և ոչ բռնադատել զկամս իմ. եթէ կամի ողն լինել մեզ ընդ դէմ տեղեմանայ : Անկարութիւն թագաւորելոյ ՚ի վերայ երկուց ժողովրդոց մխիթար ինչ արասցէ փառասէր և շքասէր սրտի նորա, և կարի երջանիկ համարեցից զիս թագի միոյ գնել զայնքան քաղցր իրաւունս սիրելոյ զլեօ :

Ի զուր ներհակեցայ այսմ առաջադրութեան. հաստատեալ կամիլլայ ՚ի միտս իւր ամի դիմադրու լինել, եթող զիս և չոքաւ : Ի ցաւագին տագնապ տարակուսանաց ընկղմեալ՝ ապաժոյժ սպասեմ դարձի կամիլլայ նազելոյն իմոյ :

Յետ երից աւուրց դառնայ վերստին, ցնծութիւն փայլէր ՚ի դէմս նորա, ժպիտն քաղցր՝ էր զերանովնի : Ժառանգեսցուք զերանին՝ աղաղակէ, ժառանգեսցուք զերանին : Պատմեցի զամենայն արքային մարուկայ, ոչ բնաւ զանգիտեցի յայտնել նմա թէ քո էր սէր իմ : Սխրացաւ թագաւորն ընդ իմն յանձնապաստանութի, նուիրումն թագին իմոյ ՚ի հաւանութի էած զնա փափագանաց մերոց տալ զհաստատութի : Լուր զոր ինչ միանգամ միահեծանս այս առաջարկէ : Որդին իւր՝ որ դարձ առնէր ՚ի կղզեաց սնաւ յունաստանի միայն ընդ դաստիարակի միոյ, գրաւեալ է մահու ՚ի կրետէ. և զի յանծանօթս շրջէր, աշխարհ ամենայն անգիտակ է մահու նորա : Դաստիարակն նորահասակ իշխանիս այսորիկ՝ զկնի ազդ առնելոյ խորհրդաբար ապերջանիկ հօրն զայս գոյժ ցաւագին, չէ իշխեալ միւսանգամ երեւութանալ առաջի նր՟, կայե՟լ մնացեալ է 'ի դաշնաւորոյ : Արքայն մարուկայ ողբայ զորդին իւր, բայց ցաւի եւ վասն վրիպելոյ 'ի հարսանեաց աստի, որ ապահովէր զանդորրութիւն ժողովրդեան իւրոյ, եւ կրկնապատկէր զսահմանս թագաւորութե՟ իւրոյ : Արգահատէր եւ փարատէր սուգն դառնութե՟ 'ի սրտէ իւրմէ, եթէ լցանէր քաղցն փառամոլութեան իւրոյ ․ բայց՝ զի մի՛ տեսցէ փոխադրիլ զթագն իւր 'ի գլուխ ատելեմնաց, մի միայն եղանակ մնայ : Որդին նորա անծանօթ էր յարքունեաց նորա զի անդրանիկն 'ի մանկութե՟ իւրմէ թողեալ է նորա զտուն հօր իւրոյ ․ որդի նորա հանդերձեալ է կենդանի, եւ սպասեն ամենեքեան պալատեան նորա ․ արքայն մարուկայ գրէ զքեզ յորդիութիւն իւր փոխանակ ընդ նորա :

Զուեսցէ՛ նա՝ ասաց ցիս, գնասցէ՛ 'ի դաշնատիրոյ պսակել զդաստիարակն որդւոյ իմոյ, եւ ստանա զարքայականն իմ զինաւորն, եւ զոսկեղէն յոյսվէ գօտեցից զծիրանիս իմ : Նա եկեսցէ ընդ նմա, ընկալցի զնա իբրեւ զորդին իմ հարազատ ․ ժողովուրդք իմ անծանօթք իւրն՝ համարեսցեն զնա որդի իմ, դու ընտրեսցես զնա այր քո, եղիցիս երջանիկ, եւ հաշտութիւնն երկուց ազգաց, երջանկութիւնն ձեր, անդորրութիւնն իմ զինք անսասանելի սատութեան լինիք եղիցին, փոխանակ զի առանց ժառանգ իմ ումեք առնելոյ, կայիցեն բարձր տալոյ սպառնանել :

Նամակն լուր երանաւէտ զոր բերեմ քեզ : Միասցուք մեք 'ի միասին ծո՟վ լեօ ․ թագաւորեսցես 'ի վր՟ երկուց թագաւորութեանց ․ ոչ եւս անջատեսցուք 'ի միմեանց, բարեբաստութիւնն եւ սէրն միայն զառաջս մեր վայելչացուսցէ : Ո՟ւ է զի ոչ յանձառ եւ

տա

ուրախ լինիս դու, ընդէ՞ր ոչ 'ի ծածուկ խոնարհիս գոհանալ զդից ։ Ո՛վ թէ որով թմբրութբ̄՝ որով խաժամութբ̄ զերջանկութեանս մերոյ ընկալնուս զհաւատալիս ։ Ո՞ր խելք մնայ դեռևս մարթի խռովել զկեանս քո . . . .

Զի՞նչ խորհիս ։

Զմտաւ ածեմ՝ զմայր իմ" պատասխանեմ՝ նմա ։ Հնա՞ր է՝ կամ՝ զքեզ կորուսանել, կամ՝ կորզել յաւէժ զկեանս այնորիկ որ ետ ինձ զորև ։ Ցքեզ ինքեանս հարցանեմ, ցքեզ՝ զոր տեսի յօժար և պատրաստական զանձն մեր անդորրութե̄ հօր քո զոհել ․ արժա՞ն է ինձ բարձի թողի առնել զմխիթար, 'ի ձա՞հ է ինձ զրկել զնա 'ի մի միայն յենարանէ որ նմա մերձաւորայ ։ Լցցուք զնա բարեգք՝ ընդմիջեաց կամիլլա ։ Այլ դու հաւատացես անտի զորդւոյն նորա՝ աղաղակեցի ․ այլ ատիպես զորդւոյս զայս ուրանալ զմայր իւր ։ Այս և եթ խորհուրդ զիս քառանեցուցանէ ։ Բա՛ւ՝ կամիլլա, չի՛ք բնաւ թագաւորուհի, չի՛ք ամենևին բարի յաշխարհի ատա որ կշռէ զայս խորհուրդ՝ առաջին պարգև բնութե̄, առաջին հեշտութի̄ զոր սիրտք մեր ճաշակեն ։ Ո՛չ կարեմ յանձն առնուլ 'ի բաց մերժել զայն 'ի սրտէ իմմէ, և կեղծել իսկ թէ հանեալ իցէ ։

Այլ ո՞չ այս և եթ լինէր ոճիրն զոր գործէի առնլով իմ՝ զանուն իշխանին մարուկայ ։ Զի ժողովրդք Ֆրագանսուէին ինձ միջնորդութեամբ խարդախութե̄, լինէի ես թագաւոր ստութբ̄ ։ Ո՛վ անտանելեացս, եթէ օրինաւոր թագաւորք զոյնքան մեծագոյն պարտաւորութիւնս ունին կատարել, եթէ համարս տալոց են Ա̄յ ամենայն բարեաց զոր ոչն արարին, և ամենայն չարեաց զոր թոյլ ետուն առնել, ո՞րքան առաւել ստակալի եղիցի համարն զոր ես տալ ունիմ, ես՝ ամբարձեալս 'ի գահս արքայական՝ առանց [illegible] կոչման ․ ես՝ զո՛ր օրինակ, յափշտակիչս մեծութե̄ իմոյ, վասն որոյ

իս

իւրաքանչիւր յորգանք յետնագունին 'ի հալածանաց իմոց յանդգնութիւն իմն լինէր պատրանաց իմոց ։

Բաւ մի' լիցի կամիլլա. դու ես նախամեծարն 'ի բարիս. վկայ են ինձ երկինք և սիրտ իմ՝ զի զկեանս իմ՝ ողջոյն նուիրէի առ 'ի կեալ զօր մի և եթ առաւել քո ։ Այլ այս երանութիւն մեծագոյն, այս երանութիւն՝ որոյ մի միայն յիշատակն արբեցուցանէ զուշ իմ, ոչ ևս լինէր վասն իմ՝ երջանկութիւն, եթէ սիրտ իմ՝ 'ի տառապանաց ազատէր ։ Ոչ ինչ քաղցրութիւն վասն առաքինութեան ճաշակիլ մարթի առանց խաղաղութեան սրտի զոր նա միայն շնորհէ ։ Ազդեալ ընդ քեզ 'ի գահոյս՝ 'ի խնթմանէ խղճիւ խոցոտեալ լինէի եղկական. առաւել ցանկալի է ինձ լինել յեցամիս ։ Իբր զիս յանապատի աստ. լի է քև վայրս այս, կարայցից վարել առանձինն զժամանակս իմ ։ Առէն ողբայցից զքեզ միշտ, բայց զայլ իմն ոչ աղաղակեցից բաց 'ի քէն, առաքինութիւն հրամայէ ինձ ։ Ո՛ղջ լեր՝ կամիլլա, գո՛րծ յապաղումս հօր քո. հա՛ր զհեռացութիւն զառատեալ մի. և քաղցրութիւնն զոր ճաշակէ ոգի մի մեծ՝ կատարել զիւրն պարտաւորութիւն, նուազ զգալի արասցէ 'ի քեզ զկթութեանն՝ զոր ապերջանիկ մի ներգործէ 'ի քեզ ։

Յաւելս զայս անկորեկի, և զարտասուս իմ թագուցանել ջանայի ։ Ուշի ուշով ունկն դնէր ինձ կամիլլա, յառեալ ակամբ նկատէր 'ի յիս, և եկաց հարուստ մի առանց պատասխանելոյ ինձ ։ 'Ի վերջոյ կալեալ զձեռանէ իմմէ՝ զոր սեղմէր ուժգին, յարգեմ և մեծարեմ զքեզ՝ ասէ ցիս, անձնարին սիրոյս եռանդիդ, և առաքինութիւն քո շնորհէ զլրումն վերջին սիրոյ՝ յաւերժական սիրոյն, որով սրտացուցեր զիս ։ Այլ հաւանիմ բանից քոց ո՛ լէօ, և 'ի ժամէ աստի յայսմանէ հրաժարիմ 'ի քէն ։ Այո՛ սուրհիմ 'ի քէն,

կրկնե

կրկնելով և երդնլով քեզ՝ զի ածից 'ի գերեզմանն զսէրն որ միաւորեացն զմեզ, զի պատկեր քո կեցցէ 'ի սրտի իմում՝ ցորքան ժամանակս տրտմահաղորդ սիրտս այս տրոփեսցէ, և թէ յաղթիմ 'ի ցաւոց իմոց՝ ոչ ակնունիմ՝ ոչ մաղթեմ 'ի դէից, առ քեզ ուղղեցից զհառաչանս իմ վերջինս:

Զայսոսիկ ասելով թողու զնա, մատնու 'ի յուս երիվարին իւրոյ, որոյ զհրաժարականն ողջոյն խամրեալ բարբառով, երիցս կրկնէ զբազուկս առ 'ի ձգելով, յաղի անկանի՝ և ընդ կրունկն դառնայ առ 'ի յանկանել միւսանգամ՝ ևս արտասուաթոր աչօք զայս քարաժայռ՝ զհոսանս զայսոսիկ՝ զայս տեղի ուր յաձախ նստեալն էաք, թուէր բարբառս մնալ ասել այսոցիկ: 'Ի վախճանի՝ ձգելով 'ի յիս զվերջին հայեցուած մի ևս խանդաղատանաց և ցաւոց պարզի յինէն.... Ամբելի՝ յետ դառնագին աւուրս այսորիկ՝ չե՛ք իմ տեսեալ երբէք զկամիլլա:

Իստամբօր լռէ Լէօ. փոքրկք երկու արտասուաց յաչաց իւրոց հեղանեին. անձկալին իմն ծանրութիւն թախծութեան ճնշէ զնա: Նուանոյ ընդունի զնա 'ի գիրկս իւր. երկոքին դիւցազունքն մնան գրկախառն առանց բանս ինչ խօսելոյ: 'Ի վերջոյ փոխն գործեալ Լէօի հեղձամղձուկ առնէ զթառանչս իւր, զհեկեկանս խափանէ, և դառնայ 'ի կարգ բանին իւրոյ:

Կամեցայ թագուցանել 'ի մօրէ իմմէ զվիշտ զոր արարեալ էր իմ վն՟ նր՟, ոչ կարէր նա առաւելուլ ըզգորովալից սէր իւր, առաւելոյր զտանջանս իւր: Ջան եղի ծածկել անտի զցաւս իմ: Յողբս և յարտասուս զօրն անցուցանէի 'ի վ՟ր սոյն այս քարաժայռիս, 'ի նոյն տեղւոջ ուր տեսանել էր իմ զկամիլլա: Իբրև 'ի խըրճիթն դառնայի, նկարէի զպարզ դէմս զգենուլ, յօրինէի զերեսս իմ. և յորժամ ոչ առոյգէի զօրութիւն

՚ի պայծառատես աչաց մօր իմոյ թաքուցանել, պատճառանս ինչ հայթհայթէի որ ոչ վշտացուցանէր յոյժ զսիրտ նորա, Ցաւէի զայնպիսի ողորմելութիւն, զոր մարթ էր նմա փարատել յինէն։

Զայս օրինակ ամիսք երկու անցին առանց ըղ զուր ինչ ընկալելոյ ՚ի կամիլլայ, առանց նուաղելոյ սաստկութեան չարակրութեանց իմոց քան զաւուրս առաջնոյ։ Ո՛վ աղէտիցս՝ այլ աղօտք ևս առաժամեայն հատին ՚ի վր իմ, մնացին իմ խօթանայ։ ՚Ի կիր արկի ապաքինել զնա զնոյն զբժշկականս ճարանց մերոց, բայց օրհաս մահուն անդրէն մօտակայրուա պատեալ էր զոտիւքն։ Զգայ զժամանելն ՚ի վր իւր անհրաժեշտ մահու օրհասին, և կոչեալ զիս առ ինքն աղօտաձայն իմն բարբառով՝ ասէ ցիս զբանս զայսոսիկ, զորս տակաւին թուի ինձ լսել։ Պատրեցի զքեզ՝ ով լէօ, ոչ եմ ես մայր քո։ Խնդրեմ ՚ի քէն ՚ի մահճիս մահու թողուլ ինձ զսուտ մի որ եղև քաղցրութիւն կենաց իմոց։ Մոլորեալ ըղ խորհրդին իմ՝ լքանել առ ՚ի տարադէմ գնալ յերեսաց ամէհի պեղլիգենաց, ուր պատերազմ տային մեզ յայնժամ, հասանիմ յեզերս ատեղնոս գետոյն ՚ի գիւղն ավլայ, զոր հրձիգ առնէին բարբարոսքս այսորիկ. ՚ի մէջ տակալի աւերածոյն հրդեհին և սրածութեան, ՚ի մէջ շեղջակուտի գիականց մնկելոց նշմարեմ զքեզ յօրոցի քում՝ զռմաստել՝ արիւնայեղց՝ խոցեալ ՚ի սրոյ որ էր ՚ի գիրկս քո մեռեալ։ Քոյդ գեղաւորութիւն շարժեաց զիս, դնեմ զձեռն իմ ՚ի վերայ սրտի քո, ըղ գամ զի տակաւին տրոփէր։ Առնում զքեզ անտի յօրոցի քում. բժշկեմ զքեզ ՚ի վիրաց քոց, խնամ տանիմ տկար աւուրց քոց. դու կոչեցեր զիս մայր քո, և ես ոչ կարացի երբէք հրաժարել ՚ի քաղցր անուանէ սորին։ Լքցէ զիս՝ ասէի ՚ի միտս իմ, եթէ խելամուտ լինի թէ չէ իմ որդի. ոչ գիտեմ ո՞յք իցեն ծնօղք նր ոչ կարէին նոքա սիրել զնա առաւել, Թողցուք ուրեմն տխրութե իմիք, որ առանց առնելոյ զնա ապերջանիկ մխիթարք միայն լինին ինձ 'ի կեանս իմ: Աւասիկ ա-ղագն իմ: Ներեա՛ տկարութե իմում. այնքան սիրելի դու զիս՝ անգին որդեակ իմ, մինչ զի դու ինքնդ՝ ան-ծայրին առնէիր ինձ զխստասրտութի մի, որ խնամ առնելոյ էր ինձ զխանդաղատանս քո:

Առ այս բանս գիտեա արկի նմա, թողի զնա ար-տասուօք իմովք: Անգին որդեակ իմ, առէ ցիս, հարկ է անջատիլ 'ի միմեանց. ընծեա՛ զպարտատուս քո, ա-ռաւել կսկծագին առնեն զայս հրաժեշտ: Յիշեա՝ 'ի մխիթարել զքեզ, զի դու միայն երջանկացուցեր զիս. յիշեա՝ զի քո միայն յերկար ձգեցան աւուրք իմ: Աւա՛ղ զի ոչ կարեմ հաւասար լինել զպատուարժանութե ա-ւուրց կենաց քոց: Որքան ժամանակս կեցի, դողացից մի՛ գուցէ հարազատ մայր քո եկեալ հանիցէ զորդին իմ յինէն. զգալիս զի մեռանիմ, ցանկայի մեռանել ա-ւանդել զքեզ նմա: Առ զայս քարս մեծագին, յորս վ͞ր է քանդակեալ անուն մի յինէն անծանօթ տառիւք: Այս գոհարն էր 'ի պարանոցի քում յաւուր յորում ապ-րեցուցի զկեանս քո: Թաքուցի 'ի քէն մինչև ցարդ, զի թէ կարասցէ քեզ այդ տալ ճանաչել զծնողն բարե-բաստ՝ որ տարաւ զքեզ յարգանդի իւրում: Ո՛հ եթէ տեսցես դու զնա երբեք՝ ասա՛ նմա՝ զմայրդ նախանձե-ցոյց ես յոյժ բարեբաստութե նորա, ասա՛ նմա՝ զի թերևս գորովն իմ այժմ մահացուցանէր զիս, և ներեսջի՛ք ինձ երկո-քեանդ վ͞ս զքեզ որդի իմ կոչելոյս: Ողջ լեր՝ որդեակ իմ, անգին որդեակ իմ, թողացո՛ ինձ բարբառել առա-ւել ևս զայս քաղցր անուն: Մոռասցիս զիս դու իսկ, զի ձե-ռին քո զաչս իմ կափուսցէ, և զի յառաջ քան զար-տաշնչելն իմ զամ մի ևս լուիցից կոչել զիս մայր քո:

Ո՛վ մայր իմ՝ աղաղակեցի, մայր իմ կաթոգին, միշտ սրտի քո եմ, և եղէց 'ի կեանս իմ բոլոր : 'Ի նուաճիլ են բողբոջք աղաղակի իմոյ, փչեալ էր արդէն ընդ հոգւոյն . արդէն մահու անողորմ՝ յափշտակեալ էր զորմն իւր :

Ոչ իմ՛իք նկարագրեցից քեզ զվիշտս իմ, սիրածք մեր հանգստեան մեռեալսց՝ ո Նումա, և չէ քո մոռացեալ՝ զոր միանգամ՝ կրեցերդ 'ի մահուան Տուղղոսի : Ձեռք իմ՝ կազմեցին զփայտակոյտ մի սոսկալի, ուր մարմին Միրտաղեայ յածխուն փոխարկեցաւ : Ամփոփեցի զմոխիրսն 'ի սափորան մի զոր ես ինքնս փորեցի, թաղեցի զայն 'ի գերեզմանի միոջ 'ի հողաբլրոյ զոր ես ամբարձի ոչ հեռի 'ի խրճիթէ իմմէ . և գրեցի 'ի վերայ վիմի միոջ՝ որով ծածկեցի զայն հանգստեան նորա, ԱՅՍ ՀԱՆԳՉԻ ՄԻՐՏԱՂ, Ո՛Վ ԱՆՑԱՒՈՐ ԴՈՒ՛ ԵԹԷ ՍԻՐԵՍ ԶՄԱՅՐ ՔՈ ՅԻՇԵԱ ԶՆԱ ԵՒ ԼԱՑ ԱՅՍ :

Այսպէս փակեալ զխուցն իմ՝ զոր 'ի խնամս շնորհեաց մարդկաց սրտալի աղօթատանն, և բարձի թողի առնելով զհօտն իմ, եկի 'ի լերանցս յայսցանէ, և յոչ կամաց զգնացս իմ՝ ուղղեցի առ մայրաքաղաքն Սաբինաց :

Հասեալ 'ի Կինդիղոյ՝ լուայ զի զուարթածաղիկն Կամիլլա զկնի ընդ երկար հակակայելոյ հօր իւրում, հուսկ յետոյ յանձն առեալ էր ամուսնանալ ընդ արքային Տատեայ, և զի էր եղեալ 'ի նմա [illegible] հանդերձ իշխանին այսորիկ : Խռովեալ 'ի լրոյ սորա՝ իբրու թէ չէր ինձ օրէն անդրէն դեգերիլ, 'ի տագնապ փութոյ դառնամ յապենինս : Թափառելով աստ և անդ՝ առանց ունելոյ զճանապարհ հաստատուն, հասանիմ 'ի ճակատ զօրացն մարսաց յայնմ պահու, յորում ժողովէին ընտրել զզօրագլուխ մի : Տեսի զօրսն այնոսիկ ծնոյց 'ի յիս [illegible] սէր . հատատանեյի ՚ի միտս իմ կորնչել կամ դիւցազն ոմն լինել։ Յանգիտանս եղէ զերջանկութիւն վիճել, բարեբախտ պատահումն ինչ՝ շնորհէ իմն զերջանկական պատիւ։ Գիտակ իսկ ես զկարգ թագաւորութեան մարդոց, և ուսանեա զի՞նչ իցէ անդրադարձ փոխարէնն։ Աստանօր տայ զբաւ լեօ պատանութեան իւրոյ։ Ո՜ ժամանակն ողջոյն պատանեկանութեան լեօի, անշարժ յակնդիրս կացեալ էր նումայ։ Ամենայն խանդաղատական բանք՝ զորս դիւցազն մարս բարբառէր թափանցէին յոգի սաբին դիւցազին. յորժամ նկարագրէր լեօ զաստիս մանկութեան իւրոյ, և զհանգամանս գորովախնութեան իւրոյ առ մայրն իւր, քաղցր իմն ժպիտ զդէմս նումայի վայելչացուցանէր, իբրև խօսէր լեօ զկամիլլայ և զսիրոյ նորա, նումայ յարտասուս լուծանէր։

Բայց ընդ մուտս լինէր արևին, երկոքեան բարեկամք զգիշերին յայրիս յայսմիկ անցուցանել կամեցան։ Գնացին ժողովել զպտուղս ինչ ՚ի հովիտս, և դարձան քնոյն սպասել։ Ճանապարհ մեր վճարեցաւ՝ ասէր նումայ, որովհետև գտաք զվիմեանս։ ՚Ի վաղիւն բացորոշեսցուք յոր կոյս ունիմք զգնացս մեր խոտորել։ Էր ինձ ցանկութիւն իմն զյունաստանաւ շրջելոյ առ ՚ի հասու լինել բարուց զանազան ժողովրդոց, և գիտութեամբս այսորիկ առաւել զգօնագոյն լինել և առաքինագոյն։

Սիրելի՛ պատասխանէր նմա լեօ, եթէ սիրէին մարդիկ զառաքինութիւն, աներկևան օգնէր նոցա ճանաչել, և ես քեզ ասէի, շրջեսցուք ընդ ոլորտս տիեզերաց, լուսագոյն եղիցուք ՚ի դարձի մերում։ Այլ զի՞նչ ունիմք տեսանել ՚ի յունաստան, զի՞նչ գտացուք մեք յայլ ամենայն տեղիս. զթագաւորութիւնս ՚ի ծառայից բաղկացեալս, և վարեալս ՚ի բռնակալաց, զհասարակապետութիւնս պառակտեալս, և որոց քաղաքացեք՝ 'ի ցուցանել թէ արդարք են , զկրեալս կոտորեն , զոմանս երեւելի եւ մեծահամբաւ անձինս հալածեալս՝ վտանգեալս տարագրեալս , եւ որ նուա՜զ ցաւէին 'ի վերայ հայրենեաց՝ քան 'ի վր̃ մեծութեանց զորս սիրէին առաւել քան զհայրենիսն · զարուեստս՝ որք զանձինս առ իմաստունս ուսմին , եւ որք լլկեն եւ նեղեն անդադար զկեանս իւրեանց ամայի եւ ունայն բանիւք զորոց եւ ճոխեանք խել երկրաձանանս · զհրաւէն ասացից ծմ՝ ուրեք տեսցուք զժողովուրդս հարստահարեալս , զառաքինութիւն ընդ վայր հարկեալս , եւ զփառասիրութիւնս կամ զսնապարծութիւնն թագաւորել յաւագանիս 'ի վր̃ այնոցիկ որք առաւել սխրանան ընդ այն ։ Օ՜ ի՜նչ օգուտ եղիցի մեզ՝ նուագս 'ի ձայնապարհոց մերոց ։ Պարծեսցուք մեք թերեւս յառաւել ախտս վարակեալք ։ Ո՛ն անդր՝ ապարինչն ոխերերաց ոչ կամեցաւ զի առ 'ի լինել իմաստուն պէտս ունիցի մարդն շրջելոյ ընդ աշխարհ , եւ ծախել զկայտառագոյն կէսն աւուրց կենաց իւրոց՝ ճգնութբ̃ մեծ յանձին բերելով տաժանաւ զառաքինութիւն վասն անհաւատ ծերութե̃ ։ Իւրաքանչիւրում 'ի մէնջ անդադար 'ի ծնանելն տուեալ է զգէր եւ զբնաւոր մի՝ զմերն խղճմտութիւն ։ Կեցցուք ընդ նմա խաղաղութբ̃ , եւ մեր եղիցի ծմ՝ ։

Յոյժ բարւոք՝ ասէ ցնա նուագն , մի՛ ամենեւին թողցուք զխաղաղեայ , դարձցուք 'ի լերինս քո , գնասցուք բնակել 'ի խուղ քում , երթիցուք 'ի գիւղ հօտին քո ։ Աշխեցից զմանապատ քո , զզուշացայց խաշանց քոց , ողբացից ընդ քեզ 'ի վերայ գերեզմանին միրտոլայ , զոր ամենայն խօսեցայց ընդ քեզ զկամիլայ 'ի գիւղս հասանայ սորաւիկ զոր ձմնաշեմ արդէն , եւ եթէ դորոծ՞ մայրակեան եւ քեզ վայելել զերջանիկ աւուրս յայսմ ապաւինի , բարեկամութին մխիթարիչ զուարճութի վշտաց քոց անքէն մարթի ։

Օ՜ այս

Ո՛չ այս ատացեալ՝ զիրկս արկանէ նմա լծօ, և երկոքեան 'ի միասին յուղի անկանին ։ Նոյնպէս ընդ աշխարհքն Սաքեաց ընդ երկայնութիւն այնր համայն, անցանեն ընդ որընթաց գետոյն տղմնոտ, մնասնեն յանապատս աղբենկաց, և հուսկ յետոյ յայլենին ժամանեն ։

Երկոքին դիւցազունքս՝ որք ճարակէին ևեթ որսովք իւրեանց, թիւրաշաւիղ հետոց պատահեն 'ի զհետ մտանելն անտառաբնակ էրէոյ ։ Նոյնպէս զանցանեն զառապարիւք և զդժուարաժայռիւք, ընդ մըտանեն 'ի վայրս առաւել ամայիս, և 'ի վախճանի նըշմարեն զհովիտ մի զուարճալի շուրջ պատեալ յանմատոյց լերանց, ուստի 'ի վայր հոսէին վտակք յոլովք, որք գնային զհովիտն առոգանել ։ Դիւրազգի և յոգնատեղեն սաղարթագեղ տունկք յեզերս առուակաց այսոցիկ մերձաբուսեալք, էին խառնեալք ընդ ձիթենիս ընդ հացենիս որթոց սաղարթիւք պսակեալս, և ընդ այլ ծառս մրգաւէտս ։ Դաշտք ծաղկաւէտք ձեւանային յամ՟ տեղիս ակումբք կիտոճածազարդք ։ Ամենայն ինչ զխաղաղութիւն, և զլռութիւն շնչէր ։ Օդն էր մաքուր, վտակք ականակիտք, այլ իմն ձայն ոչ լսիւր մարդկան, բայց 'ի խոխոջմանէ ջուրց և 'ի դայլայլէ անհամար թռչնոց, որք թրթռելով 'ի մէջ տերեւախիտ ոստոց ծառոց թուէր ելևելս առնել 'ի նուագելն զերջանկութիւնն զոր վայելէին ։

Երկոքին բարեկամքն զմայլեալ այսու տեսութեամբ փութան անձապարեն 'ի ծործորն իջանել ։ Գնան՝ սքանչանան՝ կայտառան ևս մաքրագոյն ցնծութեամբ զոր շնորհեալ են մեզ դիք, տեսարանաւ գեղաւոր բնութեան ։ հետևին ընթացից յաղթ հեղեղատին առանց պատահելոյ ումեք 'ի մարդկանէ ։ Հասանեն 'ի վայր մի ուրանօր գետն յերկուս առաջս տրոհի ։ Յետ խոս-

տա

տուամնալոյ իւրեանց 'ի նմին վայրի դարձեալ գումարիլ, անջատոլին 'ի միմեանց գնալ իւրաքանչիւր զհետ միոյն 'ի
ջրատարձից հեղեղատին :

Հարուստ մի լինիթայու լէօ, բայց զայլ իմն ոչ եգիտ՝ եթէ ոչ զծառս՝ զծաղիկս՝ եւ զպտուղս :

Նումայ առաւել գեղեցկագոյն նշմարեց զհետ մի՝ որ անցանէր առանց շանց եւ առանց հովուի՝ մերձ առ փոքրագոյն պուրակ մի դափնեաց : Յնդումանէ հանդարտաքայլ 'ի պուրակս այս, դիտէ՝ վինէ՝ եւ տեսանէ զաղբիւրիկս մի վայրի յանկի, զկուսան մի քաջառողջ զգեցեալ սպիտակ՝ նստեալ 'ի վ̃ր դալարագեղ թմբի : Յառէր օրիորդն յոյժ զբաղեալ յընթերցուածն գրոց միոջ, զոր 'ի ծնգաց իւրոց վերայ ունէր : Մազք ն̃ր խարտեաշք՝ որք զծոծրակաւ եւ զթիկամբք իւրովք անկանէին, 'ի սիւք հողմոյ ամբարձեալ լինէին մեղմաբար, եւ երեւեցուցանէին զերեսս նորա, ոչ երբէք տեսաւ քան զայն գեղաւոր : Այլ այս գեղապանծուհի՝ զոր բնութիւն էր նմա պարգեւեալ, զիւրն նախապատականն պայծառուէ̃ 'ի մաքրուէ̃ անմեղ եւ 'ի սեռնուէ̃ ընկալեալ, ուր նկարագրեալ էին 'ի դէմս նորա : Այս քաղցր եւ պարզ տեսիլ շնչաւէր թուէր զերջանկութեան զհանդարտութիւն, զառաքինութեանն զխաղաղութի̃ . էր իմն երկնային ունէր՝ որ 'ի բացեայ առնէր զամենայն զհեշտութեանն զխորհուրդ, եւ ինքն զոգին առաւել մաքուր, եւ առաւել զուարթագին խոկմանս, ոչ բնաւ ներգործէր զցանկութիւն . զոր իմն պատկառանաց ծնուցանէր՝ զհիացումն ինչ առաւել գիրգ, եւ առաւել եռանդուն քան զայն իւրն ցանկութիւն :

Տեսանէ զնա Նումայ, եւ զկայ առնա : Ոչ բնաւ սխրանայ եւ ոչ ամփոփի, ոչ ամենեւին առաւել ձեռին սիրտ իւր թրթռայ . 'ի քաղցր իմն հեշտութե̃ առնազճաշակ, որ ոչ շնորհեցուցանէ զքան իւր, պատկերակեր կերպութիւն սիրոյն հեռի է 'ի մտաց իւրոց ։ Ոչ համարի զհովուուհիս զայս չքնաղուհի ոմն ․ զգայութիւնք իւր խաղաղացեալք և մեղմացեալք զոչ ինչ մեծացուցանէին յաչս իւր , բայց 'ի ճշմարտութեան զայլ ինչ ոչ նկատելով՝ տեսանէ յանձին այսր անծանօթ պատանուհւոյս զչքնաղագեղն 'ի մանկահասակս , և առանց երկուանաց զեւս առաքինագոյն ։

Ընդմիտանէ մեղմօրէն ընդ մայրս , մերձի առ նա , և կամի յակամնել զգիրն զոր ունէր նա 'ի ձեռս իւր , այլ տառք անծանօթք են նմա ։ Ամփոփի նումայ զգուշութբ՟ ։ Բայց մինչ կայր ողջեալ յետաստթիւոյ , գալ տեսանէ զծերունի մի յարգելի՝ յեցեալ 'ի ցուպ մի ստորոտք փայտակէլ ․ ունէր զալիս ծաղկեալս , և երկայնաձիգ մօրուք 'ի վր՟ լանջացն իւրոց իջանէին , դէմք նր՟ խորշոմեալք պահէին զկերպարան իմն մեծութեան՝ զոր աղէտք և ծերութիւնն չէին տակաւին առեղծեալ ։ Դուստր իմ՛ ասէ ցհովուուհին , ահա մտանէ արեգակն ․ գնասցուք ընդ զարատոճիրան անծայրին օրհնաց մերոց ։ Ըստ այս բան յառնէ աղջիկն , և տայ տեսանել նումայի զխնամախառն իւր դիտակ ։ Առժամայնեալք նորա առ հայրն նայրին , ժպտելով կարկառէ նմա զձեռն իւր ․ յեցեալ ծերունւոյն 'ի բազուկ դստերն իւրոյ՝ դարձ առնէ յանիրնթայ 'ի խուղ մի շինեալ 'ի մէջ անտառին ։

Նումայ՝ որ ոչ իշխէ հեռանալ նոցա , 'ի զինինն արկանէ զամենայն զշարժմունս նոցա ։ Տեսանէ զնոսա լուանալ զձեռս իւրեանց յառու մի անապակ ջուրց , յետ այսորիկ մտանեն 'ի խուղն , և ծերն առժամայն զայլ տարազ զգեցեալ արտաքս ելանէ ։ Երկայնաքղանց հանդերձն նր՟ փոխարկեալ է 'ի բաճկոն մի կարճ ․ ածեալ ընդ մէջ գօտի մի բազմանշուան , երեւք նորա կիսով չափ են ագուցեալք ։ Ունի 'ի ձեռին զանօթ մի

այլ

պղնձի, յորում վառի հուր ինչ բորբոքեալ, դնէ զայն ակնածութեամբ ՚ի վ̅ր սեղանաքարի միոջ : Դուստրն նորա գնայ զհետ նր̅ բերելով զծխամանելիս՝ զարմանս՝ և զթելեթև սոլյակ մի խառնոց : Երկոքեան ևս ՚ի ծունր իջեալ զխնճերս զայսոսիկ ՚ի հուր արկանեն, բորբոքելով զայն ոսկեղէն գործեօք, և ասելով զաղօթս ինչ օտարոտի բարբառովն իւրեանց :

Համանգամայն յառնէ ծերն վերստին, նովին պատկառանօք տանի զանօթն : Հովուուհին մանուկ գնայ ժողովել զհօտն ցրուեալ ընդ մարգս, փակէ զայն ՚ի փարախս մի վանդակապատ, և դառնայ զհետ հօր իւրոյ, մինչ Նումայ լի զարմացմամբ և բերկրանօք փութայ դառնալ առ Լէօ :

ՎԱԽՃԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՐՈՑ

ՆՈՒՄԱՅ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

Նումայ և Լէօ [illegible] : [illegible] , և [illegible] : Լէօ [illegible] : [illegible] : [illegible] և [illegible] : [illegible] : [illegible] : [illegible] : [illegible] : [illegible] : Լէօ [illegible] :

Ն[illegible] բեկեալն իւր , և պատմէ նմա զոր ինչ միանգամն եղեալն : [illegible] նմա 'ի խուղն , [illegible] : [illegible] զայն [illegible] , և [illegible] 'ի վեր ոչ : [illegible] ասէ [illegible] , զի [illegible] : [illegible] , [illegible] ընդ [illegible] , [illegible] :

[illegible] : [illegible] 'ի [illegible] 'ի վեր [illegible] 'ի [illegible] իւր [illegible] և [illegible] զոր [illegible] իւր [illegible] : [illegible] և [illegible] , [illegible] , [illegible] ինչ [illegible] [illegible] [illegible]

ձո

Ճոխութիւնք նահապետագոյն բնակարանիս այսորիկ:

Ընդ ուսանելն ծերոյն զհիւրսն՝ յառնէ իսկոյն ընդ յառաջ լինի նոցա, և հրաւիրէ զնոսա առնուլ զհանգիստ: Ա՛նայիս՝ ասէ ցդուստրն իւր, ջեռմնայ՛ զջուր՝ պատրաստեա հիւրից մերոց զոր ինչ միանգամ է մեզ ընտրելագոյն: Պարկեշտագեղն անայիս անսայ 'նմա, զարթուցանէ զհուր կրակարանին, գնայ որոնել զանօթ ինչ աղբերի, լնու զայն ջրով, և փութայ 'ի պարտէզն՝ մինչև բոց հրոյն պատեսցէ զամանն:

Անայիս դառնայ վաղվաղակի բերելով զողկոյզս խաղողոյ՝ զձիթապտուղս՝ զայլ մրգս՝ զխորիսխս մեղու, և զծաղիկս. զորս խառնեալ ընդ պտղոց 'ի մէջ սեղանոյն, երթայ 'ի խնդիր փայտեայ նուագայ, լնու զդորակ մի նոր գինեաւ, և զջուրն ջեռուցեալ 'ի փայտեղէն կոնք մի մեծ հեղեալ՝ մատուցանէ հօր իւրում: Ծերունին՝ յակամայից կամս հիւրոց՝ լուանայ ինքնին զոտս նոցա, զկնի բազմի 'ի սեղան ընդ նոսա:

Ապշութիւն՝ յոր պատրանեալն էին երկոքին դիւցազնքն, հազիւ հազ թողացուցանէր նոցա չնորհ ունել զծերոյն: Անքթիթ նկատմամբ յանայիս՝ սքանչանայր Նուամինայ ընդ գեղ երեսաց նը՝ ընդ բնածին վայելչանսն՝ ընդ քաղցր և պարզ քաղաքայնութիւն նորա. բայց 'ի վեր քան զամ հիացեալ էր ընդ ողջախական երկիւղածութիւն, ընդ սեռնութիւն իմնկելի, որ տուանց երևեցուցանել ջանայոյ՝ հանդիսանայր՝ թէ և խաշնարած մինչև 'ի նորա գործս մանունս: Ո՛վ թէ որքան մեծ երանութիւն է եղբայր նը լինել՝ ասէր ընդ միտս իւր Նուամինայ: Ակնածութի իւր առ անայիս ոչ ներէր ինքեան զայլ ինչ խորհուրդ:

Առաւել 'ի ծերն քան 'ի դուստրն նը յառեալ էր Ըէօ. զգայր քաղցր առ նա 'ի պաշտմանի ինչ զօրութէ զոր ոչ կարէր ծածկել. ծաղկէր այտքն նը՝ խնկաւոր

տե

տեսիլն դիմաց յորում տեսանիւր ոխակալն վշտակրութեան միանգամայն և առաքինութեան, ծանրութիւն այն չքեղապանծ որ զխստութիւն իւր ոչ ունէր, այս եւս ներգործէր 'ի Լէօ զէլիս յարգանաց խառն ընդ սիրոյ։ Ծերունին եւս աչուցեալ անզօր տեսանելեօք իւրովք հայէր ընդ նա. մտադիւր իմն նկատէր զնա, ապայ ակնարկանէր յանմայիս, և թուէր բաղդատել զմտակէր զխնամս նց։ Ի մէջ այսր կշռութեան յոգւոց եւլանէր. պտուղն զոր ունէր՝ անկանէր 'ի ձեռանէ իւրմէ. աչք իւր լնուին արտասուօք, և ծերն պալարաղի դուռն գնէր զայնուսիկ ընչել՝ առ 'ի տեսանել և եւս զղիւցազն մայրս։

Անայիս՝ որոյ չէր երբէք և ոչ ժամ մի լքեալ ըզհայր իւր կարօտ 'ի խնամոց անտի իւրոց, տեսանէ զխղճկութիւն սրտի նորին, և ցաւագին յիշատակութեց զայն գրելով՝ առնու զառաջաւորականն իւր վարժանել զմէջ թախծութն 'ի սրտէ հօր իւրոյ։ Փափկիկ ձեռք նր ներբողաչանակութեն զայն առժամայն, կիջէ ձայն նր աղաչական և սրտոցուցիչ. նուագոյ՝ Լէօ՝ և նոյն ինքն ծերունին յակնձիւս կամ բերանաբացեալ։

Գեղապանծն Անայիս նուագէ զերգս ստեղծմանն աշխարհի յարանմանցեալ՝ զարփւոյն շնչով նորին լուսաւորելոյ 'ի բեղմնաւորել զերկիր՝ բուսուցանել պտուղս զատունս զբոյսս՝ զայլ ամենայն առողջարար դալարիս, զստեղծման մարդոյն անախտ անմահական, զնորուն անկանմանէ յայսմ երջանիկ վիճակէ, և զապականելոյն նր յարփիմանելոյ հեղինակէ ամ՝ չարեաց որք են յաշխարհի. այս թշնամի ազգի մարդկան հին աւուրց հասարակ արարածոց թշնամութեամբ էր զուգեալ երջանկութեան՝ խառնակելով զանհամար չարիս ընդ բարերարութիւն ամենայն՝ Այն մեհագունի, և սփռելով 'ի վերայ երկրի զմեղութիւնս ցաւովք հանդերձ.

Հուսկ յետոյ՝ զնուաճ օրինադրին յերկնից 'ի վերուստ առաքելոյ մարտնչիլ և յաղթահարել զարբեանս, պատսպարել զմարդն լքեալ և ընկճեալ՝ դարձուցանել 'ի պաշտօն ճշմարիտ, և կենդանացուցանել 'ի հոգի նոր զշառաւիղն առաքինութե՟՝ զոր հեղձուցեալ էր յանցանաց ։

Յայտ՛նուաճապերդութեան մասին այն արկանէ ծերունին առ Անայիս, և Անայիս ոչ բարբառէ զանուն օրինադրին ։

Նումայ և Լէօ ակնարկեն առ Մետիանոս, զարմանան ընդ սքանչելիսն զոր լուան, Ճանաչեն զմասնս վարդապետութի՟ հասարակաց կրօնին իւրեանց ։ Բայց սիրտք իւրեանց եւս առաւել շարժեալ են յազդողական պարզութե՟՝ 'ի վեհագոյն բարոյական խրատուց Անայի ; զոր գիտաց Անայիս շարամանել ընդ իւրն պատմութեան. Ձայն նորա անուշ և քաղցրաբարբառ, պատկառելին նորա՝ ակնածու դէմք նո՟ր՝ կրկնապատկեցին եւս զպաշտութե՟ նոցա ։ Նումայ փոխադրեալ վարկանի զինքն 'ի դիցն իսկ յապարանս, թուի ինքեան լսել զԱթենաս, զնորոգ խորհուրդս գուշակել ։

Իսկ երկոքին Ճանապարհորդք գնան 'ի ննջել, և 'ի վաղիւն յառաւօտու հանդերձին կազմին յուղի անկանիլ ։ Գաղտնի իմն փոյթ և բարեկամութե՟՝ տխրութե՟ արկանէ 'ի սիրտս նոցա վասն թողլոյ զխուցն զայն. կամէր նոց մտադիւր զաւուրս անդրէն անցուցանել. զնոյն յանկբարէին Անայիս և հայրն նորա ։ Անայիս ընթանայ 'ի պարտէզն քաղել զպտուղս առ 'ի տալ Նումայի. ծերունին պատրաստէ զԼէօ տանիլ զհատադաղակ մի գինւոյ ։ Երկոքին եւս հայրն և դուստրն ցուցանեն ուղևորաց զշաւիղս դիւրագոյնս, և զլուխ ածեն յանձն առնեն նոց գալ միւսանգամ 'ի հովիտս յայս ։ Նումայ և Լէօ խոստանան նոց. Հուսկ յետոյ հառաչանօք յուղի

ան

անկանին ։

Երկոքին դիւցազունքն առանց ընդ իրեարս խօսելոյ դարձուցանեն առէպ զգլուխս իւրեանց առ խրճիթն զոր ոհանձին թողուլ ։ Իւրաքանչիւր յերկոցունց անմռունչ ազդ առնէ անձին զոր ինչ միանգամ ետեսն եւ լուաւ ։ Օտարոտի եւ անծանօթ կրօնն այն՝ զորոյ անայիս նուաճեաց զամենայն խորհուրդս, աղօթքն այն պաղատանաց առաջի հրոյն ՚ի տուրս իմն բարբառ՝ այսմ չփոթէ զմիտս եւ շնորհէ զմխիթարութիւն նոցա ։ Յապուշ կրթի Լէօ ընդ հակառակութիւն ներքին զոր կրէ առ ոմն անծանօթ, որ ոչ թուէր ծնեալ յատելոյ ։ Նումայ զգայ զբարեկամութիւն ինչ առաւել կաթոգին քան զնոյն սէրն ։

Հուսկ յետոյ քան ՚ի բերան առնու Նումայ եւ առաջարկէ բարեկամին իւրոյ անդրէն ընդ կրունկն դառնալ, առ ՚ի կալ մնալ առընթեր անայիսայ ։ Լէօ եւս մտադիւր իմն յօժարի, այլ կամի տեսանել միւսանգամ զնախնին իւր դադար եւ ողբալ զամ՝ մի եւս ՚ի վերայ գերեզմանին միրասալոյ ։ Նումայ ողջունէ զտենչանս զայսոսիկ ։ Ամբոխութիւն սրտի զոր կրէին երկոքին եւս, յուշ առնէ նոցա զտխրական զմտածութիւնս ․ Լէօ խօսի զկամիլլայ ․ նումայ զհերսիլեայ ընդ համեստին անայիսայ բաղդատէ ։ Փղձկեցուցիչ իմն տխրականութիւն պատէ զնոքօք, լան ՚ի միասին եւ սրտապնդեն զիրեարս ։ Ո՞վ սխրալի զօրութեան բարեկամութեան, որ խառնէ զքաղցրութիւն ՚ի վիշտս որոյ միանգամ կարեկիցն լինին, եւ որ ՚ի նոյն իսկ յաղետից զհեշտութիւն իմն ընծայեցուցանէ ։

՚Ի վախճանի յետ երից աւուրց ճանապարհի նշմարէ Լէօ զխուղն իւր ։ Ընդ տեսանելն զկայ առնու, եւ զօրութիւնք իւր քաղեն ։ Նոյնհետայն օժանդակեալ ՚ի նումայէ՝ յառաջ խաղայ ․ եւ իւրաքանչիւր ծառ՝ իւրաքանչիւր վայր՝ իւրաքանչիւր առարկայ զոր ճանաչէ,

յի

յիշեցուցանէ նմա զյիշատակ մի ախորժելի ։ Ընդցնծայր եւ զուարճանայր ընդ միրտալայ ․ անդանօր լեռէր խորատուսց նորա ․ աստէն տնկէր զծաղիկս առ 'ի զալ մատուցանել նմա ․ բովանդակն նկարագրէր նմա վերստին զժամանակ մի խանդաղատանաց եւ երջանկութեան ։ Աչք իւր արտասուաթոր ոչ յագեցին 'ի դիտելոյ յայն՝ որք այնքանիցս տեսեալ են ։ Օդն զոր շնչառէ նեղէ զնա , յիշատակութիւնք՝ զորս 'ի միտս նկարէ՝ տաղտկացեն զնա , մաշեալ է սիրտ նորա , այլ սակայն թախծութիւն նորա չէ թափուր 'ի ծածուկ իմն զուարճութենէ ։

Ընդ հասանելն առ դուրս տաճարին՝ 'ի գուճս իջեալ անկանի 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր , ապա ամբարձեալ զձեռս իւր ուղղէ զբանս զայս առ դիս դաշտայինս ․ ողջո՜յն ձեզ չնծուհիք ծաղկանց եւ մարգաց , որք պաշտպանեցիք զմանկութիւն իմ , եւ զորս այրքան հրճուանօք տեսանեմ վերստին՝ ողջո՜յն ձեզ ։ Հաճեցուցէք շատանալ յաջողիլ վայրկենի կաթոգին ուխտիւքս զոր ձեզ ուղղեցի ․ վաղվաղակի հանից ձեզ մասն 'ի դաշտահանդս 'ի կաթանէ զոր արարից 'ի վերայ գերեզմանի մօր իմոյ ։

Յետ բանիցս այսոցիկ յառնէ , եւ մտանէ 'ի տաճարն իւր ։ Ո՛ր զարմանալիք 'ի վերայ նորա լինին , 'ի գտանելն վերստին նոյնպէս ամենայն եթողն ։ Մեհեանն իւր է 'ի կարգի եւ 'ի տեղւոջ իւրում ․ տեսանէ ըստ զնախնի նկարս իւր , զմանկութեան զանօթս իւր , զառաջին երգեհոնափողն որով նուագեաց զերգս կամիլլայ ։ Տեսանէ դարձեալ զայն եղեգնափողն , համբուրէ կաթոգին ։ Ապա թողու զնա՝ փութայ գնալ 'ի գերեզմանն միրտոնայ , եւ գտանէ զարդարեալ նորոգոյն ծաղկաք ․ բազում այլ ծաղկիկք թարշամեալք վկայեն զի բարեպաշտին ձեռն ոք նորոգէ զնա զօր ամենայն ։ Նա 'ի ծունր

իջեա

իջանէ, ոռոգէ արտասուօք զսէզն զդալարագեղ և խոտաբուսեալ 'ի վ՟ր այսր գերեզմանի . օրհնէ զձեռն անծանօթ, որ փոյթ 'ի մէջ առնու վայելչացուցանել զայն ։ Նուման լուռ կեցեալ կայ, աղօթէ առընթեր բարեկամին իւրոյ, և լինի հաղորդ ամ՟ ըղձանձկութեանց նր ։

Ի ժամանայն ձգէ առ նա Լէօ զձեռն, կարդայ զանունն Կամիլլայ, ածելով զնա դէպ 'ի քարաժայռն և 'ի հասանս յայնտեղիկ բաղձալից յիշատակի իւրոյ ։ Այլ զայս առնել փութայ և ժամանէ 'ի տեղին տենչացեալ, և առաջին առարկայն զոր տեսանէ, այն է Կամիլլա 'ի վ՟ր ժեռին ։

Առ այս տեսիլ աղաղակ բառնայ Լէօ, և 'ի տագնապ շտապոյ անկեալ երթայ առ Կամիլլա ։ Այսթուռ այս հայի 'ի թիկունս կոյս՝ տեսանէ զԼէօ, և յառաջ քան զպատահելն միմեանց՝ երկոքին ևս ուշաթափ լինին ։

Նուման յօգնութիւն նց ժամանէ, և թափէ 'ի նոցանէ զթմրութիւն ։ Նոյն ինչ բացին զաչս իւրեանց՝ խնդրեն զմիմեանս և գտանեն ։ Դու ես այն՝ ասէ Լէօ, դու ես՝ վասն որոյ այսքան ընդ երկար սուգ առեալ ողբայի ։ Ո՜վ անմահք՝ եթէ երազ իմն է այս՝ քաղեցէք զհոգիս իմ 'ի սթափիլն իմ 'ի քնոյ ։

Կամիլլա՝ խանդակաթն Կամիլլա գիրկս արկանէ նմա և հաւաստէ ասելով, այո՛ ես եմ այն, ես եմ կաթոգինն քո այն հաւատարիմ, զոր ոչ ինչ մարթի ևս հանել 'ի քէն ։ Ընդ քեզ եմ միշտ անընդհատ՝ ընդ տեառն սրտի իմոյ, ընդ այնմ՝ որ փրկեաց զկեանս իմ, որում միայնոյ պահեալ է իմ զայն ։

Զայս ասելով՝ գիրկս արկանէ նմա կաթոտն Կամիլլա, կրկնէ ասելով՝ ես եմ այն . մի՛ լար՝ ասէ ցնա, զգուշանօք ժպտի ընդ երեսս նր՝ և 'ի ծիծաղելն իւրքն ևս արտասուէ . երեսք նորա թէև արտասուաթոր, սակայն զխնդութիւն և զերանութիւն ընծայեցուցանեն զպատկեր, համայոյն ոսկեխափայլ ամպոց այնոցիկ, որք

յօ

ցօղէն 'ի վ՟ր ծաղկանց զանձրև իմն քաղցր, մինչդեռ արեգակն խառն մի նուաղեցեալ յայնցանէ՝ Թափանցէ ընդ այնս ճառագայթիւք իւրովք՝ և փայլեցուցանէ ևս զհեղանուտ մարգարիտս, զորս անեղան նոքա ։

Ո կնի առաջին բոյսեկից ցնծութեն և սիրոյ նուիրելոյ, ածէ չէօ զշքեղապանծն իւր զկամիլլա 'ի նմին կոյս 'ի նոյն վայր, ուր երբեմն խօսէին 'ի միասին զսիրոյ իւրեանց ։ Աստանօր աստանօր՝ ասէ ցնա, կամիմ լսել զոր ինչ միանգամ՝ անոյշք ընդ պղուխ քո անցին ։ Խօսեցայ առաջի բարեկամիս այսորիկ, խելամուտ է սա ամ՟ գաղտնեաց մերոց, գիտէ զսէր իմ՝ որպէս ես ինքն, և դու իսկոյն տայցես նմա զքոյդ, յորժամ ծանիցես զհաւատարմութիւն սորա ։

Յայնժամ՝ կամիլլա արկանէ 'ի նուագս զհայեցուած մի լի քաղցրութ՟բ ․ բազմի 'ի մէջ երկուց դիւցազանց, և շատացուցանէ այնօրինակ զփափագ նց ։

Աջողեցին ինձ դիք, պատճառեցին զիս յամուսնութէ միոջէ՝ յորմէ զարհուրէի առաւել քան 'ի մահուանէ ։ Արդէն անսացեալ էի հօր իմում, փրկեալ էի զնա 'ի պատերազմէ միոյ՝ որում ոչ զօրէր 'ի գլխի հարկանել ։ Թագաւորն մարտակից խոյս տուեալ էր 'ի սահմանս իւր, չոքեալ էի և ես ընդ դեսպանս տեղեմենոսայ արքային սաղենտինացւոց՝ նաև միով զօր առաքեալ էր վ՟ր իմ՝ պատգամաւորս այս ։ Ո՛չ բնաւ ասացից քեզ՝ չէօ իմ՝ ազնիւ յոր արդեօք խորհուրդս որոճէի ․ զի սիրտք մեր կարի քաջ հասու են իրերաց, որոց չէն պէտք ծանուցման այնր ամի զոր միանգամ կրեցին ։

Աւաղ աստուածազարդապատ հողմնոյ նաւէաք հանդէպ սաղենտինեայ՝ այն ինչ մերձ 'ի մեռանել թուխպք թանձրամածք համախմբեալք 'ի վերոյ մեր ծածկեցին զերկինս յաչաց մերոց՝ և զաւուրն նսեմացուցին զլոյս ։

Ամ

Ամենայն մանկունք Եօղէի՝ արձակեալք ամբոխեն ըզծովս և զամեհի փրփրածին կոհակս յարուցանեն. զարհուրելի խաւար իմն գիշերանմանն պատէ զերեսօք ծովու. փայլատակունք զամպս պատառեն. շանթք սարսափելիք՝ բուռն հողմունք՝ ալիք անհնարինք՝ ամ՟ միահամուռ յանդիմանն առնեն մեզ զպատկեր անհրաժեշտ մահու։

Օ՜, այլ իմն ոչ զինաս ածէր յայնժամ բայց 'ի քէն ժվլէօ, օրհնէի զդիս, գոհութի մատուցանէի ծփանաց ծովու, երանի կարդայի ինձ զի ձողոպրէի 'ի ձեռաց ատելեմնաայ, և ոչ ես այլոյ իմիք սպասէի, քան վայրկենին տեսանելոյ զինդ մէջ խորտակումն լաստին մերոյ։ Ահա ժամն այս. զօրագլուխք՝ զօրականք՝ նաւաստիք ամենեքեան ծովահեղձոյց կորեան։ Ես իսկ ընկղմեալ 'ի ջուրս ծովուն. բայց ոչ լքանէի սիրտ իմ, և ոչ ակարանայ զօրութի իմ։ Մերաորին անդրէն մակընթացն 'ի վր միանաց ծովու, կալեալ զբեկորս մի նաւուն, համարձակիմ նոխա յուսադրել զիս ազրեցուցանել զկեանս իմ վն քո։ Յարել 'ի ծովածուփ փայտս յայս կոծեալ 'ի հողմոց և 'ի կոհակաց, մինչ յաղջամղջին խաւարին՝ մինչ 'ի ժանիս մահու՝ ասէի ցիս, չէ՛ք ինչ զանգիտել, քանզի հաստատեալ եմ մեռանիլ՝ կամ կեալ վն առնելի լէօի իմոյ։

Աւուրց երկուամսոց օգնէր սէրն յիմն պահպանութ։ Տակաւ առ սակաւ հանդարտի ծովն, որոյ ալիք զփրփրամբք անկանելով մեղեխն մինչ յափն կղզւոյ զերայոն զոր ոչ թողուլ ընտա 'ի բայ։ Մեր ուրեմն զկանխ նշմարեմ, երանեմ անտաշխարհ. և 'ի ծունկս իջեալ գոհութի մատուցանեմ՝ դիցն առաւել վն ձողոպրելոյ 'ի տելեմնաաց քան 'ի մահուանէ։ Զայնժամ շուրջ զինև՝ տեսանեմ զբարձրաբերձ լերինս։ Զողագործ ուն ծանոյց ինձ լինել իմ յապաւէնս առ սարսափելի հաշակաւոր լերինն դարձմանս : Այս մշակ տանի զիս 'ի հիւղն իւր · երեք աւուրք հանգստութեան կազդուրեալ հաստատեցին զիս : Մնացեալք ոսկի դահեկանօք զորս ընդ իս տանէի՝ հայթհայթեցի զաղեղն մի և զնետս, և վարձաւորեցի զերկրագործն :

Միայնակ՝ առանց այլոյ իրիք օգնականի բայց յաղեղանէ իմմէ, դէմ դնեմ՝ փնտռել յապեննինս գտանել զխրճիթն քոյ : Երկայնաձիգ լինելոյ էր ճանապարհն, շաւիղք անծանօթք էին ինձ · բայց նպատակ ճանապարհի իմոյ դու էիր, ինչ ոչ կարէր զիս վհատեցուցանել : Տեսանեմ զիս 'ի ճանապարհի՝ առանց առաջնորդի՝ առանց ուղեկցի, գնալով 'ի գիշերի առ 'ի հասանել վաղագոյն, անցանելով ընդ գետս՝ ելանելով ընդ ժայռս, և ոչ երկնչելով զպատառօղ գազանս պարթուցանել : Ընդ հակառակն խնդրէի զանտառս առաւել մթագոյնս, զանապատս առաւել անկոխս՝ առ ահլին ծանուցել լինելոյ, կամ՝ պատահելոյ ապենինացւոյ ուժէք փրծելոյ իբրև զիս 'ի նաւաբեկութենէ անտի :

Երկիւղն իմ չէր վարկպարազի : 'Ի սահմանս սամնիտացւոց, յերկրին փրենտանեանց՝ այն ինչ ընդ մոյգն ընդ առաւօտն ելանէի յայրէ միոջէ՝ ուրանօր անցուցեալ էի զգիշերն, լսեմ զբարբառ ձայնս մարդկան, և որոշեմ 'ի բանս նոցա զանուն կամիլլայ : Ահ և դողումն կալնու զիս · ղօղեալ յայրին՝ ուշի ուշով ունկն դնեմ, համանգամայն ճանաչեմ զնա լինել բազում զօրականս նաւուն մերոյ, որք խօսէին ընդ միմեանս զմահուանէ իմմէ, և որք անտրտունջ և անկասկածօր դարձնելով զինքեանս յերկիր օտար՝ խորհէին յելուզակութիւնս պարապիլ :

Յոյժ ապաստան լինէի 'ի լսելն զնոսա, էի նման եղջերու մի վհերամ՝ որ թագուցեալ 'ի մէջ մացառաց տեսանէ 'ի կողմաց խուրոյ անցանել զխաղանք մի սովալըլուկ շունչ: Թողում` զնաւ զզօրականս զայսոսիկ, և 'ի ծածկս խոնարհեալ ընդ ելանելն իմ` յայրէ սնոտի, ո՛վ Արտեմիս` աղաղակեմ, չաստուածուհի կախթողին սրտից, դու ես որ փրկեցերն զիս յաղեաց ծովու. այլ առ ի՞նչ պիտոյ է ինձ բարերարութի̅ քո մինչ հեռի եմ անտի` զոր սիրեմ: Ո՛վ գեղապանծդ 'ի դիս` յիշեա՛ զարտասուս, զոր ետ քեզ աչերն հեղուլ. արդար է սրտի քում հասու լինել ցաւոյ իմիք, զորոյ առնել է զփորձ: Ուղղեա՛ զգնացս իմ` առ տարփալին իմ, հաճեա՛ց ցուցանել ինձ զճանապարհն ընդ որ 'ի ձահ է ինձ գնալ: Դշխո՛յ դից և մարդկան` եթէ անսայցես ուխտից իմոց, խոստանամ քեզ` այո՛ երդնում քեզ կանգնել զսեղան մի 'ի նմին իսկ վայրի ուր գտից զէօ, և առաւել կայտառն 'ի խոյոց նորա քեզ ձենձերեսցի:

Մինչդեռ տակաւին բանք 'ի բերան իմ էին, աղաւնիք երկու օդահերձիկ խոյանալով գան դադարին առաջի իմ: Ողջունեմ` զայս աջողակ գուշակութի̅. դիտեմ 'ի թռչունս Արտեմեայ և գնամ` զհետ ն̅ց յուսով: Երկոքին աղաւնիքն անանջատ 'ի միմեանց մերթ սրավար թռուցմամբ քերեն զերկրաւ, մերթ նստին 'ի վ̅ր գալարագեղ թփոց յուզելով անդրէն զճարակ իւրեանց, բայց ոչ երբէք այնքան անդրանեան` մինչև վայրկեան մի ևս աներևութանալ յաչաց իմոց: Հուսկ ապա` յետ ինն աւուրց ճանապարհի, նշմարեմ 'ի հեռուստ զհիւղն քո, տեսանեմ զաղաւնիս դադարել 'ի տանիս: Անդրէն թռչի տրտնջել նոցա և ճիչեն տրտամաձայն, և համանգամայն ճախր առեալ ծածկին յաչաց իմոց:

Սակաբերեան` Լէօ, մանկաբերեան իր արդեօք եղև ցնծութիւն իմ. շնորհակալ լինէի զարտեմեայ, գոհանայի զաղաւնեաց, գոհաբանէի զդիս ամենայն:

Այլ աւա՛ղ, հաստատիմ 'ի հիւղն քո, և աչք իմ խնդրեն զքեզ, ձայն իմ կոչէ զքեզ 'ի զուր: Յածիմ տագնապաւ շուրջ զխղճիւ քով, ամենայն ուրեք զամայութիւն տեսանեմ: Առժամայն նշմարեմ զգերեզման մի, տապանագրին որոյ զեկուցանէ ինձ ըստ հովանեաւ նոր հանգչել միրտալեայ: Ո՛հ սիրելի իմ՝ նուաղ ինչ ընդհատ 'ի փչմանէ շնչոյս լինիմ առ այս աղէտ վերջին: Ամենայն ինչ վճարեալ է. գոչեմ յարտասուս ցնդելով, աներկեան սլանէ զհետ իմ, երթայ խնդրել զնա 'ի սաղենոյն, ուրանօր լռեսցէ զնաւաբեկութիւն իմ, մեռանիցի 'ի ցաւոց:

Ոչ երկուճանայի, զոր ամենայն կրկնէի 'ի միտս իմ, և յամենայն աւուր շրջէի ընդ երկիրս յուսով գտանելոյ զքեզ: Եթէ տակաւին կենդանի է՝ ասէի ցիս, եկեսցէ դարձեալ անշուշտ, եկեսցէ միանգամ 'ի գերեզման մօր իւրոյ, 'ի յառաջին ապաւէնն սիրոյն մերոյ: Թէ լեալ իցէ նորա թագաւոր՝ թէ ծառայ, յետ որոյ կարասցէ լինել ազատ՝ դարձուսցէ զգնայս իւր յայսկոյս: Գիտեմ ես զլէօ, վայելքս այսոքիկ բաղձալիք բարեպաշտութեան նորա, ապարոյն առանց երկուճանաց սպասել նմա:

Յուսովս այսորիկ բնաւորիմ 'ի խղճի քում, ժողովեմ զհօտն քո, պէտ յանձին կալնում որոց միանգամ քո էին: Այս հոգարկութիւն ամենաքաղցր զբօսեցուցանէր զիս 'ի տաղտկութիս իմ. մինչքան ուրախ էի զայլ իմն, բայց 'ի քոյ ոչ ունիլ ճոխութիւնս, մինչքան բաղձալի էր ինձ խորհիլ՝ թէ 'ի դարձին քում համարս տալոյ էի քեզ բարեաց քոյ: Հանապազօր ածէի զխաշինս քո յարօտ, զոմն աւուրս զարդարէի ծաղկամբք զշիրիմ մօր քո, կարդայի զատուճեր նորա ազնիւ, և հայցէի 'ի նմանէ ածել զքեզ առ իս: Ուխտք իմ լսելի եղեն, տեսանեմ զքեզ վերստին՝ ո՛ լէօ, զոր ինչ միանգամ՛ կրեցի ոչ ինչ են ։

Զայս օրինակ խօսի կամիլլա ․ լէօ ողջագուրէ զնա , մինչև բարեպաշտիչն նումայ կանգնէ զսեղան մի 'ի կոշտից , և փութայ ընտրել զխոյն զոր ուխտեալն էր կամիլլա ափրոդիտեայ ։ Բերէ զնա 'ի վ̄ր սեղանոյն , երեքին ևս 'ի ծունր իջեալ պտ̄րագեն զձեռսն ։ Ապա դառնան 'ի հիւղն , և 'ի վաղորդենէ անտի այսր վայելչագոյն աւուր՝ երկոքեան սիրահարք պսակեալք ծաղկամբք գնան 'ի գերեզման միրտալայ ։ Նումայ առաջնորդէ նց̄ , նումայ՝ որ անդստին 'ի մանկութենէ իւրմէ հրահանգեալն էր 'ի պաշտօն զոհագործութե̄ , հանէ զոհս ստուերաց զերկուս խաշինս , և Կերեսայ պաշտպանին իւրոյ զգառինս չորս ձենձերէ ։ Կարդայ առ նա՝ հայցէ 'ի նմանէ 'ի բարձանց երկնից օրհնել զամուսնութի̄ն կամիլլայ և լէօի , յարէ զձեռս նց̄ , միաւորէ ըն̄դ յանուն կերեսայ և միրտալայ ․ ապա 'ի պատիւ նց̄ ողջակէզս առնէ զպանդումն , և դառնայ ընդ փեսային և հարսին երգելով զերգս հարսանեաց ։ Ո՛վ քաղցր և պարզ հանդէս՝ կարի ընդհատ 'ի դղրդարձակ և ցաւալի հարսանեաց իշխանաց ․ զուգաւորութի̄ սրտացուցիչ՝ որ զայլ ոք վկայ ոչ ունի բաց 'ի դից , զայլ երաշխաւոր բաց յառաքինութե̄ , զայլ քրմապետ բաց 'ի բարեկամութե̄ ։

Բարեբաստութի̄ն երկուց զուգակցաց ուշ առնէր նումայի զհովիւն զուարճալի , զայլոյ ումեքէ ոչ խօսէր՝ բաց 'ի յանայիսայ , զայլ իմն ոչ խորհէր բաց 'ի հովուհւոյս աստի , և տայր զանձն 'ի խանդաղատանս անխառն , զորս ոչ վարկանէր ծագեալ 'ի սիրոյ ։ Զոր միանգամ զգայր վասն անայիսայ , էր կարի ընդհատ յայնմանէ՝ զոր զգացեալն էր վասն հերսիլեայ ․ այս առաջին կիրքս յայն սահման թշուառութե̄ հասուցեալ էր զնա , մինչ զի նումայ յանուանէ և եթ սո-

րոյն

քոյն զգուշանօք հարեալ տախտակէն, կերպարանէր բարեկամութիւն անուանել զմխիթարականն այն հակուածն՝
որ ձգէր զնա առ Անայիս:

Յետ աւուրց ոմանց նուիրելոյ հրճուանաց նորոգ ամուսնացելոյ, առաջարկէ Նումայ զչուն առ հովիտն վայելչագեղ: Ապշի Լէօ. Նումայ զամօթի հարեալ՝ ջանայ յուշ առնել նմա՝ զի՛ նոյն ինքն էր ծերոյն խոստացեալ: Դիւցազն մայրս յանձն առնու ցնծութե՟, և Կամիլլա եւս յարի ՚ի նմին: Երեքեան եւս զինուվառեալք ՚ի չու անկանին, և թեթեւացուցանեն քաղցր զրուցաբանութե՟ իւրեանց զծանրութ՟ն տաղտկանաւոր
ճանապարհին այնորիկ:

Տագնապաւորութիւն Նումայ յառաջէ միշտ քան զԼէօ և զԿամիլլա, առաւել մերձենայ առաւել վաղվաղէ. և այն ինչ տեսանէ զհիւղն՝ սրտավառ փութով երագէ յընթացս իւր:

Անշուշտ դիք զնա վարեն: Ընդ հասանելն ՚ի հովիտն՝ լսէ զձայն աղաղակի դողման, երագէ փութայ մտանել, տեսանէ զծերն ՚ի ձեռս յորդւոց աւազակաց որք ընդ երկիր քարշէին զնա, և բարձրացուցեալ են զսուր ՚ի վ՟ նր՟: Առաւել ՚ի տապ՝ զսուսեր նր՟ Անայիս, զոր յափշտակեալ տանէին ոչ գթալով ՚ի կականմունս նորա, թաւթափի ՚ի մէջ այլոյ բազմութե՟: Ո՛ ինչ սրտացէ Նումայ, Անայիս և հայրն նորա են ՚ի մէջ հաւասար վտանգի, զո՞ յերկոցունց փրկեսցէ զառաջինն, առ ո՞ փութասցէ: Առ եւս ապիկարն: Հրոսէ ՚ի վերայ եղեռնաւորաց՝ որք առաւել նեղեն զծերն, սրախողխող առնէ զերիս, յարձակի ՚ի վերայ այլոց, բուռն զօրութեամբ սրտմտութեան իւրոյ վարէ զնոսա, մեծագոչ ձայնիւ աղաղակէ առ ՚ի յինքն ձգել զայնոսիկ որք յափշտակեալ տանէին զԱնայիս: Նեղուցեալք այնոքիկ կան առ ձայն աղաղակի իւրոյ,

մին

մայրայրին ամենեքեան ընդ դէմ Նումայի ։ Յայնժամ ոգի առնու Նումայ, վասնզի իւր է միայն՝ յորմէ ոչ զանգիտէ բնաւ ։ Անայիս է առ հայրն իւր, Նումայ ախոյեան առնէ երկոցունց զանձն իւր, միայն 'ի դիմի հարկանի աւազակաց բոլորեցունց, զայրին նոցա ընդ հարուածովք իւրովք ճապաղէ, այլ իւրն զելարապանակ իւր նեղելէ ։ Հինգք 'ի թշնամեաց դիտապաստ յերկիր մածանին, այլ որք միանգամ՝ կան մնան կամին ըզՆումայ յոգնոյ պարտել առնել ապաստան ։ Նումայ՝ քաջակորովին Նումայ վեհերոտի ․ և այն ինչ մերձ էր 'ի վատթարել, մահակն Լեօի իբրև զշանթ իջանէ 'ի մէջ եղեռնագործաց այնոցիկ ։ Կամիլլաս՝ որ ճանաչէ զնա գոլ զօրականս աւէնախնայցիս փրծեալս 'ի նաւաբեկութենէ իւրմէ, թափանցէ նետիւք իւրովք զամենն առ որս միանգամ՝ մնայրթի նշանադէտ լինել ։ Նոյն իսկ հայրն անայիսայ յառնէ յերկրէ և կալեալ զսուսերն միոյն 'ի թշնամեաց պաշտպանէ նովաւ զպաշտպանօղս իւր ։ Համանգամայն որոց ճարակ լինին աւազակք ամենեքեան ։ Անայիս գիրկս արկանէ հօրն իւրոյ ։ Նումայ և Լեօ ոռոգանին շնորհակալութեան արտասուօք ։

Նումայ է վիրաւորել ։ Նրկք ընդ երկար միջութեան, արիւնն զոր եհեղ յիւրմէ, փոխարկութիւն միանգամայն յերկիւղէն կորուսանելոյ զանայիս 'ի ցնծութիւն ապրեցուցանելոյ զնա, այս ամենայն թափեալ էր զամենայն զեղայ մնայց կարեաց նորա ։ Տանին զնա 'ի հիւղն, ծառայողին 'ի հպատականս զնովաւ ։ Ծերունին և Լեօ քննեն զվէրս նորա, դնեն 'ի վ̄ր առ ժամն կղեղ ինչ պատրաստական ։ Պատարաղին անայիս մերձի, սեղմէ մեղմաբար զձեռն Նումայի ․ դու փրկեցեր՝ ասէ ցնա՝ զկեանս իմ, և ապրեցուցեր զհայր իմ յաւաջ քան զիս, կրկին կենաց պարտաւոր եմ քեզ ։ Բանքս այսոքիկ երկնային իմն սպեղանիք են վանա

դիւ

դիւցազին, զճար պատասխանելոյ նմա ոչ ունի, բայց աչք իւր զուարթացեալք դառնան առ անայիս, և կուսական սիրալիր հայեցուածովք զոր ինչ միանգամ լեզուն ոչ զօրէ բարբառիլ:

Վէրք Նումայի խորհրդոյնք էին, այլ ոչ վտանգաւորք, միայն հարուստ աւուրց պէտք էին առ 'ի բժշկել զնոսա: Անայիս և հայր իւր, Կամիլլա և ամուսին իւր՝ փարէին անդադար զմահճօք նր̅: Բարեկամութիւնն սիրայորդոր՝ որ սկսեալ էր արդէն ընդ մէջ ծերոյն, և մաւր դիւցազին, օր ըստ օրէ աճեալ զօրանայր: Անհանգիստ էր Լէօ առ 'ի ճանաչել զայն, որ արդէն էր այնքան իւրն սիրելի, որպէս և Նումայ տենչայր լսել զպատմութի̅ հօրն անայիսայ: Յաւուր միում՝ մինչ էին ամենեքեան ժողովեալ առ հիւանդն, երկոքին բարեկամք միաբան աղաչեցին զծերն վասն պատմութեանս այսորիկ, և ծերունին՝ զկնի ամբառնալոյ զաչս իւր յերկինս, սկսաւ զայս օրինակ:

Ծնայ ես 'ի բակտրիա 'ի սահմանս նախնի թագաւորացն պարսից, և անուն իմ՝ մեծահռչակ յաւէտ թերևս է հասեալ մինչև առ ձեզ. զրուան յորջորջի անուն իմ:

Առ այս անուն բարգաւաճ՝ Նումայ, Լէօ և Կամիլլա ակնարկեն առ միմեանս հիացմամբ, և պատկառանօք յարգանաց հայէին 'ի ծերն: Վաթոռն անայիս՝ որ ընթեռնու 'ի սիրտս նոցա զակնածութիւնն զոր ունէին նոքա առ հայրն իւր, քաղցրաժպիտ դիմօք զշնորհակալութիւն իւր ցուցանէ նոցա:

Զրուան հետևի ասել: Հայր իմ ընկեցեալ յաթոռոյ 'ի թագաւորէն ասորւոց, թափառեցաւ ողոքաւոր յամենայն դիմանս ասիոյ, և եթող ինձ ժառանգութիւն զթշուառութեանցն հրահանգութիւն և զիրաւունս առ գահն պարսից: Հնարեցայ աջողել

զիրա

զիրաւունս իմ, գումարեցի զոմանս գունդս զօրաց, դարձայ 'ի թագաւորութիւն հաւուց իմոց : Գտի ըզպարսկաստան երջանիկ ընդ իշխանութե՟ իմաստնոյն Փուլոյ թագաւորին նինուէի . այլ այս մեծանուն թագաւորէր արդարութե՟ : Տեսի զի ժողովուրդք իմ ոչ բաւէին ժամանել փոխել զաւէրն : Ի ժամէ անտի յայնմանէ հրաժեշտ առի 'ի նպատակէ իմմէ, յանցանք իմն համարեցայ խուզել զերջանկութի՟ ժողովրդեան միոյ ողջոյն՝ 'ի պատճառս ընդունայն խրատուանց որ յօգուտն իմ՝ և եթ հայէին, և ոչ կարացի հաւանիլ ընդ կոտորած բիւրաւորաց առ 'ի յաջորդել զմիապետս մի, զոր ոչ կարէի գերազանցել յառաքինութե՟ : Արձակեցի զզօրս իմ, թագուցի զգուշութեամբ զազգատոհմն իմ . անձնահարեցի զխլրտմունս ամբարհաւաճութեան, յորմէ եւ մարդկային ոգին չէ թափուր, և զիս բոլորովին գիտութե՟ բնութեանն նուիրելով, սկսեցի առաւել իմաստուն ոք լինել քան թագաւոր :

Շրջեցայ ընդ ասիայ ողջոյն, խնդրեցի առքուրմն, առ սինէացիս՝ առ իմաստասէրս գանգէսի, զայս իմաստութի՟ որոյ կաթոգին էի . Ամ՟ ուրեք գտի զունայնապաշտութիւն առաւել հաճոյ մարդկան՝ քան զճշմարտութիւնն : Ճշմարտութիւնն՝ որոյ ազնուութիւնն ողջոյն է լինել պարզ, ոչ կուրացուցանէ ամ՟ մոլորութիւնն . յուսակտուր եղեալ պատահել այնմիկ 'ի վերայ երկրի, ցանկայի մեռանիլ :

Մեծն՝ արամազդ 'ի բարձանց աթոռոյն իւրոյ խոնարհեցոյց զաչս 'ի վերայ իմ, ճառագայթեաց 'ի խոնարհ 'ի սիրտ իմ զմաքուր շող մի լուսոյն իւրոյ : Խորհեցայ յընթացս հոլովման ամաց քանից յանապատի միոջ, և միտք իմ՝ վկայեցին ինձ՝ թէ ոչ կարէր լինել բայց մի Ած՟ միայն, և այս Ած՟ տուեալ էր ինձ զհոգի մի, որ զկնի ապականութեան մարմնոյս մնայր

կեն

Կենդանին առ 'ի լինելութեան զմարմնս, կամ զպատիժ ։ Սիրտ իմ՝ ասէ ցիս՝ թէ ա՟ծ բարի է, թէ չարն՝ զոր տեսանէի 'ի վերայ երկրի, ոչ կարէր լինել գործ նորա, թէ ծածկեալ էր այն 'ի չարաչար ևսէ մինչէ թշնամւոյ ա՟յ և մարդկան ։ Ատեցի զայս ևս ։ Երկրպագի արարչին իմոյ, պաշտեցի զնա յեւս գեղեցկագոյն 'ի գործս իւր՝ յարեգական, լուսափայլ պատկեր կատարութեան՝ վեհութեան՝ և 'ի վեր քան զամենայն՝ բարերարութեան նորա ։ Նկատեցի 'զի լուսաւորս այս բուսուցանէր զարմտիս վասն օգտութեանց պարարից ասորւոց, վասն ամենայն ժողովրդոց երկրի տարբերելոց եղանակաւ զա՟ծ պաշտելոյ ․ եզրակացուցի թէ այս ա՟ծ վեհափառ 'ներող՝ սիրէ զամենայն մարդիկ, համբերէ որոց միանգամ՝ զբարեացն վնասեն, 'ներէ տկարութեան, և պատժէ զհալածանս ։

Ներքեւան լեալ զ յաւիտենական ճշմարտութեայս այսոցանէ, զմտաւ ածի զի չէր ինձ անկ զայնքան մեծագոյն բարի վայելել առանձին ։ Պարտաւոր վարկայ զայնս տարածել ․ եկի յանապատէ իմմէ, ասացի ժողովրդոց՝ սիրեցէք զաստուա՛ծ և զմիմեանս, պաշտեցէք զարարիչն յարեգական՝ 'ի ջահս աշխարհի, 'ի հուր՝ յոգին ամենայնի ։ Եղերուք մաքուրք 'ի խորհուրդս 'ի բանս և 'ի գործս ձեր ։ Արարէք զբարիս ամենեցուն յորմէ և իցեն կրօնք, կեցէք և մեռարուք հաւատարիմք թագաւորին ձերոյ, հատուցէք զհարկս առանց տրտնջելոյ, գործեցէք զերկիր զի վաստակիցն է ծառայել ա՟յ ․ և յորժամ՝ բարժամինէք 'որդեօք այս ինչ գործ բարի է կամ չար, 'ի բաց կացէք յայնմանէ ։

Ահա այս էր վարդապետութի՟ իմ, զոր տարածանեցի յեփրատայ յինդոս ։ Ժողովուրդք լսէին և հաւատային ինձ, աշակերտք իմ օր ըստ օրէ բազմանային ։ Եթէ կամեցեալ էր իմ՝ զինու վառել զնոսա, մարթ էր ինձ նուաճել զատխոյ. բայց մարդասիրութիւն 'ի սրտի իմում գերազանցէր քան զսէրն իմոյս օրինաց. մնադիւր տեղի տայի յուսոյն տեսանելոյ Թագաւորել օրինաց այսոցիկ, եթէ արեան ճապաղման պէտք լինէին։ Ես ինքն ցրուէի զաշակերտս իմ, աղաչէի վ̄ն Թողուլ զիս. ասէի նոցա՝ սիրեցէ՛ք զխաղաղութիւն, մնացէ՛ք առ ընտանիս ձեր. Ած̄ն՝ զոր ես աւետարանեմ արգելու զձեզ 'ի դժնելոյ զանձինս ձեր վ̄ն իմ 'ի կշիռ։

'Ի մէջ աշակերտաց իմոց էր օրիորդ մի, որ ընդդէմ ամենայն անձնայրին ընդդիմութեանց իմոց՝ ոչ երբէք զերկբելիլ յինէն կամեցաւ։ Էր նորա անուն Ովքսան՝ սիրտ իմ՝ ճմլի 'ի բարբառելն զայս անուն ցանկալի։ Ովքսան սիրէր զզրուճան եւ առաւել քան ըզտոգամանաւորն։ Ամենայն ուրեք զհետ իմ՝ էր ովքսան, եթէ դէպ լինէր ինձ խօսիլ՝ նա զմտադրեալ յականջս կայր, ուր նորա էր յաչս իւր, դէմք նր̄ զերանութեան ունէին զոխպար. եթէ լռէի՝ կամ խուռն ինչ մէգ տխրութեան աղօտացուցանէր զզուարթութիւն դիմաց իմոց, առաւել քան զիս ծանրէր ովքսան, եւ անկանէին երեսք նորա, ոչ իշխէր հարցանել զիս, բայց հայեցուածք նորա սիրալիր եւ ցաւագին նշմարէին ինձ ըզտագնապ նր̄։ Ողոքէի զնա զոր ամենայն 'ի բաց դնել յինէն. ո՛վ հայր իմ՝ պատասխանէր ինձ, կամէի մեռանիլ վ̄ն օրինաց քոց. Թող ինձ կեալ վ̄ն զրուճանոյ։ Որքան առաւել տեսանեմ՝ զքեզ, այնքան խանդամ զքեզ՝ այնքան սէրն իմ բորբոքի առ Ած̄ն քո։ Երկնչիմ գուցէ հալածեսցիս, այս կասկած յարէ զիս 'ի պայման ելից քոց։ Ահա՛ւ ոչ ընաւ լքցէ զքեզ Ովքսան, մինչեւ գտեալ իցէ քո զկին՝ զոր հատանել է քեզ տրամադրել։ Կամիմ տեսանել՝ կամիմ պատահարկել գեղեցկանախն կնոջ այնմիկ, որ խանդաղատանօք եւ խնամօք իւրովք, եւ երջանկութբ զոր տայցէ քեզ վայելել՝ փոխարինելոյ է բարերարութեանց զոր պարտի քեզ երկիր։

Այնքան սէր, այնքան հաստատութիւն ծնողաց յուզի իմ՝ զգայութիւն ինչ՝ զոր վարկանէի պարտիլ անգիտանալ, զհուսկն առաջին՝ լինիմ այր ողբանայ։ Արամազդ ՚ի բարձանց անտի աթոռոյն օրհնէ զմերս միայնիր ընծայեցուն, Արամազդայ շնորհելով ինձ զկին մի առաքինագոյն և կաթոգին փոխարինեաց ինձ ընդ ամի զոր սպառեալ էր իմ վասն նր։

Ո՜վ աւուրց փառաւորութեան իմոյ՝ որք ոչ տեւեցին ընդ երկար։ Նա և ողբան քաղաքաբնակեալք զծննդեանս կենաց մերոց ՚ի պատմութեան, աշակերտք իմ՝ որք մոգք անուանէին, սփռեալք ընդ բնակութիւն իւրեանց պաշտէին զհուր՝ գործէին զերկիր՝ և առնէին զառաքինական գործս։

Արքայն նկատէր փառս՝ ներբողանօք երով ով զամենայն մեծահամբաւ պատկառոյս, ՚ի չուեալ լինել զաղանդին միով, որ ոչ ՚ի վատարանչութիւն ածէր ըզ ժողովուրդս իւր և ոչ յապականութիւն բարուց։ Նայց զգօնամիտն փառս հասեալ ՚ի խոր ծերութիւն, զկէտս հոգւոյն վճարեաց, և եթող զանթառամ սարդանապալոյ որդւոյ իւրոյ։

Նշկեալն իշխանս այս՝ թագաւոր հեշտասէր թուլամորթութեան, պարառեալ և խորտակեալ ՚ի մարդահաճոյ շողոմարարից իւրոց, ընկենու ՚ի նոսա զերամանակ կառավարութե թագաւորութե իւրոյ, զմտացութեանն հարկանէ զխրատս հօր իւրոյ՝ զժողովուրդ իւր՝ զպարտաւորութիւնս իւր, առ ՚ի զհետ կրթել անձնային և զարհուրելի զեղխութեանց։ Անառակութիւնք որք ճապաղեալ վարէին զարքունիս նր, զհոգին ապականել և շաղախել զմիտսն, և անտի ըզ ատելութին համայն։ ՚Ի վախճան երկուց ամաց թա-

գա

գաւորութեան՝ քաղաքն արքայանիստ և գաւառք առ հասարակ ամենեքեան աղաւաղեալ էին և աղծեալ ։ Արքայն խաղալիկ եղեալ աւագանւոյն իւրոյ՝ գերի ներքինեաց իւրոց՝ բռնակալ ժողովրդեան իւրոյ ոչ ևս յիշէր լինել իւր արքայ, բայց եթէ անզիղջ հրովարտակս հանել, տուգանս հրամայել, շատացուցանել մաքրագոյն արեամբ ժողովրդեան իւրոյ զչարահամբաւ և զեղծ հեշտութիւնս իւր, կամ՝ զմնացորդ սուտակապաս մարդահաճոյս իւր ։

Ամենայն ինչ արծաթոյ տուեալ լինէր ՚ի նմանէ, պատիւք՝ պաշտօնք՝ դատաստանք, ամենայն ինչ էր յաճուրդ արկեալ ։ Պալատականք կուսակալք էին ընդ տէրութիւնն, հրամայէին զուարթութեամբ զաղարտութիւն նահանգի միոջ, պարծանս անձին մատուցանէին ՚ի միում՝ խրախճանի զկեանս հարիւր տանց վատնել ։ Գուսանակալք վատք և անագորոյնք՝ թշնամիք տէրութեան և ժողովրդեան՝ արհամարհողք տեառն իւրեանց և արհամարհելք՝ ՚ի տուրևառս արկանէին զիշխանական պատիւն իւրեանց, վաճառէին անպատկառ պժառանգութիւն որքոյն, և զազրութեան չքմեղէին ։ Օրականք առատանային ՚ի միտս ՚ի պատճառս հեշտասիրութեան, դատաւորք ոչ ևս պատկառէին յանիրաւութեանց իւրեանց, յամենայն դասս քաղաքացւոց յափշտակութիւնն և եթ պարծանս ինչ բերէր ․ և ժողովուրդն կթուցեալ և ճլատեալ ՚ի տուգանաց՝ զոհ եղեալ մեծամեծաց՝ գործակալաց՝ դատաւորաց՝ գերեաց իսկ արքային, ժողովուրդն ամեն՝ տառապեալ և առ ոմն հարեալ՝ կողկողանօք զձեռս տարածեալ՝ զերկինս յօգնութիւն կարդայր ։

Անզօրութիւն և անողորմութիւն յարակցէին գրեթէ զօրհանապազ ։ Սարդանապալոս՝ ՚ի զրկոց անտի դժնդակ հեշտախտութեանց իւրոց եհան հրաման

հա

հալածանաց ընդ դէմ մոգուց ։ Տայր պատերազմ աջ պանելի · զի լու իւր ցասուցեալ վարկանելով, խորհեցաւ դիւրագոյն վրէժխնդիր լինել նոցա կանխիւք, քան զկիջուցանել զնա ատաքինագործութեամբ ։ Հրամայեաց հանմիջնոջ կորուսանել մինչև զյետինս աշակերտաց նոցա, խստագոյն տանջանաւս ամենայն որում միանգամ զնա կենդանւոյն ձևանէր 'ի ձեռս իւր, և յառաջնմէ դատապարտեաց զնա 'ի տանջանս ոչ ծանուցեալս ցայնժամ ։

Նորին սուրբ և հուր աղաղա վարեալ անհնացուցին զմնակութիւնս մոգուց, առանք նոցա բոյակեց եղեն, որին նոյ արգեաց զնայանն նոյ ։ Պաշտօնախեաւ և ժամանաժամ զխոճորք սարդանապալոյ, որք այնքան անարի վատասրտութեամբ 'ի դիմի հարեալ էին Թշնամեաց իւրեանց, հանդիսացան ընկախանձու զքաջաքականս իւրեանց հալածել ։ Սուսեր 'ի ձեռին զհետ կլթեցան սակաւուց մոգուց որք ապրեալքն էին, սրոյ ճարակ արարին զորս միանգամ 'ի ձեռս արկին, անդստին անդ յօշեցին զնոյն և զդուստր զնոցա ստամբակեցուցանելոյ զնոսա, և վարկան հրամանեալ զամենայն զծերս սակաւոր, վասն զի գործեն յանուն դից իւրեանց ։

Փախուցի ես կնաւ իմով հանդերձ ։ Հայրիւրից 'ի պատուհասի եղէ դնալ յանդիման ընթել բանակաւորն աւ. 'ի դատապարտեցուցանել զհալածումն, բայց անօգուտն սարդանապալոս դատապարտեալ էր զնոյն ծմ ուսոյն մաքս իմ ոչ զոք փրկեր, ես առաւել՝ զի այլքան կրէր 'ի ծոցի իւրում փառահասաչեալ մի մաքուր սիրոյն մերոյ, անուանն հօր սիրելի առնէր խնձ ըղկեանս իմ ։ Որդահատեալ յանուանն իմմէ՝ քաջալերեալ 'ի սրտապնդութենէ նորա, Թափառելով յանապատէ յանապատ, անդք՝ անօգնականն, առէպ առայտե տեղով, շրջէաք ընդ պալատս՝ ընդ ատենակալաց՝ ընդ բռնաւորաց, մինչ 'ի վտանգի անկանելոյ 'ի ձեռս հալածչաց մերոց, յորում ժամ՝ անտես եղեալ կամ՝ նենգեալ յորոց միանգամ՝ տեղի ապաւինի խնդրէաք : Բայց 'ի մէջ վտանգի կորստեան մերոյ՝ թէ և հիւծեալք և մաշեալք 'ի չարակրութեանց, խոկումն կրելոյ զնմ՝ վասն ճշմարտութե՛, քաղցրացուցանէր զվիշտս մեր ամենայն : Ոչ իւրաքանչիւր նորագոյն աղէտ տեսանէաք զհաստատութիւն ապաստանայ . յոյժ զօրացուցանէր զմեզ, և սէրն սփոփէր :

Յուսկ յետոյ մտաք յանապատս ապաքինոյ, մնատրաւք յայր մի խորագոյն, 'ի մէջ որոյ գոյր դամբարան մի : Թաւալեցուցեալ էր վէմն անտի, և էր դատարկն թափուր : Տեսի անդրէն տախտակ մի տակեղէն, առի զայն : Առ աղօտանշոյլ լուսոյն՝ որ ընդ մտանէր 'ի յայրն, ընթերցայ յայնմիկ զբանս փոքրիկ գըրեալս սրբազան տառիւք : Օ՛ րէճն թող ասա զանտեան օրինայն սրբոյ զաստուածեղէնս, զոր գրեցին աղէեցութե՛ սրբանկարչայ : Զե՛ է հասեալ ժամանակն, յորում գիրք այս ածանցեալ լինի պարտի ձեռանց էր 'ի մանկանսպաշոց . աղանդ. քո զեռևս ընդ եղևար առաքելայ տուեալ ժողովրդոց եղիցի : Բայց այլ ամեօրէնադիր՝ որ նախ անուամբ քո յորջորջեսցի, ծնանելոց է 'ի լուսն ամենակալ, եկեսցէ յայլոր յայս, գտցէ զմատեան քո նք . և ցուցանելով զայն աւերոյ դիցէ 'ի գահլին վր, ուր կանոն և կէտ ազգաց եղիցի : Իսկ վասն քո՝ վճարեսցի ճշմարտութիւնք քո, կոչ ըղձանապարհ քո դէպ 'ի վախճանն, զխնդրոյ ըստ ծաղուն վտանգաւորի, զնա խնդրեալ յարևմուտս պհայրենի մի ամողորը . ուրանօր անուն քո ևս անծանօթ ոչ ածցէ զ.քև հալածիչս : Այս են կամք արարչին, Տիադեանք և մի՛ բնաւ որմնձեր :

Ըն

Ընթերցայ երկիցս զբանս զայսոսիկ, ոչ թերամտեցայ բնաւ լինել այնց 'ի հրեշտակէ միոյ գծագրեալ: Այլ 'ի վերստին յարգանօք զսափորակն ոսկեղէն 'ի տապանի, զետեղեցի անդրէն զմատեանն ս՟բ, որ պարունակէր զա՟ծայինն օրէնսն. արկի անդրէն կափարիչ զվէմն, որ թաւալեցուցեալն էր, և անկեալ յերկիր 'ի վերայ երեսաց իմոց խոնարհ եղէ առաջի [illegible]:

Յետ երկրպագանելոյ անուան նորա, ելի 'ի յայրէն, և ուղղեցի զգնացս իմ դէպ 'ի մեծավաճառն Տիւրոս: Ընտանեօք աղխիւ կողակցաւ իմով հանդերձ ելի 'ի նաւ մի գնալ խնդրել զապաւէն մի առ հիւրասէր ժողովուրդս յունաստանի, կամ վրաց: Նաւն մեր վարեալ 'ի հողմոց 'ի ծովն ադրիական, եկն ընդհարկանիլ յեզերս փրենտանիացւոց: Արամազդ զոր յօգնութ՟ կարդայի, փրկեաց զամուսինն իմ. 'ի գիրկս բարձեալ տարայ զնա մինչև 'ի գիւղ մի մարսաց, ուրանօր ընկալան զնա: Այլ՝ ով աղէտիցս դառնութե՟, նաւելոյն իմ կողակցին անզօր՝ նուաղեալ՝ պարտասեալ 'ի տառապանացն ծովու՝ համանգամայն երկնեալ, ծնաւ երկուորեակ և արար զիս հայր ուստեր միոյ և դստեր միոյ միանգամայն: Հաստատեցաք 'ի միում մեր բնակարանի առ մարսս. ունէաք ամենայնիւ գոհարօք՝ մի միայն կայր մնայր նախկին ուրախութե՟ մերոյ, տապայոյ զկործիթ մի:

Հատուցեալ էաք առ դրունս երջանկութեան, զի նայաք զանդորրութիւն վայելել պաշտելով զա՟ծն մեր և սնուցանելով զմանկունս մեր, յորժամ ամեհի ազգն պելիգնեանց՝ որք ընդ ժամանակս ընդ այնոսիկ մարտ պատերազմի մղէին ընդ դէմ մարսաց զեղան 'ի վերայ գեղջն մերոյ, հուր հարին զնովաւ, և մտին 'ի խուղն ուր ննջէի առ կողակցին 'ի մէջ մանկանց իմոց երկուց:

Ս՛Կ

Ո՛վ զարհուրելի դաժանութեան նոցա, տեսի արախողխող առնել զկին և զորդին իմ, ոչ արտասուք իմ՝ ոչ աղաղակք իմ՝ ոչ բռնութիւն իմ՝ բաւական եղեն պաշտպանել զնոսա։ Իսկ 'ի դստերէ իմմէ զայլ ոք ոչ կարացի ապրեցուցանել, տխրական եղէ նմա, ընկալայ զամենայն հարուածս, զոր մարդադէմ գազանք այնոքիկ նմա պատրաստէին. 'Ի փախուստ անկանելով ընդ նմա 'ի մէջ հրկիզութեանց և գիակաց տապանելոց՝ ուղղելով զհետս իմ՝ արեւմտից իմն՝ ժամանեցի 'ի հովիտս յայս, ուրանօր ձեռք իմ՝ կազմեցին ըզհիւղս զայս, յորում մնացի զամայլիս իմ ատենչայք, միակ և յետին մխիթարութիւն զկնի աւերման սաստկից աղետից և թշուառութեանց։ Նա միակ է՝ վն որոյ կեամ՝ ես 'ի կենցաղումս, որոյ շնորհք՝ որոյ առաքինութիւնք յուշ առնեն ինձ զնմ՝ աւուրս զերջանկալիցն իմ զովքեան։

Յաւելու զայս բան՝ անկանի ծերունին 'ի գիրկս
ամայլիոյ։

Իսկ Լէօ՝ որոյ թանայէին աչք, 'ի վախճան պատմութեանն զրուցանայ, կախի զձեռանէ նորա, և արտասուալից և բորբոքեալ աչօք ակն արկանէ 'ի նա, և յոգւոց հանելով առէ ցնա՝ ո՛հ՝ ասա ինձ, աղաչեմ՝ յորում վայրի և յորում՝ ժամի կորուսեր զորդին քո։ 'Ի գիւղն ալէայ՝ պատասխանէ ծերն, առ ափն անտեղիս գետոյն։ Եւ որդին այս՝ զոր ողբաս, կրկնեաց Լէօ, ունէ՞ր արդեօք 'ի պրանոցի իւրում զխոտխա մի քանդակեալ։ Այո՛ պատասխանէ ծերն զարմացեալ, մայր նորա արկեալ էր զայն զպարանոցաւ նր, և անուանս արամազդեայ պարսկական նշանագծիւք էր 'ի վերայ նր քանդակեալ։

Ընկա՛լ 'ի գիրկս զորդի քո՝ գոչէ Լէօ, անկանելով 'ի վերայ լանջաց նորա, ես եմ՝ որդին քո, իմ է այս բարեբաստութիւն։ Ահա՛ զխոտխան փոխադրեալ, զայն գորին զնա յամենայ , ունիմ ՚ի ծոցի իմում զնշան սուսերին որով պեղեցնեանք հայրին զնա : Անդաստին յառաջնում աւուր տեսանելոյ իմ զքեզ , զգայի զոխս իմ յանդգնել ՚ի քեզ . հակումն ինչ և կարողութիւն իմն ակամայ զգայութեան իմոյ լինել քո ծնօղ իմ :

Ընդդարմացեալ և յապուշ կրթեալ ծերոյն ՚ի բանից լէօի , պատասխանել ոչ զօրէ . ընթեռնու ՚ի գոհային զանուն հօրն իւրոյ , գիրկս արկանէ լէօի , ոչ դադարէ ՚ի համբուրելոյ զնա , և ոգի նորա ընծեալ և վառեալ ՚ի կնճռութենէ իւրմէ , մերձ է մեկնել ՚ի նմանէ :

ԱՒԱՐՏԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԳՐՈՅ

ՆՈՒՄԱՅ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

[illegible] [illegible] 'ի Հռովմ ։ Երջանկութիւն Նումայի ։ [illegible] [illegible] 'ի հօրէ իւրմէ [illegible] [illegible] բարեկամին իւրոյ Նումայի ։ [illegible] ։ [illegible] Նումայի ։ [illegible] [illegible] ։ 'Ի պատերազմի [illegible] [illegible] ընդ նմա ։ [illegible] [illegible] հռովմայեցւոց ։ [illegible] [illegible] [illegible] Հռովմայ , [illegible] [illegible] , [illegible] [illegible] , եւ [illegible] Նումայի 'ի [illegible] ։ Նումայ [illegible] հայ 'ի [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] Նումայի ։

ԸՆԴ ԺԱՄԱՆԱԿՍ ԸՆԴ ԱՅՆՈսիկ ծփէր Հռովմ՝ 'ի վարանս անձկալիս եւ 'ի յոյզս խռովութե՟ ։ Սաբինք առ սաստկութե՟ կսկծանաց կորուսանելոյ զտատիոս , եւ տեսանելոյ տարագիր արարեալ զնումայ , ստամբանային հպատակելն արհամարհելի արքային իւրեանց ։ Սոսկալի [illegible] , զոր Հերսիլեայի [illegible] , արարեալ էր զայս բամբիշ առարկայ նշովից եւ անիծանաց նց ։ Ընդ. քան զես սպառնացեալք 'ի Հռովմայեցւոց՝ խիթալով 'ի միմեանց՝ բացերեւակ [illegible] զատելութիւն եւ զոխ զոր առ իրեարս ունէին , յիւրաքանչիւր պահու կազմ՝ եւ պատրաստ էին որոյ ձայնի տալ զմիմեանս ։ Կեղակարծութիւն՝ թշնամութիւն՝ յամ՝ տունս թագաւորէին . եւ թէ չէր լեալ կորովախոհն մետիոսի , քաղաքականն պատերազմ՝ հուր հարեալ էր զՀռովմայ ։

[illegible] Հռովմուլոսի մոլեկան շամբշութե՟ն այնոցիկ՝ որ յամենամեծ եղեռնաւորս վտառապանաց խիթմանց խղճի կակղու պտեղի, ՚ի նուաճել զժողովուրդ իւր՝ ճնշէր զնն̃ նորանոր արքունի տուգանօք, հեղոյր զարիւն մեծամեծաց, եւ թագաւորէր միայն սարսափմամբ եւ պակուցանողական սոսկմութեամբ:

Հերսիլեա յոյժ արժանաւոր դուստր հօր իւրոյ, ոչ եւս մնայր իւիք՝ բայց եթէ ժահրիւք նախանձու եւ կատաղութեան: Բայց խելամուտ եղեւ թէ ընդդիմակ ոք տիրել ունէր սրտին Նումայի, յամենայն՝ աւուր զլրտեսս գաղտնիս արձակէր առ ամենայն ժողովրդախառնելոյ առ ՚ի ստուգել զընդդիմակէն զայնմանէ, տեղեկանալ զտարփածուէ իւրմէ, սպառնալ զահ եւ զսարսափումն զինուց հօր իւրոյ պատկառողաց այնոցիկ՝ որք տեղի տային նոցա, եւ գտանել զանձինս նոցա յորոց միանգամ կամէին վաճառել զնոսա ՚ի ձեռս իւր:

Յայսմ միջոցի անդորրամիտն Նումայ զանխլացեալ ՚ի խորս ապենինին լերանց, պարապեալ ՚ի սեան բարեկամաց, զարտասուս ցնծութե̃ հեղոյր վն̃ ծանօթս տալոյ զրուցանաց եւ լէօի միմեանց, հաղորդակից լինէր հրճուանաց նոցա, տեսանէր զգեղեցկանիշն զուարճան փայլել զորդւով իւրով: Այս ծեր գաբրաղն ոչ յագէր ՚ի տեսանելոյ՝ լսելոյ՝ եւ ՚ի գիրկս առնլոյ զնա: Ազնի՛ւ որդեակ իմ՝ ասէր ցնա, ուրեմն գտի զքեզ, դու ես այն զոր տեսանեմն միւսանգամ: Ո՛հ զի ոչ ՚ի պատրանս անկանէի, յառաջնում աւուր, յորում եկիր ՚ի հիւղն իմ, ոգի իմ՝ ընդ ոգւոյ քում կապեցաւ անընդդիմանալի իմն հակմամբ. ՚ի սկզբանէ անտի սիրտ իմ՝ ծանեաւ զքեզ: Ո՛վ թէ որքան ախորժեմ՝ հայիլ ՚ի քեզ, որքան գեղեցիկ ես, որքան զարգացեալ ես: Ե՛կ ուրեմն՝ եկ գիրկս արկանել ինձ, եկ կոչել զիս հայր քո, դու պարտիս ինձ զնոյն զգգուանս եւ զփայփայանս, զորս զկնի մանկութեան քո առնել

ու

տանէիր ինձ ։

Լէօ պատասխանէր արտասուօք իւրովք , կամիլլա լսէր անմռունչ ։ Առեալ լէօի զձեռանէ կամիլլայ յանդիման կացուցանէ զնա զրուանայ՝ ասելով նմա , հայր իմ ահաւասիկ սիրելին իմ՝ ահա վեհագոյն իշխեցողն սրտի իմոյ ։ Ընդ յերկար տարառեցաք 'ի միմեանց , հուսկ յետոյ լծակիցք եղաք միմեանց ։ Բայց՝ թէեւ կարի սաստիկ էր սէրն մեր , եթէ Փարին լեալ էր մեզ յառաջատես լինել՝ թէ տեսանելոց էի ես զհայրն իմ ; ո՜հ անշուշտ սպասէաք հայր իմ , այսմ՝ պահու , զի ձեռն քո միաւորէր զմեզ ։ Հաճեայ թողուլ մեզ զյարեմանանութիւն մեր , եւ յաւելուլ զայն հաստատելով ։

Զայս ասացեալ լէօի՝ կամիլլա 'ի գուճս խոնարհի , սիրտ նորա թրթռայ , աչք նորա զերկրաւ բեւեռին , գլուխ նորա յերկիր կորանայ , պատկառուելն շառագունէ զերեսս նորա , հազիւ ուրեմն իշխէ ակնարկել 'ի զրուան ։ Տագնապաւ մեծաւ սպասէ զի կոչեսցէ դուստր իւր ։ Ոչ երբէք այնքան փափագեցաւ լինել գեղաւոր եւ ոչ իսկ յաչս տենչալւոյն իւրոյ լէօի ․ եւ լռելովն թուէր ասել ցծերն , վայելչանք իմ՝ դուզնաքեայ իմն են , այլ սիրտ իմ՝ է քեզ արժանի ։

Դուստր իմ՝ ասէ ցնա յայնժամ՝ զրուան յարուցանելով զնա համանգամայն , երջանկութիւն իմ՝ առաւելու քան զվիշտս իմ , զի միայն որդի էր իմ՝ կորուսեալ , օրս այս երանաւէտ տայ ինձ գտանել զերկուս ։

Յասելն զայս՝ 'ի գիրկս ընդունի զգեղապաճոյճն կամիլլա ։ Այս բերկրապատար տեսարան նկքի պատմութեամբ անցիցն լէօի , փոյթն եռանդուն՝ զոր ներգործէ լէօ 'ի զրուան եւ 'ի դուստրն նորին , յորդէ եւս զսէրն զոր բնութիւն եդ 'ի սիրտս նոցա ։

Նուանց բաժանորդ հրճուանաց եւ զուարճութեանց

հա

հաստատակաց ։ Յետ որոյ Անայիս քոյր Լէօի ծանուցաւ, Անայիս եւ գեղանի երեւի յաչս Նումայի, յիւրաքանչիւր աւուր տեսանէ 'ի նմա զնորանոր առաքինութիւս, անդադար զնմանէ խօսի ընդ բարեկամին իւր, այս անուանակոչութիւն բարեկամի, որ այնքան յանկայն էր նմա, ոչ եւ կարի քաղցր թուէր նմա ։

Նուան ինչ բժշկութիւն գտեալ Նումայ համանգամայն աղաղաքս երանէ, եւ որոնէ հանապազօր զարօտս, ուր Անայիս ածէ զհօտն իւր, լինի հովիւ առ 'ի լինել ընդ նմա ։ Մինչ Կամիլլա եւ Լէօ երանեն յորս վայրս զբօսանաց, Նումայ պատմէ քեւ նմա զանցս վարուց իւրոց ։ Լսէ բերկրանօք զորոշմունս եւ զխորհուրդս Անայիսայ. սքանչանայ յայնմ` նորաբողբոջ հասակի զայնքան միտս զայնքան հանճար գտանել, եւ օր ըստ օրէ ստանալ նմին առաւել ուղղախորհութիւն կամ` առաւել առաքինութիւն ։ Երբեմն հաւաքեալ զեղեգունս ջոկատրէ զնոսա մանրիկ եւ քաղցրանուագ սրինգ կոչէ, եւ նոքօք եղանակակից լինի աւաչական ձայնի հովիւ աղջկանն. յաճախակի կրկնէ զերգս եւ զտաղս զորս 'ի պատանութեանն ուսանի ։ Ոչ խորհի բնաւ ըզնիրոյ, զգայ զհանգստումն ինչ առաւել զուարճալի առաւել խաղաղ ։ Ընդ մերկանալ առաւօտուն զգիշերոյ, երթայ Նումայ զհետ Անայիսայ ։ Տեսիլ նորա ոչ զարթուցանէ 'ի նմա զբորբոքումն կրից, այլ պէտս ունի տեսութեան նորա. յանդիմանութեն նորա ոչ խաւսէ ինչ բնաւ, բայց չէ երջանիկ առանց նորա ։ Խայտայ յԱնայիսայ, ոչ եւ ինչ խորհի, հեռի յԱնայիսայ 'ի կորուստ լինի ։ Ըստ այսմ օրինակի խանդաղակաթն կղետիւ անկանի նուաղեալ եւ թարշամեալ 'ի բացակայութե ջերմոյն արփւոյն, բայց յետ որոյ դարձեալ երեւի աստղն` կենդանւոյ ամբառնայ զգլուխ իւր, յառէ 'ի լուսաւորն առանջեան, հետեւի նմա յընթացս նորա որո-

տան

տանջալով 'ի վերայ բանից իւրոց, և ոչ դադարէ ակնկառոյց լինել 'ի նա մինչև մնեալ լիցէ նորա յորդանտի տեսեալ ։

Պարկեշտագեղն անայիսն՝ որ ոչ գտանէ ոչ 'ի տանի իւրում՝ և ոչ 'ի սիրտն նուաճելի ինչ որ կարասցէ զխորս իւր վշտովքն, թողացուցանէ զսանձ հակամիտնյումէ ձգի ։ Սիրէ զմիրկէլին իւր՝ զոյն՝ որ ապրեցոյցն զկեանս հօր իւրոյ, երախտապարտութիւնն պարտաւորէ զնա, առաքինութիւնք նուաճելի հեշտացուցանեն ։ Նայիս ախորժէ զուարճանել ընդ աշակերտին տուղղոսի 'ի վերայ սքանչելեաց բնութեանն՝ ընթացից աստեղաց՝ զանազան աշխարհաց՝ կառավարութեանց՝ կրօնից ընդ ամենայն տեղիս բազմազանից՝ բարուց ամենայն ուրեք նոյնատարածից ։ Իւրաքանչիւրք 'ի նոցունց ըմբռն կալեալ զվարդապետութիւնս իւրեանց, պարզաբանեն և ջատագովեն զնոսա ։ Տարբերք 'ի կրօնի՝ միաբանք 'ի պատուասիրութիւնս, սիրովք նոյա հաւախորհուրդք են յորժամ՝ միոք նոյա քննեն․ և նումայ որ ոչ դադարի 'ի սքանչանալոյ ընդ խորագիտութիւն անայիսայ, տեսանէ աճիլ օրըստօրէ զմինածութիւն զոր ունի առ նա ։

Լէօ զառաջինն ծանեաւ զայս հակումն նոցա փոխարինական․ տենչայր տեսանել զսիրեկամն իւր եղբայր իւր լինել ։ Սիրես դու զքոյրն իմ՝ ասէ ցնա յաւուր միում, պատասխանեա ինձ համարձակաբար ։ Շառագունի նումայ և խուսի ։ Ընդէր շառագունիս դէմք քո՝ ասէ ցնա Լէօ, տուեալ են մեզ դիք զսէր 'ի սփոփանս տառապանաց մերոց, 'ի հատուցումն առաքինութեանց մերոց ։ Եթէ սիրտ քո զերծ է խապայանարժան կապանաց մտօք հեռանալոյ, եթէ սիրես զանայիս որքան սիրէ զքեզ Լէօ, ընկալցիս զնա 'ի հօրէ իմմէ վաղվաղակի ։ Խօսեաց՝ ասա ինձ միայն, եր-

ջան

ջանկացուցից զքոյր քո ․ Եւ ես հաւատացից բանիդ այդմիկ իբրև պատգամի դից մերոց ։ Շնորհակալ՝ ասէ ցնա Նումայ , մանաւանդ Հերսիլեայ դեռևս սարսեցուցանէ զիս , և անուանն Անայիսայ ապահովէ ։ Չի՞ք ինչ հանգստութիւն սիրոյն՝ զոր քոյր քո ներգործէ ՚ի յիս ընդ այնմիկ , որ յայս սահմանս թշուառութեան էարկ զիս ։ Զօր ամենայն տեսանեմ զԱնայիս , վայրկեան մի ոչ անդրանամ՝ անտի , երբէք ոչ անկաւ ՚ի սիրտ իմ խօսիլ ընդ նմա զսիրոյ և զհարսանեաց ։ Սակայն քաջ խելամուտ եմ՝ սիրելիդ իմ , զի թէ հնա՛ր է երջանկութեան լինել ՚ի վերայ երկրի , պահեալ է այն առն քեռ քո ։

Յետ ասելոյ զայս Նումայի , Լէօ գիրկս արկանէ նմա , կալնու զձեռանէ նր̅ և ածէ առ զրուճան ։ Ոչ բնաւ երկմտանայ զհաւանութենէ նորա ․ խնդրէ ՚ի նմանէ զԱնայիս կ̅ն բարեկամին իւրոյ՝ ազատչին իւրոյ՝ վասն այնորիկ զոր սիրէ և յարգէ գեր ՚ի վերոյ քան զամենայն մահկանացուս ։

Յանկարծի ապշութի գրաւեցաւ Լէօ , և զիատանկաւ սիրտ նորա , յորժամ զրուճան՝ զինի լսելոյ նմա կնճիռս զերեսօք արկանելով , ասէ նմա զոլորական բանս զայսոսիկ ։

Սիրեակ իմ՝ սիրեմ ես զՆումայ , նմա պարտիմ՝ զկեանս իմ․ օրհնէի զօրն յորում բաւական լինէի ըզդարձ փոխարինին առնել նմա , բայց դուստրն իմ՝ մոգ է , ես եմ՝ հեղինակ կրօնի նորա , և օրէնքն զորս քարոզեցի , արգելուն զմեզ յամենայն ուխտակցութենէ ընդ հեթանոսաց ։ Փախստակ իսկ ես զի թողի զամ՝ յամէ հրաժարեցայ ՚ի պատճառս օրինացս այսոցիկ , զպատիւ՝ զձոխութիւն՝ զանդորրութիւն՝ զամենայն զհեշտին նոցա ։ Կամիցիս զի ՚ի վախճանի կենաց իմոց , ՚ի վայրկենին զայնքան չարակրութեանց զհատուցումն ընկալայց՝ վրիպեցայց ամուսնացանելով պատուոճիրա բանայն զոր ես ինքնա ուսուցանեմ։

Ո՛ւրեմն ուսուցեալ է քո զապախտաւորութիւն, ընդմիջեաց Իդօ յոխորտ իմն ձայնիւ։

«Զա՛ւ՝ ուրեակ իմ, պատասխանէ զրուցան, այլ օրինադրեցի զխորհրդականութիւն։ Ոչ կամեցայ զի մօտ մի անկանէր 'ի վտանգի զդեն իւր կորուսանելոյ ամուսնանալով ընդ այլազգեաց ումեք, յառաջատես եղէ զչխամութենէ սիրոյն՝ զընածին հակմանէ սրտի միոյ կաթոգնելոյ 'ի խորհիլ ըստ առաւելոյն սիրեցելոյ։ Դուստրն իմ՝ սիրեսցէ զնուանոյ, ողջունեսցէ ընդ դենն նորա, յուրասա կայցէ 'ի պաշտօնէ մերմէ, և ես եղէց մեծին արանոցզայ պատասխանատու։ Ցաւալի իմն է ինձ յոյժ՝ զի որդին իմ՝ ծնունդն զբուանայ՝ մուծեալ տարամերժս յինէն 'ի թերափիմաց պաշտօնէից, յինոյն տարօրէն կրօնի զհետ ընթանայ, կամիմ՝ զդուստրն իմ՝ դանէ պահել ընդ այնմիկ, մի՛ց փոխքան չարիս կրեցի, կամիմ՝ պահել զանձայիս 'ի վտանգէ հրաժարելոյ 'ի նմանէ։ Որքան առաւել խնկաւոր է նուամայ, այնքան վտանգս այս մեծագոյն եղիցի։ Ո՛հ՝ զի ոչ հալածիչք և ոչ դահիճք են որք զհաւատն դրդուել մարթեն, այլ յարացոյն առաքինութեանց յայլատես դենի։

Առաւել ևս՝ տակաւին դենն իմ՝ տանելի է ամենայն ազգաց աշխարհի, խոտելեաց ողջոյն առէր զնուամայ, եթէ լինէր այր կնոջ միոյ մտքու, դուստրն իմ թերևս նուաճաց սիրեցեալ լինէր . . . . «Երբեմն նուամայ՝ տրամեցուցանեմ և դառնացուցանեմ զքեզ, երևիմ՝ յուշ քո իբրև զծանծաղամիտ և ապաշնորհ ոմն, բայց հաւատամ՝ կրօնի իմում, սիրեմ զդուստրն իմ, ոչ կարեմ արկանել զնա 'ի վտանգի դենափոխ լինելոյ, կամ բերելոյ քեզ օժիտ զառնելութիւն աղջկի քո։

Դադարէ զրուցան 'ի խօսելոյ, առանձնոյ Իդօ և

Մնայ

Նումայ գումարեալ՝ զաչս անքթիթ զերկրաւ բևեռեալ․ վշտանայ վասն ոչ զօրելոյն ընդդիմանալ ծերունւոյն զփաստս հզօրագոյնս քան զնորայն։ Նումայ՝ որ մտադիւր իմն ունկնդիր լեալ էր նմա, հայի ընդ նմա պարզ իմն դիմօք, և պատասխանի առնէ նմա զբանս զայսոսիկ։

Զրոճան՝ անդստին 'ի ծննդենէ իմմէ՝ դիքն զորս պաշտեմ յայտնեցին վասն իմ՝ զզօրութիւն իւրեանց․ սիրեալ զնոսա և դողալ 'ի նոցանէ, ընտրէի մեռանիլ մանաւանդ քան թողուլ զնոսա։ Բայց եղուկ ինձ՝ եթէ ժամանէի առնել զմին 'ի դենից, որք են 'ի վերայ երկրի․ համբուրժեն նոցա դէք, և ես ընդդէմ նոցա ներողամիտ քան զդիս եղէց։ Ոլիմպեան արքս այսոքիկ արեանց, որք ըստ օրինակին սարդանապալոյ առնէր 'ի ձեռին հալածականս առնեն զորս միանգամ ըստ նոցա ոչ խորհին, առաքեն նոցա զմահ, կամ զդեն իւրեանց, և բազմացուցանեն զվկայս յաճախելով զապիրատութիւնս, մինչզի բարերարութիւն առնէին թերևս զեկամուտս։ Զի՛ ընաւ մեզ անկ ողորմելի մահկանացուացս առնուլ զվրէժ բարձրելոյն և զհոգս նոցին ըստանձնել։ Արքունք անդատաստանի միոջ ամենևին ոչ կտորեն զլրեալս 'ի փառս մն̅ անդատաստանի, վայելեն 'ի խաղաղութեան զբարիս զոր պարտին նմա։ Առաջին յաղթութիւն դից՝ է բարութիւն․ իսկական թշնամիք նոցին են հալածիչք, զի յափշտակեն 'ի նոցանէ զքաղցրագոյն վայելչութիւնս նոցա՝ ներել տկարութեան։

Այս է բարեպաշտութիւն իմ՝ զրոճան, քեզ Նումայ դատել արդեօք հաւատն դատեր քո եղիցի 'ի փանդե ընդ իս։ Յարգեցից զվարդապետութիւնս նորա, որ նոյն զիմն յարգեսցէ․ նա պաշտեսցէ զարամազդ, ես պաշտեցից զդիսս։ Այլ տրամադր և դիտս զնոյն հրամայեն մեզ, սիրել զքեզ՝ վերապատուել զալիս ծերութեան քո, սիրել զմեզ մխիթարել և սփոփել զտառա-

պեալս

գետայր. ահաւասիկ զոր մանգաղ՝ հրամցէ ձեռն քո, աւանիկ զոր ինձ պատրաստիցէ : Երկուքին սիրովք մեր ճաճանչելով՝ նոյնս եւ քան զեւս միասցին եւ յարախառնեսցին ընդ իրեարս՝ ըստ երկուց հաւասարապէս ականակիտ առուաց, որոց զանազան են աղբիւրք, բայց շաղախեալ են զջուրս իւրեանց :

Դու տես՝ զի առանձնութիւն ընդ կնոջ միոյ մնալու՝ ձգեսցէ առ իս զանելութիւն ազգին իմոյ : Չիք իմ եւս ազգատոհմ՝, չի՛ք իմ հայրենիք, կորուսի զառուղղս եւ զտոհմս, սիրելիք պարտահամանսն մն̅ իմ՝ ի հիւղն զրուծանոյ. սիրոյն իմ՝ մնայցէ ինձ թէ ոչ ամենեւին առեցայց առաէն : Ով հայր իմ՝ բա՛ց ինձ զիրկս քո, ընկա՛լ զիս ի համար որդւոյ քո, տո՛ւր ինձ ի միում՝ րոպէի զայն ամենայն զոր դիք յընթացս այսքան ամաց ի բաց առին յինէն, շնորհեա ինձ զքոյն անայլս. յայլ ինչ ոչ պաղատեսցուք, բայց եթէ երկարել զաւուրս քո : Բաղդաւորք վարեսցուք խաղաղութեամբ զժամանակս կենաց մերոց ի հովիտս յայս, ուր որդիք որդւոյ քո եւ իմքն արասցեն զժողովուրդ մի, որ դարուց ի դարս օրհնեսցէ զյարգելի անունն զերոծանոյ : Յաւուրս ծերութեան յեցցիս ի մէջ դեռաբոյս ազգիս այսորիկ, եղիցիս առարկայ խանդաղատանաց նոցա եւ աղաւ երջանկութեան : Օ դուստրն որ ծնանիցի ինձ՝ ովքան կոչեցից, այս անուն անենջալի եւս առաւել քաղցրացուսցէ քեզ զհայրիս նորա : Մեք հարքս՝ որդիքս՝ արքս՝ կանայքս ոչ կեցցուք եթէ ոչ ի սիրել զքեզ. եւ ընդ առաւօտս առաւօտս երկոքեան ընտանիք քո խումբ առեալ եկեսցեն սպասել յառնելոյ քո ի քնոյ՝ նովին բերկրութեամբ եւ նովին ակնածութե̃, որով դեռածին կալեալ սպասեն ծագմանն արեւու քոյին աշակերտք :

Օ այս օրինակ խօսելով նուամբ անկանի առ ոտս նր : Մոլորեցեալ տուլլոսայ՝ կամի այսու անձն ժխտել տակաւին . այլ աղաղակէ լեօ՝ յիշեա զի փրկեցի զկեանս քո և ապրեցոյց զանայիս : Իրաւունք է՝ պատասխանէ ծերն, եղիցի անայիս ալխոռուր նումայի, և նումայ որդի իմ լիցի :

Սա այս բանս աղաղակէ բարձրայ նումայ, և անկանի զպարանոցաւ տուլլոսայ, ոչ կարէ զսպել զցնծութիւն իւր, և ոչ բացատրել զշնորհակալութիւն իւր : Կամի նմանապէս գիրկս արկանել լեօի, բայց լեօ արդէն ի հապճեպ մնեալ փութացեալ է ի խնդիր քեռն իւրոյ : Դարձեալ գայ ընդ նմա : Սիրելի այր քո՝ ասէ ցնա տուլլոս, շնորհեմ զքեզ աղջկանն քում : Ի միջոյ ուխտին աւուրց միաբանեսջիք դուք . և աղաչեմ զմեծն Արամազդ զի զիս միայն սրտահատակոծ արասցէ, եթէ ոչ ընդունիցի զայս լծակցութիւն : Զայս ասելով սեղմէ ի վր լանջաց իւրոց զձեռս անայիսայ և նումայի :

Անայիս շառագունի ամչկորելով, և համանգամայն քաղցրաժպիտ դիմօք հաստատէ զպարգևն անձին իւրոյ արարեալ առ ի հօրէն իւրմէ նումայի : Ի ժամէ աստի յայտմանէ՝ գեղեցկանուագն նումայ՝ գերարժան սիրելին նր լեօ՝ և գեղապալողին կամիլլա ոչ ևս անուան այլոյ իմիք, բայց եթէ հանդերձանաց հարսանեաց այսոցիկ :

Արդէն կամիլլա և լեօ գնացեալ էին ի լեառն հաստատել զփոյթս, զի նումայ անձամբ անձին կերտեսցէ զհիւղն յոր բնակելոցն էր : Ընէ հօպ առ խուղն ծերոյն՝ յարևելս կոյս դարձուցեալ զհայեցուածն յի բարեպաշտուհի ամուսին իւր կողմանէ զնմ աւուրս ի զարթնուցն իւր առ լուսաւորն ամենքեան ուղղել զուխտս իւր : Ընծայէ զայն մրթոփք գաղանաց, որք յօդեալք ընդ ոստոյ կաղամբին զխոյեան մի անթափանցելի ընդդէմ արեւաչքան՝ անձրևայն՝ և ցրտոյն :

Նա

Ամենայն ազգ կահից և կարասեաց կարևորաց և ախորժելեաց՝ զորս ճարտարագործել մարթի, են 'ի ներքս կարգաւորեալք. վայելչացուցանէ նոցա զբնակարանս կայանս այնու ճարտարութեամբ՝ այնու արուեստիւք զոր ակն միայն մարթի ընձեռել։ Պարտէզ մի է առ երի խրճթին, այնու եղանակաւ տրամադրէ զայն նոցա, զի ծաղկազարդ հովանեաւն վայրի յասմիկին՝ ընդ որով յառաջնում 'նուագի եառես զամայլս, իջէ 'ի միջօրէի այնր պարտիզին։ Պարծուցանէ զառու մի հեղեղատին, զոր հոսեցուցանէ ընդ մէջ ծաղկանց։ Ծառք պտղաբերք ինքնաբողբոջք օգտակար առնեն զայս պարտէզ. և ցանգ մի կուռ ապահովէ յայծեմանց, որք գային քանդել զմատաղատունկ տաշտս։

Այսպիսի վերակացու լինի գործոյն, որոյ յանդիմանութիւնն խրախուսէ զնուամից։ Ըղձանայր առանձինն վճարել զգործն. բայց կամիլլա և լէօ ձեռնատու լինին յակամայ կամս նորա։ Ամենեքեան ապաժոյժ սատէնկալ 'ի հաշիւ արկանեն թէ 'ի զբօսանաց պայմաննել ութն աւուրք լծանալ ունէին յաւուրն հետագայ։ Արդէն յանգաւորեալ են գործք, արդէն կամիլլայ մերկեալ է զնօտաղուս մարգս 'ի ծաղկանց խուրեանց, հիւսեալ են պսակք, հիւսին նորակերպ զարդարեալ է ծաղկազարդ պճնութեամբ. մնաս արարեալ է արեգն, որոյ ծագումն վերստին լուսաւորելոյ էր զերկրագնդոյն երկուց սիրահարացն, յորժամ սնապանն՝ 'ի ժամուն յորում ժողովեալք 'ի խրճիթն զբօսանաց ամենեքին 'ի միասին բազմիլ կամին շուրջ զթեթևախորտիկ սեղանովք, լսեն բաղխել զդուռն։ Զգայումն ինչ գարնանի քաղցրութեանց զգալոյն նոցա։

Զարմացեալ լէօի յառնէ զառաջինն, առնու զմահակն իւր և ընթանայ առ դուրս։ Չէին նոքա թշնամիք որք զդուրս բաղխէին, այլ ծերունի մի յարգոյ ընդ երկուց զօրականաց որք զերեկօթս խնդրէին ։ Լեօ ընդունի զնոսա և տանի 'ի ներքս ։

Բայց հազիւ տակաւին բազմեալն՝ որ լուսաւորէր զճիւղն, երևեցուցեալ էր զերեսս նոցա, զի Նումայ 'ի զարմանս գրաւեալ աղաղակէ, և փութայ ընդգրկել զծերունին ։ Դո՛ւ ես ուրեմն իմ Մարինոս, դու մտերիմդ տայերոյն և հօր իմոյ, դու՛ մի միայն վստահարանդ՝ վերջին յոյսդ մեր սարքենացելոյս ։

Յաղուի՛ սրտանել Մարինոսի ճանաչէ զՆումայ, ոչ իշխէ հաւատալ անգօր տեսանելեաց իւրոց ։ Ո՛վ Տէր իմ՛ ասէ ցնա, իմ սիրելիդ իմ՛ ուր ուրեմն գտանեմ զքեզ, զքեզ՝ որոյ 'ի խնդիր յածիմ՝ ընդ խուզելոյ համայն ։ Ո՛հ թող զի նախ քան զհատուցանելն իմ՝ քեզ զյարգանս, դողդոջուն բազուկք իմ՝ գիրկս արկցեն քեզ տակաւին, զի սիրտ իմ՝ յագեսցէ զյետին րոպէս զայսոսիկ, յորս ներեալ է ինձ բարեկամ իմ՝ կոչել զքեզ ։ Զայս ասելով թեւարկեալ ընդգրկէ զՆումայ ։ Զկնի՝ դարձեալ առ երկուս զօրականսն որք զհետ իւր էին ։ Ընկերք և սիրելիք՝ ասէ ցնոսա, կատարեցաւ խնդիրն մեր, գտաք մեք զթշուառն մեր ։ Յայնժամ երկոքին հռովմայեցիքն, և նոյն ինքն Մարինոս 'ի ծունր իջեալ առաջի Նումայի՝ ասեն ցնա ակնածութեամբ, կեցցէ արքայն հռովմայ ։

Զի՞նչ խօսիք՝ ընդդիմէ Նումայ զբանս նոցա, առնելով զնոսա յոտն կալ, չեմ ես բնաւ թագաւոր ձեր, չեմ արժանի, և ոչ իսկ ցանկամ փառաց և պատուոյ ։ Դու ես՝ կրկնէ Մարինոս, ևս վայելչագոյն և օրինաւորագոյն իրաւամբք արքայն մեր դու ես, ժողովուրդն համաձայն և համախորհուրդ ընտրեաց զքեզ ։ Հռովմայեցիք և սաբինք զմիաբանեալ անկեալ և մերձ 'ի կործանել զերեալս 'ի խռովութեան հասարակաց զոր յաջորդ հռոմուլոսի, զայլ ոք բայց 'ի նմանէ ոչ ընդունին սին ճահաւոր երկուց ժողովրդոց , անուն քո և էլթ խաղաղեցոյց զմիրիկ ատելութեն , և վերանորոգեաց զհամաձայնութիւնն ։ Դու ես թագաւոր՝ նմանոյ , ժողովուրդք քո քեզ սպասեն ։

Նումայ փափաքեալ և տարակուսեալ՝ նստուցանէ զդեսպանսն ’ի սեղան զբօսանաց , և խնդրէ ’ի Մենտորէ զի պատմեսցէ զբօթալիր զանցս զպատահից ։ Զօրագլուխն ալեւոր հաճեցուցանէ զնա զայս օրինակ ։

Կատարեալ էին չարիք մեր ամենայն ։ Ահաբեկութիւն և սարսափումն սաբինոյ՝ և նպատակ ատելութեն ժողովրդեան իւրոյ եղեալ հասանելոյ , տագնապէր ճնշէր և ’ի հեծութիւնս արկանէր զհօտս՝ ընդ խիստ և անտանելի ծանրաբեռնութե բռնակալութեան ։ Զեր ես տիրապետեան այն միշտ յաղթանակօղ , և որ գոնեայ որոյ ճարակ առնէր միայն զթշնամիս ատելութե , ամեհի բռնակալ ոք էր , որոյ դաժան և փառամոլին եղանակն կառավարութեան խոշտանգէր և հարստահարէր զժողովուրդն առ ’ի ընդդիմանել և նուաճել ընդ իւրև , և չնչին պատճառանօք զարիւնն սպասարկաց ճապաղէր ։ Այսքիկ են հետեւանք անագին եղեռնութե միոյ , ընդ պղծիլ և խոնարհանալ ոգւոյն , ամենայն առաքինութիւնք հրաժեշտ տան և ձեռնթափ լինին , ամենայն ախտք չարք համագումար գան բնակին ’ի նմա ։

Վասն այսորիկ յառուցեալ դէպ ծանուցին մեզ զհատուցման արդարութե իւրեանց եւ զարհուրագին և աստուածապատուհաս հարուածովք , զի մահհարաժամն ապականեալ էած զաւեր ’ի մերոյ հասցին ։ Երբեք ոչ ծանուցաւ ժանտախտն առաւել սակաւ նշանօք ․ Հուր իմն ծախիչ փաղաղեալ տոչորէ համանդամայն զկուրծս և զփորոտս , աչք հրաբորբոք և արիւնայեղցք հոլովին տարժամանակ ’ի կապիճս իւրեանց ,

բե

բերանն լռելութեամբ արտաշնչէ զշունչ թունաւոր, լեզուն ապականեալ և թանձրացեալ կայ ՚ի քիմս՝ խափանէ զարտաբերութիւն ձայնոյն · գրգռեալ գալարին ջիղք, սօսափին անդամք · և ցրտութիւնն մահու՝ որ աստիճան առ աստիճան տարածի, ոչ բաւէ շիջուցանել զտապն տոչորին՝ յորմէ ունէրք և ես այրեալ:

՚Ի կարճոյ՝ ոչ բաւել մարթէին բժշկութիւք սարունակել զախտակին զոհն զայնուիկ · լցան փողոցք՝ վրացան հրապարակք՝ լի եղեն գիւղն տաժանք: Տեսանի խումբ մի յոգնի պարզել ապաստանս եղելոց աստանգիլ կիսամերկք՝ փախուցեալք ՚ի մեհենէ իւրեանց՝ ՚ի տանէ իւրեանց խուզելով և խնդրելով զջուր: Այլքն ՚ի տիբերոս ՚ի գետոն մերձնի՝ ընկեցին զանձն ՚ի ջրբուղխս և ՚ի ձախխիս: Ոչ անսան ումեք, ըմպեն զջուրն, և առանց զծարաւն իւրեանց շիջուցանելոյ անշնչանան ՚ի մէջ ջուրց: Յօդք քաղցրագոյնք բարեկամութեան, զգայմունք բնութեան հանդերձ են ՚ի մոռացօնս, և ամենեքին ոչ ճանաչէին · որդիքն կարծեալ առ ատելութեան յաւուրց դժկամանէ զհայրն իւր ընդ գրկել, եղբայրն յեղբօրէն խորշի, և երկնչի ՚ի փոխադրութենէ ախտին · մայրն օրհասական՝ հեռի ՚ի կենակցէ իւրմէ մատնեալ ՚ի տառապանս երկանց մահու, շրջէր աչօք՝ կոծկեալ առանձինն՝ ՚ի բաց վանէ կարկամեալ բազկօք իւրովք զանկար մանուկն՝ որ ձգէ առ նա զձեռս, որ կողկողէ՝ և կամի դեռևս գնալ դիել զստինս նր̃ ցամաքեալ: Ցաւն՝ մի միայն ցաւն է զգայունն որ տիրէն: Ամենայն ուրեք ախտակիրք, ամ̃ ուրեք մեռեալք: Մատաղ մանկունք՝ կատարելահասակք՝ անցեալք զաւուրբք՝ ամենեքեան կործանին, ամենեքեան անկանին ՚ի ձեռս մահու: Բոց հրոյն փայտակուտից բնաւին ոչ շիջանի, այլ վերանորոգի անդադար: Թէպէտև յոռելք իւրեն Թուռոլ սակայն բաւել ոչ ժամանեն, մինչև

վե

վիճել անդադար 'ի վերայ նր․ և որք միանգամ էին զայնս ամբարձեալ ստիպեալ էին 'ի հարկէ ոգորել, առ 'ի դըսանձել անդրէն զբուեղն մի վասն ծնողաց իւրեանց։

Զայրանալով՝ որ մորմոքէին 'ի վերայ զօրականաց իւրոց, առ 'ի պէճուցանել զյատուածս դից, հրամայեաց զոհ մի հանդիսաւոր եզուեր այծուն ճենճերել։ Ամենայն ժողովուրդ նր՝ կամ՝ մանաւանդ ամենայն անզօր կաց մնայց ժողովրդեան նորա եկեղեցականաց անդամոյն։ Աշտարակք՝ քուրմք՝ քաղաքացիք գումարեալք՝ հաշեալք՝ և ճղճմեալք յառաջ խաղան յանդիման ընթացիւք առ նեղման կոյս։ Օ՛րականն զշահատերկ մերձի մեղմաբար յեցեալ 'ի նիզակն իւր, հազիւ՛ ամբառնալ մարթի զգլուխն իւր դէպ 'ի յարծուէանշան դրօշակն գնդին իւրոյ։ Կանայք՝ ծերք 'ի ցուպս յեցեալք ունին զձեռանէ մանկանց իւրեանց․ մանուկն զգողի և յերկիւղ ձգէ ընդ իւր զմանգօրն իւր պյենարան։ Աշխատաւորք՝ ծերք՝ ախտաժէտք՝ կիսախօթք՝ ամենեքեան ընդ երկիր բերեն ռուռելքան ընթանան․ չէ՛ք ուրուք զօրութիւն ամբառնալոյ զձայնն․ և ժողովուրդն այն հաւաքեալ՝ այնքան հզօր՝ արշաւանքն խաղալոյ՝ նմանի խմբի միոյ շարժուն կմախից, զորս ուրուք մեռելակոչի թեսաղիացւոյ է արուեստ 'ի դժոխոց կոչել։

Սովորին պահանջմամբ՝ զենանին անասունք, քըրմապետն հանէ զփորոտիս նոցա, զայլադնի 'ի նկատելն զայնոսիկ։ Ելանէ 'ի վ͞ր եռոտանեան կառկարայի սրբոյ, ոգին դիւցական հարկանի 'ի նմա, մոլեգնութիւն իմն սուրբ ըմբռնէ զնա, բոցավառին աչք նորա, փրփրէ բերանն, տարածէ զբազուկս, շրջէ զգլուխ իւր, հերք դիզացեալք բարձրացուցանեն զպսակն դափնեայ։ Այլ 'ի զուր պայքարէ ընդ զօրուեն բարձրելոյն, զի զօրութիւնս այս զգետնէ զնա՝ ընդ ոտնէ՝ և նկուն առնէ ընդ իւրով իշխանաւ։ Յայնժամ քըրմապետն ձչեան հնչող բարբառէ զբանս զայսոսիկ : Ժողովուրդ՝ զարհուրելի ոճիր ինձ՝ որ է մնացեալ անպատիժ, իջուցեալ է ՚ի գլուխս ձեր զսոյն բարկութի : Մինչև ոչ քաւեսցի այս ապիրատութիւն, ցորքան ժամանակ եղեռնաւորք տեսանեն զարև, մի՛ յուսայք թէ հաշտեսցին դիք : Յաւեր դարձուցէ ժանտախտն զքաղաքս մեր, մինչև արիւնն....

Չեւևէր ասել քրմապետն՝ այն ինչ Հռոմուլոս ահարկու հայեցուածովք խաղայ ՚ի վերայ նորա, և խուճապումն անհնարին ապաձայն առնէ զնա : Եւ ՚ի նմին իսկ ժամու խաւարին երկինք՝ արեգականն լոյս ամփոփի՝ աղջամուղջք թանձրամածք պատեն զերկիր՝ բիւրաւոր սոսկալի որոտմունք լսին, թուի թէ շփոթեալ տարերաց մարտ պատերազմի յարուցանեն միմեանց, և թէ բնութիւնն ողջոյն ընկղմի վերստին ՚ի յանկարգութիւն :

Ողորմելի հարեալ ժողովրդեան ՚ի ծունր խոնարհի՝ յօգնութիւն կարդայ զդիս՝ և պաղատէ մանհուն : Բայց ՚ի զուր բողէից ինչ դադարին հողմք, փարատի աղջամուղջն, փայլէ արեգակն յանկարծ օդս, տեսանի կապուտակն երկնից, խաղաղութիւնն դառնայ յօդս, և համանգամայն ՚ի սիրտս իսկ վերանորոգի : Զարմացեալք ամենայն ակն արկանեն յիրեարս և գտանեն, Հռոմուլոս և եթ լեալ է աներևոյթ : ՚Ի սատարապարտուց ՚ի խոյզ և ՚ի խնդիր նորա ելեալ թիկնապահք և պաշտօնականք նորա : Քաջընթացք անուանեալ արբանեակք նորա՝ մի միայն նորա յարեալք ՚ի տեղ մի որ շնորհէր նոցա զանպատժութիւն, ծանր սպառնալեօք խրոխտան ՚ի վր պատրիկաց, զորոց չարախօսեն զպանութիւնն արքային : Հանդերձի՝ թղկի՝ փօսի ածէ ժողովուրդն զխռովարարս և [illegible] պաշտպանել, մերձ ընդ մերձ արեան ճապաղիք լինէին, յորժամ՝ պլոկղոս զոր տեսանէին՝ աւագամեծայն և ամենախնկաւոյն 'ի Հռովմայեցւոց աստիճանաւ՝ ծերութբ, և գլուխ ամենայնի ճգնազգեաց առաքինութբ իւրով, յառաջ մատչի, և օժանդակութբ մատածին և տապաճոյճ ելից ինչ փնտռուցանէ զամենայն զոգիս ։ Հռովմայեցիք՝ ասէ, լռեցէք 'ի խնդրելոյ զՀռոմուլոս ։ Տեսի ես աչօք իմովք զհայրն նր Մարս իջանել յերկնէ և յափշտակել զնա յարփինելուշտ 'ի կառս իւր ։ Պլոկղոս՝ ասէ ցիս թգւորն մեր, լցան կատարեցան պակեցան փառք իմ՝ յաղթեցի յաղթանակեցի ։ Շինեցի զքաղաք մի որ է լինելոց թագուհին աշխարհի, ետու զբաւ պարտաւորութն իմոյ ամի, դիք պատերազմաց ընկալնուն զիս 'ի հաղորդութի անանց պատուոյ իւրեանց ։ Ա՛զդէ այս Հռովմայեցւոց՝ ասաց ցնա, զի մարս և Հռոմուլոս առաջնորդեսցեն միշտ զօրաց իւրեանց, և զի այսուհետև կարիցեն զիս անուանել քուիրին ։

Զայս օրինակ խօսի պլոկղոս, և աղմուկ ամբոխին դադարի ։ Բաջընթացք ոչ իշխեն 'ի կեղակարծս արկանել զպատմութիւն մի որ ընծայուցանէ զթագաւոր մի զոր սիրեն. ժողովուրդն շատացեալ կորստեամբ բռնակալին իւրեանց, ախորժեն յերկինս զետեղել մանաւանդ, քան խնդրել և պատժել զորս միանգամ ազատեալ են զերկիր ։

Բայց հարկն պահանջէր ընտրել զոք յաջորդ Հռոմուլոսի ։ Հերսիլիայ 'ի զուր նկրտէր զթագն ժառանգել ։ Զչարեալ սաբինացւոց ընդդէմ նր, պարզապէս ծանուցին զի դարձեալ գնային 'ի կիւրէս, եթէ դուստրն Հռոմուլոսի յաթոռ թագաւորութե նստէր. Հռովմայեցիք իսկ նախատինս համարէին կառավարիլ 'ի կնոջէ միոյ ։ Մառճնեալ և արհամարհեալ Հերսիլիայ յերկոցունց կողմանց, ելանէ 'ի Հռովմայ՝ պատռելով փաղփաղակի ածել անդրէն զսուր պատերազմի. և ժողովուրդն եկեղեցւոյ վերստին յընտրութիւն վեհագոյն իշխանի միոջ ։

Պարսաւաբանիս ժողովուրդս այս եւս առ ձեռն եղեւ 'ի սայր սուսերի մաշիլ յիրերաց անտի ։ Հռովմայեցիք զհռովմայեցի կամէին, սաբինք զսաբինացի խնդրէին ։ Յետ մահուան Տատիոսի՝ ասէին սաբինք, թողաք մեք թագաւորել խաղաղութեամբ զձերն Հռոմուլոս, ժամ է արդ զի մին 'ի մէնջ քաղաքացւոց թագաւորեսցէ 'ի վերայ ձեր ։ Չեմք մեք 'ի ժողովրդոյ անտի պարտեցելոց, բարեկամք ձեր եմք եւ եղբարք • բայց երբէք ոչ եղաք մեք ծառայք ձեր ։ Ազգն մեր գոնէ հաւասար է ազգին ձերոյ յազնուականութեան՝ 'ի քաջութեան՝ յառաքինութեան • յառաջնմէ ոչ ընդունիմք զայն ամենայն որ կարէ պատճառել խռովն ինչ նախանձասութեան իրաւանց այսր հաւասարութեան ։

Այս օրինակ խօսէին սաբինք, արդէն սուսերաձիգ լինէին ։ Յայնմ պահու ազդեցին ինձ դիք, ժողովուրդք՝ աղաղակեցի, ունկնդիր լերուք ձայնի իմում ։ Մարք են ձեզ երկուց ազգացդ անուանել զթագաւորն ձեր, եւ զայն ընտրել 'ի միջի ձերում • իւրաքանչիւրոք 'ի ձէնջ տացէ միւս կիսոյ ժողովրդեան զիրաւունս զոր պահանջէ, եւ այն մասն երկուց ազգացդ որ անուանեսցէ զիշխանն, պարտաւորեսցի ընտրել զայն 'ի միջոյ այնր ժողովրդեան որ ոչ իցէ զնա անուանեալ ։ Հռովմայեցիք՝ ընտրեսջիք զտէրն ձեր, այլ զի տէրս այս սաբին եղիցի, կամ դուք սաբինք՝ կարգեսջիք զթագաւորն, այլ զի թագաւորն այն հռովմայեցի իցէ ։

Հաճոյ եղեւ խորհուրդն իմ ։ Ընդունին վերստին խաղաղութիւնն, համաձայնին ամենեքեան, եւ Հռովմայեցիք յանձն առնուն ընտրել զթագաւոր մի սաբինացի ։ Ամենեքեան համաձայն եւ համախորհուրդ ընտրեն զարդարն Նումայ ։

Ընդ արտասանելն անուանս այսոցիկ , զմտացութեամբ հարկանելով երկուց ազգաց զհեռ և զատելութիւն խուժանաց , շնորհաւորեն և խնդակից լինին միմեանց · Ամենայն քաղաքացիք գիրկ ընդ գիրկ խառնին , ամենեքեան յարտասուս ցնծութեան լուծեալ՝ աղաղակեն , ժուրեմն ծնանի անդրէն վերստին դարն ոսկեղէն՝ թագաւորութիւնն աստրեայ , Նուման թագաւորելոյ է 'ի վերայ մեր ։

Ծխին խունկք անուշունք 'ի վերայ սեղանոց , արիւն սպանդից ճարպալի , ամենայն մեհեանք արձագանգս գոհաբանութեան անդրահնչեն , վերօրհնին դիք վասն ամենայն բարեաց զորս հանդերձեալ են վայելել ։ Առատագոյն շնորհեն զայնս դիք , լուծանի ժանտախտն , հողմ՝ ինչ առողջարար բերէ զանցաւութիւն , տարափք օգտակարք յուսացուցանեն առատարից անդոց կրկնակի հունձս , դիք՝ և մարդիկ՝ երկին՝ և երկիր՝ թուի թէ խայտան և հրճուին ընդ առաքինութեան թագաւորութիւն ։

Նոյնհետայն հրեշտակուհիք առաքին առ քեզ , 'ի սակս որոց լինել խնդրեմ՝ ես ։ 'Ի տագնապ փութոյ գնամք 'ի կիւրէս , ուրանօր ակնունէաք գտանել ըզքեզ , և ոչ լուր իսկ ճար եղև մեզ անդստին գտանել զքեն ։ Խոտորեմք զտառս մեր յերկիրն մարսաց , ուր ըստ ոմանց վկայելոյ ածէր զքեզ անձուկն քո որ առ լեօ , անդանօր ևս 'ի դերև եղ ակնկալութիւն յուսոյն մերոյ ։ Հուսկ ապա գնացաք խնդրել զքեզ 'ի լերինս ռեհատայ , վայր հռչակաւոր վասն նահատակութեան և մարդասիրութեան քո , մինչ դիք ածին զմեզ աստ ։ Ո՛վ քաջարանցդ հռովմայ , ազգք երկու քեզ սպասեն , դու ես միայն յոյս նոցա , իւրաքանչիւր բոպէ վաղարկութեան յափշտակութիւն իմն է սիրոյ մերոյ և երջանկութեան հասարակին արարեալ ։

Դադարէ մեռանողն ’ի խօսելոյ · Նումայ քաղցրաժպիտ և անխռով դիմօք ակն արկանէ ’ի նա , և ասէ ։ Մերելի՝ ժամանակն վերջապականուէ եղանց , ժամանակն՝ յորում՝ մնոտի փառասիրութիւնն , պատիր փառքն , մանկական էին խաղալիքն պատուոյս իմ ։ Պաշտօն արքայական կամէր զառածանել զիս , յորժամ զակատեալ ’ի սէր հերախելոյ՝ սուր ’ի ձեռին արշաւէի լինել նման արժանի ’ի շահատակութիւն , յորժամ բըշակնեալ ’ի կրից իմոց՝ Ճգնութ̃ մեծ յանձին բերէի ներհմտանալ յարհեստս զարհուրելի ’ի սուր մանչերոյ զինորդիկ , և ըզքանչանայի ընդ հատմուրս լոռ չափու չարեացն զոր զնա առնել տեսանէի ։ Անկաւ պատրուակն , բացան աչք իմ , և գոհութիւն դից՝ որք ամենևին ոչ մատնեցին զիս ’ի թշուառութիւն իմ , որովք խրատեցին զիս , գոհութի̃ գորովալից բարեկամութեանն՝ մաքուր սիրոյն որք զիս արտաքաչաւն , ոգի իմ՝ և սիրտ իմ լուսաւորեալք ոչ եւս համարին և յարգեն զոր ոչ է համարելի , ոչ եւս սիրեն քան զոր միանգամ արժանի է սիրելոյ՝ առաքինութիւնն և հանգոյց ։

Ցասապատկան և անդէպ լինիցին ինձ գահոյք հռոմէական · ժողովուրդ նո̃ր խրոխտ և գոռոզապարտեր հազիւ ուրեմն սանձահարել մարթէր ’ի դիւցածին և ’ի մեծանուն զօրավար արքայէ միոյ ։ Որդի մարդոյ եմ ես և զհանդէս մարդոյ ասէ անձն իմ , ատեամ զայդ արհեստ անխիրաւ տարապարհելոյ զմտաւորս առ ’ի յաղթահարել զնոսա , յորդորանելոյ զանազօրն ընդդէմ հզօրաց առ ’ի հարստահարել և առ ոսոն հարկանել զերկուսեան , խելն հաւասարելոյ զոր միանգամ յանփշտակել մարթի ։ Քա՛ւ Մետիոս , տիրապետս ատեանն միոյ պէտք են քեզ ։ ’Ի զուր նուիրէի զկեանս իմ՝ երջանկութեան հռովմայեցւոյ , քամահեցայն և առ արհամարհս ունիցին զթագաւոր մի խաղաղարար , որոյ պա-

տաս

տաղանք դիք՝ օրէնք՝ և մշակուն անդաստանաց լինելոց ։

Հաստատեալ եմ՝ ՚ի միտս իմ՝ Մետիոս, հատուցել զպալատս իմ՝ Հայրենեաց իմոց, հեղձ զորին իմ՝ վճռէր, հարեցուցի զաւարինս վաստակութեան իմոյ. կատարեցան ձգնութիւնք իմ, վասն այսր ամենի զայլ իմն չխորհ ոչ խնդրեմ, բայց եթէ զխաղաղութիւն տարագրութեան այսորիկ ։ Ոչ ևս կամիմ վերստին ՚ի Հռովմ մտանել, կամիմ քաղաքավարել զժամանակս կենաց իմոց ՚ի հովիտս յայս՝ հարիւրապատիկ վայելչագոյն ևս քան ըզ կայսերութիւն, ՚ի մէջ հօր իմոյ՝ բարեկամի իմոյ՝ քեռ իմոյ և ամենապաշտ կենակցի իմոյ ։ Աստէն ևս երջանիկ ևս ապահով եղէց՝ քան հանդուրեալ ՚ի մէջ քաջութեանց իւրոց ։ Ամակեցայց ՚ի հիւղս յայս առաւել զուարճալի առաւել անդորր, քան զպալատս արքայից քոյ, անյուսից աստանոր զուարս սիրտս և անզգօսն՝ պատուելով զդիս և երջանիկ առնելով զհայր իմ՝ և զամուսին իմ՝ զաստնելով և զկին ՚ի նոցայն, և յորժամ ժամանեսցէ ինձ անհրաժեշտ օրհասն մահու, ոչ ունիցիմ՝ համարս ինչ տալոյ դից երջանկութեան բիւրաւոր անձանց, զոր յանձնարարեցին է զօգտես նման նոյ երանայուցանել ։

Տայես համարս՝ Նումայ, ընդմիջեաց անոյշն զբանս հաստատութեան իւրոյ ձայնիւ, տայես համարս՝ եթէ սէրն քո որ առ իս, եթէ հաճութիւն քո ընդ առանձնութիւն տան քեզ զոհել զպաշտս երկուս ։ Թողցի քեզ ուրեմն թէ վա՜ քո և եթ տուեալ է քեզ բարձրեալն զպարգևս առաքինութեան, թողցի քեզ հաճոյանալ նոյ կեալով վասն քո միայն ։ Նոյն վեհագոյն յուշս մնէ զունայն խոկմունս, զգործունեայ իմն առաքինութիւն կամի ։ Այլն բարեհամբոյր համարս տայցէ իւրաքանչիւր աւուր անցուցանելոյ աւուրց առնելոյ զբարի ինչ, և սահղծօղն աշխարհի ոչ մայրթե սիրեն՝ բայց եթէ զոր զորս միանգամ ծագէին վասն երջանկութեան աշխարհի ։

Դու տես զի գիւղացին ոք հանդիսաւէր լաւ եւ ընթանանայ հովանայեցուց , քան զթագաւոր մի խաղաղասէր ։ Այլ որքան առաւել ատաղձանէր է ժողովուրդս այս , այնքան եւ պէտս ունի զգօնամիտ խնամակալի միոջ , որ զսպէ եւ սանձահարէ զյոխորտութիւն նորա , եւ 'ի ձեռն արդարութեան [illegible] զայս խանդգուպաշտարանէր որ յամեհութիւն փոխարկէր ։ Այս մահեծան չէ՞ մարթ այլում՝ լինել բայց 'ի քէն՝ Նումայ , երկիւղածութիւն քոյ 'ի դից , ուրեմն քո վն խաղաղութեն պարտաւորեն զքեզ կառավարել զժողովուրդն , որում առաքինութիւնք այսորիկ կարեւորագոյն եւս են ։

Մորկանիս ոչ եւ ինչ պարտիլ ազգի քում , վն զի մայրանեայր վն նր ։ Ո՛ն անդր , զի՞նչ արարեալ է քո առաւել քան զյետինն 'ի զօրականաց անտի նորա ։ 'Ի վկայութի սրտի քո առնեմ աղաչանս , վն հռովմայ էր արդեօք , կամ թէ վասն հերախլեայ դնէին 'ի կշիռ զգլուխ քո ։ Թէպէտեւ հեղեալ իցէ քո զարիւնդ վն ժողովրդեն քո , ցորքան մի միայն շիթ վերամնայ քեզ , այն կաթիլ եւս նմա անկանի , ոչ երբէք վճարի հայրենեաց , զի միշտ ընդ մեզ է ։

Մի միայն բան մնայ ինձ ասել քեզ ․ եթէ սանձուկն զառանձնացեալ եւ զանշունչ կեանս վարելոյ առ Նայիս , եթէ կրօնն 'ի տարապարտուց հալածեալ պատճառանք են ժխտելոյ քո , 'ի սմին իսկ վայրկենի հրաժարիմ 'ի քէն ։ Աշտամբէի զիս զամենայն աւուրս կենաց խմոյ վն լինելոյ իմ խոչընդոտն երջանկութեան երկուց ազգաց , վասն վրիպեցուցանելոյ իմ զնն յառաւել վայելչագոյն պարգեւէ , զոր ձիր էր երկնի առնել աշխարհի՝ 'ի քաջ արքայ ասեմ ։

Այս զմտաւածութիւն թունաւորէր զաւուրս իմ , եւ այլայլէր գուցէ զսէրն կաթոգին որով սրտացուցերդ զիս ։

զիս ։ Նո՛ւամայ շատ լեալն քեզ բանք իմ, ձանձրացեալ ես պարտաւորութիւնս իմ՝ եւ զքոյս, եթէ ժխտեսցես դու լինել օգնական մարդկան, ես պատուհասակոծ ատեցից զքեզ:

Այսպիսի եղեն բանախօսութիւնք ամալիայ ։ Օրճան եւ լէօ միաբան եղեն ընդ նմա, կամիլա միայն եկաց 'ի կողմն նուամայի ։ Մեսափառ եւ դեսպանք հռովմայեցիք անկան առ ոտս նորա պատճառաբանելով եւ կրկնելով զոր ինչ միանգամ՝ բաւէր հաճեցուցանել զոգի նորա, կամ՝ շարժել զդիւրափղձուկ սիրտ նորա, այլ ընդ վայր ։

Նուամայ հանգոյն վիմի՝ ընդ որ բաղխեալ ալեաց խորտակին, կայ անդրդուելի ։ Հակառակ քաղցրութե̅ աղաչանաց եւ բանից նց̅ զհաստատուն կամս, եւ դադարելով 'ի գիրկս արկանելոյ մեսափառի, Հա՛յր իմ՛՛ ասէ ցնա, եթէ սիրես զիս՝ մի՛ եւս խօսիր զգաւահէ միոյ, յորմէ երկնչիմ՝ առաւել քան 'ի գերեզմանէ ։ Կամիմ՝ մեռանիլ 'ի հովիտս յայս, անարժէմ՝ կեալ 'ի հիւղս յայս ։ Ծնայ ես անհարկաւորի, վայելեսցից բնական զիրաւունս զոր ունի ամենայն մարդ ընտրելոյ զվայրն բնակութեան, ուր կարէ անցուցանել զոճարձութեան զաւուրս իւր ։ Ակնունիմ՝ թէ այսու ոչ վշտացուցանեմ՝ զքեզ, բայց եթէ այս լինէր թշուառութիւն իմ, նախադասէի տանջալին զձգնութիւնն մեղկացուցանելոյ եւ զլքուցանելոյ զհաստատումն նց̅ յորքան կենդանի եմ, առաւել քան կապել զթագ մի՝ յորմէ զարհուրիմ՝ եւ ատեամ: Օ՜ կին հաստատունս այսպիսի, խորհեա՛յ եթէ ընդունայն են արդեօք աղաչանք քո թէ ոչ. տրտմեցուցանեն զիս նք̅, խնայեա 'ի յիս ։ Ս՛կ հանգիր 'ի խղճի իմում՝, ոչ առ թագաւորն քո, այլ առ միաերլիմն քո. 'ի վաղիւն ընդ առաւօտս դարձցես առել հռովմայեցւոց՝ զի թէ դեռեւս սիրեն զնուամայ, ցուցցեն նմա զսէրն իւրեանց՝ թողով զնա յերջանիկ անշքութեան իւրում՝:

Յասելն զայս ելանէ 'ի խորհրդեն զրոճանայ: Ննայիս ընդվայր յետս կոչէ զնա, յառաջնում նոճանգի բնաւին ոչ պատասխանէ ձայնի նր: 'Ի խորս տրտմութեն անկեալ դեռապանաց գնան անցուցանել զգիշերն 'ի հիւղն նորանկերտ. կամելլա զնի ընդ երկար ջատագովելոյ ընդ դէմ անայխայ զհաստատութիւնն մտաց նուաճելի՝ գնայ 'ի ննջել առընթեր սիրեցելոյն իւրոյ լէսի, զրոճան և դուստրն իւր Ճնան 'ի միասին. առ 'ի խորհիլ զկատարմանէ կարևորագոյն առաջադրութեն իւրք:

ՎԱԽՃԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ

ՆՈՒՄԱՅ ՊՈՄՊԻԼԻՈՍ

ԳԻՐՔ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

[illegible] փայլուն երեւի Նումայի ։ Փախուստ անայիսայ եւ հօր նորա ։ Յուսահատութիւն Նումայի ։ [illegible] հրամանի , եւ [illegible] ։ [illegible] 'ի [illegible] ։ [illegible] Նումայի 'ի [illegible] ։ [illegible] ։ [illegible] Նումայի ։ [illegible] ։ [illegible] ընդ [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , եւ [illegible] ։ Կառավարութիւն Նումայի ։

ԱՌԱՆՁՆԱՑԵԱԼ ՆՈՒՄԱՅԻ Ի ներքս խղճին իւրոյ ; ոչ կարէ 'ի բուռն մտանել անդրէն ։ Զոր ինչ միանգամ՝ ասացեալ էր անայիս յուշ լինէր 'նմա մեղաւորին ։ Սպառնացաւ նա ինձ՝ ասէր 'ի միտս իւր , հրաժեշտ տալ ինձ , եթէ 'ի մոռացօնս արկանէի վ՟ն նորա , զոր միանգամ՝ պարտիմ՝ աղջկին իմոյ , եթէ ժխտէի դիցն կանանց հպատակ կալ ։ Ո՞վ սոսկալի աղէտիցս՝ անհամաձայնեալ դից միանգամայն , եւ տենչալեացս իմոյ անայիսայ ։ Բայց եթէ ընկալայց զԹագն , ժամանեցից արդեօք փառաւոր առնել զվերջին աւուրս թագաւորութեան իմոյ ամուսնութեամբ իմով ընդ մոգուհւոյ միոյ ։ Միտք եւ խորհուրդք իմ՝ լինէին թագաւորել 'ի դեռնի ամկս , եւ ես սկիզբն առնէի նուաստուցանելով յաղթող իմ՝ զթըշնամին պաշտամանց իմոց ։ Ժողովուրդ իմ՝ դադարէր 'ի տեսանելն զայն , եւ անայիս թէեւ առաքինազարդ , լինէր նպատակ աւերութե՟ն հասարակութե՟ն ։ Քա՛ւ՝ ոչ

կա

կարեմ վաճառել զնա, և 'ի վեր քան զգին ոչ մարթիմ զոհել զսէրն իմ սնոտի յուսոյս բարուք կառավարելոյ զհաւմն : Մինչեւ ցայդ ոչ կեցի բայց եթէ գնել զանձն իմ 'ի վ՟ր այլոց, ժամ է արդ կեալ ի՟ն իմ :

'Ի մէջ այսց որոճմանց՝ մոլորիչն տառապեցուցանելոյ զժողովուրդ իւր, և երկիւղն զի խա փութացուցանելոյ յաւէտն ցրել զառաջնորդութիւնս Նիդիայի : Տագնապեալ 'ի խորհրդոց աստի, ձգեալ 'ի սիրոյ իւրմէ, յետս ընկրկեալ յերկիւղածութենէ իւրմէ . կայ մնայ 'ի դեգերմանս զի՞նչ արդեօք առնել պարտ իցէ . յարենման տապարահար ծառոյն այնմիկ, որ մերձ է յանկումն առ դուն ինչ ուժել, և որոյ անկումն սպառնայ հաւասարապէս յա՟մ կողմանց :

Մերձ էր առաւօտն 'ի գիշերոյն մերկանայր, յորժամ Նիդիայ բազմախոհիւք պարապեալ 'ի ննջիւն խոնարհի : Հազիւ առեալ էր զանձն ամենաքաղցր հադառեմանս այսմիկ, և ահա ուրուական ծերունեայ միոջ արփիանաթաթաւ ցնցոտի ծուէնս ինչ զանձամբ արկեալ ընծայի առաջի նր՟ : Զահի հարկանի Նիդիայ և գիջանան հերք նորա, բայց ծանուցեալ զնա գոլ Տայնիոս, 'ի բաց փարատի երկիւղն նր՟ : Ո՛վ հայր իմ՝ և թագաւոր իմ՝ ասէ ցնա, ո՞ ետ քեզ լքանել զելիսեան դաշտս զուարճալիս : Զի՞ է զի արկեալ ես զանձամբ զայդ ձորձ արհենայեղց, որ քաջ յուշ առնէ զմեծին Հոմերոսի : Զի՞նչ հրամայես ինձ, խօսեաց՝ առնէր աչաւոր և անենչալի, երդնու Նիդիայ հնազանդիլ քեզ :

Եթէ ուրեմն 'ի հաւմ՝ ասէ ցնա ստուերն խիդախելով, դիք հրամայեն քեզ թագաւորել, վ՟ն ազդառնելոյ քեզ զվճիռ 'ն՟ց, թողի զկայանն իմ խաւարազգած : Չեմ ես տակաւին յելիսեան դաշտս . Մինչ յառաջ քան զփոխարինելն ինձ ըստ դաւաճանեայ

բար

բարւոյն զոր սիրէի, պատժեաց զիս վ՟ն չարին զոր թողի գործել: Ինձ պա՛րտ է մեռալ 'ի [illegible], մինչև ժողովուրդն հռովմայ լեալ իցէ եւ երջանկագոյն ժողովրդոց· լե՛ր փրկիչ իմ՝ Նումայ:

Զայս ասելով աներեւոյթ լինի ուրուականն: Նումայ՝ ձգէ զբազուկս իւր առ 'ի ունիլ զնա, բայց կալնու և. ոչ ինչ:

Սթափի Նումայ 'ի ննջմանէ հարեալ 'ի ցուրտ իմն քրտամբ, 'ի ծունր խոնարհի, երկրպագանէ դից, մատուցանէ զջաշանս գինւոյ 'ի մէջ կայծականց: Ընդ ծագել արեւուն փութայ առ անայիս փարատել զտատամսութիւնն որ տանջէ զնա:

Այլ ընդվայր խնդրէ, 'ի զուր կոչէ զանայիս· անայիս բնաւին ոչ պատասխանէ: Խռովեալ 'ի լռուէ՟ աստի, մտանէ 'ի նինջարան զգուշանայ գտանէ թափուր զմահիճն: Տախտակ մի եւեթ մնացեալ է անդրէն, զոր առեալ Նումայի ընթեռնու զբանս զայսոսիկ:

ԱՆԱՅԻՍ ԱՌ ՆՈՒՄԱՅ

Զոհեմ ես՝ ոչ եւս տեսցես զիս: Ցորքան եղէց առ քեզ՝ կամ դու յուրաստ կացցես վ՟ն իմ՝ 'ի գահէ միոյ զոր շնորհէ քեզ ա՟ծ առ 'ի պէտս երջանկութե՟ երկուց ժողովրդոց, և ես ոչ կարեմ՝ ընդունիլ զայս պատարագ· կամ նստցիս յաթոռ թագաւորական՝ բազմեցուցանելով զիս առընթեր քո, և եղցես դու յանժամ յաչաց ժողովրդեան քո: Վ՟ն օգտի և փառաց քոց հարկ է փախչիլ 'ի քէն՝ Նումայ, փախչիլ այսօր, յաւուր իսկ .... Արտասուք իմ՝ թանան զայս տախտակ: Ո՛ղջ լեր Նումայ, գնա՛ թագաւորել· լե՛ր երջանիկ՝ եթէ հնար է· այլ մի՛ բնաւ մոռանար զանայիս: Յիշեա՝ զի յանփառունակ բնակարանի իմում անդադար զքէն խորհեցայց· ակնունիմ՝ զի ընծայց

օրհ

օրհնել զանուն քո · յայնժամ ցնծագոյն և ուրախ եղէց վ̄ն գտանելոյ իմ վաստաքախտութե̄ խնդոյլ զխառս յորս վայելեսցես, զերջանկութիւն ժողովրդեան քո, և զառաքինութիւն կեցոյ յարաժամ 'ի տաճարի քում:

Երկիցս ընթեռնու Նումայ զայս թուղթ առանց մարթելոյ հեղուլ զշիթ մի արտասուաց, դառնութիւնն՝ մորմոքումն սաստկանային և ճնշէին զնա: Ոչ արտասուէր բնաւ, ոչ տրտնջէր, անխօսս և շնչարգել ակամբ պշուցեալ զթուղթն նկատէր: Այնհանգունակ թռչունն, որ 'ի դառնալն բերելոյ ձագուց իւրոց զկերակուր ն̄ց գտանէ զբոյնն բարձեալ՝ մնայ անշարժ 'ի վ̄ր ծառոյ, թողու 'ի խածեաց իւրոց զկերն անկանել, և անքթիթ նկատէ զվայրն ուր էին ձագք իւր սիրելիք:

Ուր ուրեմն վտակք երկու արտասուաց հոսել սփոփիչն զնումայ, հեկեկանք խեղդուկն ելանեն 'ի սրտէ իւրմէ: Ա՜նայիս անայիս՝ գոչէ կողկողագին ձայնիւ, անայիս՝ բարձի թողի լքեր զիս: Համարիս զի կարացից կեալ, թուի՞ քեզ թէ ոչ շրջեցայց ընդ ամենայն երկիր առ 'ի գտանել զիմ անայիս: Ընդէ՞ր լքեր զիս յաւուր իսկ մերոց հարսանեաց · մինչեր զուարճեալ խորհս այսորիկ զուարճարելոյ զքեզ ընդունիլ, և ուրք քո ո՛չ զիոյ տեսին բնաւ, և մարթայր . . . . յուսաբեկութիւն տիրէ ինձ . . . . Ա՜յ տամ զողջոյն հրաժեշտի զգօնութե̄՝ փառաց՝ առաքինութեան՝ ամ̄ի որ միանգամ ոչ բաւեաց կացուցանել զանայիս: Ատեամ զկեանս, մինչ ոչ ևս կեամ վ̄ն ն̄ր · այլ ինչ ոչ գիտեմ՝ լինել այսուհետև, բայց եթէ յիմար խելայեղ և մտաթափի ոմն, որովհետև անայիս տանի զխելս իմ:

Յասելն զայս տառապեալ անկանի և թարթափի 'ի վերայ հողոյ: Գոչիւն աղաղակի ն̄ր ձգէ առ ինքն զկամիլլա և զլէօ · այլ աւա՜ղ՝ երկոքին ևս անզօրանան զշնչումն զրուճանոյ և դասեր ն̄ր: Զոհել է անայիս՝

գո

գոչէ Նումայ. ցաւագին ձայնիւ՛ համանմանութեամբս ընդ տեսանելն զնոսա, չուեալ գնացեալ է Անայիս, ոչ եւս տեսցուք զնա : Մամիլիոս կամի հարցանել, Նումայ կրկնէ՝ չուեալ է Անայիս : Լէօ նկատէ զթուղթն եւ տեսանէ 'ի միւս կողմն զխանդաղատանականն ողջոյնն հրաժարականն, զոր առայ նման զրուցան : Չէ՛ր քեզ հնար որոշել՝ ասէր նմա, ընդ մէջ հօր քո եւ բարեկամին քո, գորովալիր կամեցաւ պահել զքեզ 'ի ցաւագին մրցանաց աստի : Հա՛րկ եղեւ ինձ թողուլ զքեզ՝ ազնիւ՛ որդեակ իմ՛, այլ ոչ երբէք ուժէի առնել զայս, եթէ չէր իմ հաւաստի լեալ փութանակի վերստին միանալ ընդ քեզ :

Նումայ լուեալ զյետին բանս զայսոսիկ յարձակի 'ի վերայ տախտակին • ընթեռնու, եւ դարձեալ ընթեռնու զբանսն զայսոսիկ, որովք զիջուցանէ ըզ տագնապ յուսաբեկութեան խելոյ : Լէօ ողբայ ընդ նմա, կամելով յարգահատէ զնոսա • եւ ծերն Մետիոս, որ յոյժ՝ վայրկենի հասանէ, փարի եւ ընդգրկէ զերկուս դիեցաղսն, խոստանալով նց մնալ իւր թողուլ լքանել զամենայն, առ 'ի գնալ 'ի խնդիր զբուճանաց :

Ի նմին իսկ պահու չուել կամի Նումայ : Ոչ եւս յիշէ զթագաւորութիւնն, զայլ իմն ոչ խորհի, բայց եթէ ժամանել Անայիսայ նախ քան զհեռանալն նորա : Նոյց հագնի՛ յաղէ անկանի, եւ ահա շանթ մի իջանէ 'ի վերուստ, եւ պայթի առ ոտս նր, եւ ձայն մի ահագին իբրեւ զշաչիւն որոտմանց հնչէր 'ի բարձանց յամպոյ մինչէ լսելի առնէ նմա զբանս զայսոսիկ :

Նումայ յիշեա զՏատիոս :

Նումայ զահի հարեալ զկայ առնու, յամօթ լինի եւ շառագնի վս կամելոյն ընդ ոտն հարկանել զպարտաւորութիւնն 'ի պատճառս սիրոյ իւրոյ • 'ի ծունր իջանէ եւ օրհնէ զայն ձայն անկեալ յերկիր 'ի վերայ

երե

երեսաց իւրոց , հայցէ զթողութիւն յուրուականացն տապկեալ , և յարուցեալ առաւել անխռով դիմօք՝ Թագ[illegible]որ ձեր եմ՝ ասէ ցդեսպանսն , ածէք զիս առ ժողովուրդն իմ:

Առ այս բան մեռանի և երկու ընկերք նորա ոչ իշխեն յայտնել զխնդումն իւրեանց . զի քաջ տեսանէին թէ որքան խիստ էր Նումայի զոհել զսէր մի , որ քան զկեանս առաւել քաղցր է նմա , խնդակցին ընդ միմեանս անմռունչ՝ և պատրաստին ՚ի Հռովմ առաջնորդել զնա , ուրում սպասէին ամբոխն իբրև այ̄ փրկչի:

Լէօ դողդալով զմտերիմն իւր , ցաւի մտ̄ ոչ զնալոյն զհետ նր̄ , կամի աճապարել զհետ կրթիլ հօրն իւրոյ , կամի ՚ի խնդիր անկանիլ անայիսայ . կամիլլա պատրաստի զնալ ընդ նմա : Տիւրիկս ՚ի գիրկս ընդունի լէօ զնումայ , խոստանալով՝ երդմամբ նմա զկնի զամիս երիս խնդրելոյ զղրուճան դարձել միաւորիլ ընդ նմա : Նումայ որ ՚ի նմին աւուր կորուսանէ զատարփալին իւր , և անջատի ՚ի բարեկամէ իւրմէ , զի որոմնթէ̄ կալնու զձմնապարհն Հռովմայ առ ՚ի գնալ նստիլ յաթոռ մի որ ոչ մխիթարեսցէ զնա:

Երթայ առաջնորդեալ ՚ի դեսպանաց : Անցանէ զապենինեան լերամբք , գտանէ զկառս որք սպասէին նմա ՚ի սահմանս . որով փութով անցանէ ընդ վիճակն հռովմայ , և նշմարէ զհոյակապ ախոյանսն , զի էին սոքա յոգնախումբ բազմութեամբ երկուց ժողովրդոցն , որք զօր ամ̄ գային անդրէն սպասել գալստեան թագաւորին իւրեանց:

Հազիւ հազ տեսանէին կառք , զի բիւրաւոր աղաղակք ցնծուե̄ մինչև յերկինս ամբառնան . ահաւասիկ՝ ահաւասիկ դիւցազն մեր՝ հայրն մեր՝ սիրելին մեր՝ փրկիչն հռովմայեցւոց . կանայք՝ մանկունք՝ ծերք՝ զօրականք ամենեքեան խուժեն առ դրունս , ամենեքեան ծովացեալ լցուցանեն զդաշտավայրն , և արշաւանս առեալ՝ ընդ առաջ երթան ՚նուաճելի ձեռօք ։ Այն բերէ զծաղիկս ՚ի ձեռին՝ այլ ոմն զասաս ծի[illegible]նեալ , մատուցանեն նմա զայնս ՚ի հեռուստ և արկանեն զճանապարհս նր · խնամեն զկառօք նր և խափանեն զգնացս նր ։ Համեմատեցէք՝ ասէինք՝ զնոյն բերկրութի և հրճուանս ցուցանեն , հաւաստի է խուռնական ապականալի նոցա , երկոքին ազգն զմի և զնոյն սիրտ ունին ։

Նոյնպէս իջանէ ՚ի կառաց իւրոց · և յորժամ էր տեսանել զնա օրհնիլ յամ՛ բերանոյ , զձեռս և զհանդերձս նր ծածկել ՚ի բիւրապատիկ համբուրից · ո՜չ մի՝ ևս լքանէր զմեզ՝ ասէին նոքա , կամ ընդ մեզ յարաժամ, շնորհեն մեզ դէթ զհայր մի , որ անընդհատ ընդ որդւոց իւրոց եղիցի ։ Այս նոյնպէս և ձգէ զբազուկս իւր առ նս · ՚ի գորովանաց սրտի և դայլայլանաց աղեաց մղեալ ոչ զօրէ պատասխանել · բայց լռութի նր՝ քաղցրահայեաց դէմք նորա , արտասուք նր խոստանան ժողովրդեան իւրոյ զոր ինչ խնդրէին միանգամ ։ Նոյնպէս հանդարտահետ ընթանայ , անդուլ կոյդեալ յողջագուրանաց և ՚ի նորոգ աղաղակաց ցնծութե · այսմանիկ քաղաքէն արքայից պարառեալ պնդեալ ՚ի հպատակաց իւրոց՝ խառն ընդ նս մտանէ ՚ի նիստ իւր թագաւորանիստ , և հազարապատիկ ևս պերճապայծառ հանդիսանայ , քան զյաղթող մի շրջապարեալ ՚ի գերեաց՝ յաղթողական ՚ի կառս բազմեալ ։

Հասեալ ՚ի հրապարակ քաղաքին՝ զթագաւորական զարդս զանձամբ արկանէ ։ Պաշտօնեայքն՝ տարեալ զնա ՚ի կապիտոլին , ուրանօր կամի շնորհակալել ընդից · ծխին խունկք , ճապաղի արիւն զոհից , որոց փողք հնչեալք քաղցրադէպ գոհութիւնս ցուցանեն ։

Նումայ զգաստացաւ և զթագ իւր դնէ 'ի վերայ սեղանոյն դիցանց· ո՛րդիք Սատուռնոսի գոչէ՝ եթէ 'ի յոգնախումբ այսմ՝ բազմութեան հռովմայեցւոց, որք ընդ իս զուխտս իւրեանց մատուցանեն քեզ, մի միայն իցէ որ վառեալ է փափագանօք երջանկացուցանել զժողովուրդս զայս՝ առաւել քան զիս, ծանո՛ ինձ, զի 'ի նա տացից պատուական զայս պսակ: Բայց եթէ կամք են քեզ զի ես եղէց ստացօղ այնր՝ ո՛վ դիք, մի չեմ զաղաչանս իմ· զի յառաջնում՝ աւուր յորում զիրաւունս արքայութեան թիւրեցից, կամ ոչ լուայց ձայնի հեծութեան անանկաց, կամ՝ ընդ ոտն հարից ըզտառապեալս, անդստին շանթ քոյ զահավէժ արասցէ զիս յաթոռոյ անտի, ուր բազմեցուցեալ եմ: Ո՛չ ընդունիմ զայն՝ բայց եթէ սովին պայմանաւ: Հա՛յր դից և մարդկան՝ հաճոյագոյն եղիցի ինձ այս շնորհ, քան զյաղթութիւն մի ընդդէմ թշնամեաց իմոց:

Աւարտել Նումայի զմաղթանս իւր, կրկնապատկին ձայնք գովաբանական ցնծութե̃· Ճենճերին ջաշանցք բերկրութե̃ և հրճուանօք: Նումայ ելանէ 'ի տաճարէն, և որք երկոտասան զառաջեաւ նր̃ թևապարելով ուղեկից լինին նմա մինչև ցապարանս նր̃:

Յառաւօտուն նորին տայ բանալ զգանձս Ռոմուլոսի, զկէսն բաշխէ ժողովրդեան, և զմիւս կէսն պահէ վ̃ն անանկաց: Խորան եղծանէ և հետակորոյս առնէ զպահպանութիւն զգունդս քաջընթացին: Այլ թիկնապահս ոչ կամիմ՝ ասէ, բայց յանկեղծութենէ և 'ի սիրոյ, զոր ունիցին առ իս հպատակք իմ: Աներկիւղութիւն իմ անկեղծս առնէ զնոսա զմիով, առաքինութեանց իմոց անկանի կապել առ իս զմիտս: Անօգուտք են ինձ քաջընթացք, դարձցին նոքա լինել վերստին քաղաքացիք: Եթէ 'ի նոցանէ հեղեալ են զարիւնս սուրբ, 'ի ձեզ առնեմ զնա ապաստան:

Իբրև

Իսկ զի այս արիւն ըղձաւոր՝ եղիցի մի միայն արիւնն հեղեալ 'ի թագաւորութե՛ն իւրում՝ արտաքս արդարութե՛ն իւրոյ . Իսկ զի ամ՝ առաքինին հպատակք իւր՝ անխայեացեն 'ի կեա յառաւել արժանաւոր պիտանութե՛ն պաշտամանց իւրոց ։

Ձեռնի այնօրինակ կատարելոյ յառաջին բանիւս թագաւորութե՛ն իւրոյ զերկու կայսերագոյն եւ մեծ պատուաւորութե՛ն թագաւորաց , օժանդակել անձնակաց՝ եւ պատժել զչարեայապարտս , մեկուսանայ յապարանս իւր զաւուրս բազումն հեռաւորաբար , առ 'ի առնուլ զուղիղ համար կարեաց իւրոց՝ ճոխութեց իւրոց , եւ գլուխս ամենայնի հարկայն զորս մարթի խափանել . խորհի ընդերկար զփոփոխութեանց զորս կարեւոր վարկանի ։ Բայց յառաջագոյն քան զձեռնամուխ լինել յիմն , կամի գնալ յանտառն եգերիայ հայցել զօգնութի՛ն յաթենասայ , եւ ողբալ համարձակ եւ առանձին զտարփալին իւր զանայիս ։

Ելանէ 'ի Հռովմայ , թողու զարբանեակս իւր , մտանէ միայն ընդ միայն յանտառն դիւցանուհեր ։ Ժամանէ իսկոյն 'ի կանաչազարդ հովանին , ընդ որով զառաջինն եւս զդուստրն Հռոմուլոսի նիրհեալ ։ Այն ինչ ծանեաւ զտեղին ուր էրն անմայրին՝ կալնու զնա դողումն , թրթռայ սիրտ նորա ուժգին , զգայ քաղել զօրութեց իւրոց ։ Նկրտի խոյս տալ 'ի տեղւոջէ անտի , յորմէ ոչ ատակէ խորշել՝ առանց յոգւոյ ելանելոյ տակաւին . արդարեւ չէ 'ի սուտ՝ թէ սէրն առաջին թողու զհետս անջնջելիս ։

Հազիւ հեռացեալ 'ի հովանւոյ անտի , նստի յունջս ծառոյ միոջ առ 'ի առնուլ զոգի 'ի վրդովմանէ իւրմէ ։ Անդանօր զգաստացեալ՝ արկանէ զանձն յախորժելի տխրութիւնն յայն , որ ընդունայնէ առանց նեղելոյ , յիշեցուցանէ անձին զամսն իւր զառաջինս .

վըշտատանկ մերթ յուսացին, բայց միշտ յանկարծ մեղկացեալ գտան : Մտաբերէր Նումայ զառաջին ճանապարհ իւր 'ի Հռովմ, զերազն զոր ետես առ աղբերն Պամնոսի, զդիցուհին Եգերիայ զոր ոչ կարէր անտեսանել, որ և ուսուցանէր նմա զիմաստութիւն, զկիղկաթուածս իւր վասն հերկելոյ, նախնագոյն հաւակ աղէտից և չարակրութեանց իւրոց, զսէրն իւր առ Անայիս որոյ անուամբն և եթ յաղթահարէ զնա, առ Անայիս զոր կորոյս, այլ զի պատկերն որոյ հետևէր նմա, պաշտպանէ զնորա նր̃ յամենայն վտանգաց որք տակաւին կարասցեն նմա պատահել, և տպաւորէ 'ի խորս սրտի նր̃ զվըշտատանկ ինչ քաղցր խառն ընդ յուսոյ, որ սփոփելով զնա 'ի վիշտս իւր, յառաջքինութեան խրախուսէ :

Յառնէ Նումայ ևս հանդարտամիտ, կամի մերոքին անկանիլ յուղին, որ տանի 'ի մեհեանն աթենասայ, բայց թիւրաշաւիղ հետոց պատահէ, մինչ յառաւել անկախիտս վայրս անտառին, և հասանի համանդրատանոյն յաղբիւր մի ականակիտ, որ եռանէր 'ի փոքրագոյն բլրոյ միոյ՝ յանկարծաձիւք հաճենեաց հովանաւորեալ : Ոչ երբէք հօտ և ոչ հովիւ էին պղտորել զջուրն վճիտ առանձնացեալ աղբերն այնորիկ, ոչ երբէք թռչունք յըմպելն ամար, և ոչ իսկ ոստ անկեալ 'ի ծառոց խորշոմեցուցեալ էին զջրոյն մակերևոյթ : Ծառք որք շուրջ զնովաւ էին՝ աղխաղնէին ընդ միմեանս, շուրջ զբլրովն կազմէին զձաղուց մի անթափանցելի, անհատնար մացառք՝ բերելով վայրի վարդենիք ընձիւղեալք փակէին աղբերական զմիջոցս արմատոյ ծառոյ խուռն : Այս տեղի լռին և անքոյթ թուէր նուիրեալ խորին խորհրդոյ : Սովորական էր ամենաբարոյս ճանապարհի անտառին գորգաթիւոյ ուր յանձնապաստանն ակնածն ահաբեկեալ զդեռարըն լառաջին, կամ ևս հաւատեալ պաշտպանա էր

ընդ

բնակարանն ուր իջանէին յերկնից փեբա առատաձեռնել զշնորհս իւր նազելոյն Ենդիմիոնի ։

Ու այս բան կամիլլա և կայլոս անկանին ՚ի դիրկս արքային Վեստինեաց , և ՚ի կենակցիցն կայսրեաց : Երկոքին ծերքս այսուքիկ աչաց իւրեանց հաւատալ ոչ մարթին , ցօղեն զարտասուս ցնծութեան , այնպէս ունին ՚ի գիրկս իւրեանց զորդիս , զորս ոչ ևս ակնունէին տեսանել :

Սպարտերիւք գուպարեցէք ընդ ընդդէմ՝ ասէ ցնոսա Նումայ . արդէն դատաստանն իմ արդար էր , կամեցայ զի լինէր և ես : Նա իմն ոչ էք դուք Լաթի-ոչ հրամանք , ասախելով զձեզ լինել ապերախտք : Տուք պատերազմ՝ եթէ կամք են ձեզ :

Փոխանակ ընդ ամենայն պատասխանւոյ , երկո-քին Թագաւորք անկանին առ ոտս նորա , և փարին ընդ նմա : Աստուածային առաքինութիւն հանճարեղն ամբոխեալ ծափեն առ նա զձեռս՝ աղաղակելով , հաշտութիւն : Զօրականք ամենեքեան կրկնեն՝ հաշտութիւն :

Նումա և եթ խօսել կամի . բայց լեո դիմէ առ նա . եթէ ծարաւն արեան տոչորէ զքեզ , ասէ ցնա , ահաւասիկ եմ , վերադարձեալ քեզ զտապարն քո , զոր առի մինչդեռ ՚ի քնոջ էի : Նկուն եղեալ ամօթի ՚ի

քա

բանից տառի և 'ի գերազանցութենէ մեծահոգւոյն լեօի, յականէ 'ի նա և լռէ ։ Փութա՛ աճապարեա՛՝ տալ նմա դիւցազն. եռայ և տագնապի սիրտ իմ 'ի խորհիլն թէ թաթաւել ունիմ զձեռս իմ՝ արեամբ մարդոյ միոջ. կամ՝ հրաժարեսցի 'ի հայրենեաց քոց, կամ՝ հաշտեսցի ընդ իս ։ Ընտրութիւն իմ արարեալ է՝ տալ նմա աւրն, և դնէ զձեռն իւր 'ի ձեռն նորա ։

Ընդ բառնալ արգելմանս այսորիկ հաշտութեան, ձայնք ցնծութեան աղաղակի հնչեն յամենայն կողմանց. երկոքին ճակատք զօրաց թողուլ զգաստակարգ իւրեանց սկսանին խառնել ընդ միմեանս, յորժամ՝ յոխորտան Հերսիլիա՝ որ մինչեւ ցայնժամ՝ յուռացեալ էր յաւրն, շանթեշեալ՝ հրացայտ աչօք, և դունատեալ դիմօք առ կատաղի սրտմտութեան, Ո՛վ վատ՝ ապաշնորհք՝ և ուխտադրուժ բարեկամք՝ գոչէ, որք տեղի տայք մնոտի բանից, որք դրժէք զդատաստան թագաւորաց, մի՛ համարիք տեսանել զիս կցորդ անարժանապեղծութեան ձերոյ ։ Եւ դու Նումայ՝ զոր այնքան ատեմ որքան սիրեմ, ոչ մարթիմ՝ գտանել բանս առաւել ազդուս, ընկալ զհրաժարական զողջոյն իմ աւաղելի ։ Տացէ քեզ սէրն զգալ յանձին զամենայն զտանջանս զորս պատճառեցեր ինձ, զի ողբասցես 'ի վերայ աթոռոյդ զայդէան ոչ ատակելոյ քո դնել յայնմ՝ զանձն անարժան՝ զոր ինձ նախադասես. զի ժողովուրդս այս հռովմէական՝ որ զքեզ կոչեաց թագաւոր, եղիցի առաւել զարհուրելի թշնամին անուան թագաւորի, հալածեսցէ ընդ ամենայն երկիր՝ զկնի վանելոյ 'ի պալատայց իւրոց զքեզ, կամ՝ զանարժանս յաջորդս քո. 'ի զուր ամենայնի հալածական արասցեն զքեզ անդուլ սեւաթոյր Եւմենիդեայք, յանդիման կացուսցեն քեզ անդադար զդէմս սոսկալի յոգնոց ապաստան եղեալ դեղատուութեամբ իմով, և զլուխ ամի զՀերսիլեայն օրհասական եղելոյ ընդ սու-

սե

սէրսս , որում առաջնորդէ ձեռն քո անզեղջ ։ Յարտասանեցէն զյետին բանս զպատուիրն՝ վասն մինչև ցերախտակային զուռնալերն ՚ի սիրտ իւր ։ Աճապարեն փութան խուռնեին զնովաւ՝ այլ ընդ վայր , անցեալ է ժամն , ոչևս չնչառէ , և սրտմտութիւնն բարկութեան նկարագրեալ տեսանի տակաւին յանշնչացեալ դէմս նորա ։

Ողբայ զնա Նումայ , և հրամայէ մեծաշուք հանդիսիւ և պատշաճաւոր յորդանօք ամփոփմանն նր̄ տանել նմա զարդաւորական պատուին ։ Մինչ փայտակոյտն յօրինի , քաջարանցն հռովմայ զենու զպայմանս երդնու զհնազանդութիւն ընդ պայմանին եղելոյ , և պարտէլ ՚ի Թագաւորաց անտի՝ որոց յաղթեացն արդարութեամբ , անդրէն ՚ի Հռովմ մնանէ ։

Ածէ զնոսա Նումայ ՚ի կապիտոլինն , ուրանօր մատուցանեն նք̄ դիսոյն զպայմանս մի ։ Անդրէն առաջադրէ հաստատել զդաշն մի , որ անքոյթ արասցէ խաղաղութիւն և զազատութիւնն երկոցունց ։ Ամենայն պատկառոքս այսոքիկ լցեալք ակնածութե̄ վասն առաքինութեան Նումայի , կամին զի նա միայն եղիցի դատաւոր իւրեանց ։ Նումայ ՚ի զննին արկանէ զիրաւունս իւրաքանչիւրոյ յայնցանէ , փոխարինէ ընդզոհից , անձամբք անձին հանէ զոհս , ՚ի գիր արձանացուցանէ զպայմանսն հաշտութե̄ , և ամենեքեան տօնադրեն զօրն ուրախութե̄ ։ Այս նորոգ դաշնակիցքս արքային հռովմայ լցեալ ընծայիւք նր̄՝ աներկևանք զուխտապահութենէ նորուն , և յղացեալք զխրատատար յարգանս վս̄ նր̄ , հանդերձին ՚ի չու անկանիլ ։

Արքայն կապոճայ որդւովն իւրով հանդերձ՝ որ եղեալ է դիւցազն որք առ մարտս՝ դարձ առնէ յերկիրս իւր ։ Թագաւորն վետոնեայ ոչ կարէ պարտաւորել զդուստրն իւր գնալ ընդ իւր ՚ի կենդնիլոյ , զի կամիլլա հրաժարեալ է յաթոռոյն , կամի կալ ՚ի հռովմ ընդ լէօի և ընդ նաւակի , և բարեխառնութիւնն՝ զոր վայելէ , շնոր է երջանիկ առնել զհայրն իւր ։ Աշխէք՝ հիւրընկալք՝ և առատաձեռնք բարեսէրք փոխանակ ընդ անխիղաւութեանց , զորոյ Թշնամանէին զհոտաւորս , դատանմանն ընդ Ճանապարհ երկրին իւրեանց՝ բարձր առնելով զանտանն նաւակի ։ Մայրք պատճառեալք ծիխք և պտղեօք՝ եկեալք մերձաւորին ՚ի սաստկութենէ երկրին սարսիկայ դատանման ՚ի մարաբելից . սաստր արհաւին յոյժ Թողոյ զառաքինաղարդ դաշնակիցն իւր ։ ՚Ի վախճանին տեսեալ ժողովրդեան հանդիսից զպատերազմն առատութեան առաւօտ հեղեղ արեւուն մի միայն քաղաքացւոյ , օրհնէ և պաշտէ զԹագաւորն իւր ։

Ողջամիտ և կորովախորհրդութիւնն նաւակոյ զխաղաղութիւնն խոսքից ապահովացուցեալ , ամենայնէ զնա փակել հանդիսիւ զատանմանն յանտուն , որ ընդ Թագաւորութեանցն հաստատութ եկաց մեաց միշտ անխախ ։ Խորանք նոր պղնձիք ճոխացեն ՚ի վր ժամկահոյք ծղինեաց իւրեանց , յանձնարկիցն է ուժեղ փակել զնն ։

՚Ի ծոնոյ իջանէ նաւակոյ առաջի չնծութեանն , ծիլ յանտ՝ ազաղականէ , զոր որ Թագաւորեալ յիտալիոյ արդարութն և խաղաղութն , Թեւարկեալ խաղաղարար առաջնորդութեց իւրեց ։ Փակեալ զդռհաւոր մեհեանս զայս , սկսա մեր եղէգի սանձայրն , ուր պաշտեսցուք զքեզ սպառահեանն ։ Գեխոսցիս հաստուցանել քեզ ըղպատիւ նորադոյն . մինչև ցայսր ասորին մեր սկսեալ է յամենայ անուանի մայրանին նուիրելոյ . վերանորոգեսցիս զանձն զայս չարաչար հաշտեալ՝ սակս ոչ սակաւ պատաճառաց ։ Յաւելից յայն զամկաս երկու , և առաջին ամենեցունն ամիսն յանուն եղիցի . իրաւունք են զի չնծն պատերազմի տեղի տացէ չնչն խաղաղութեան ։

Յանէն զայս զբռունք մեհենին շղթին իրքանն ՚ի վերայ ծղինեաց իւրեանց , և փակին զդրհնուբեկն իւն

Ճռնչմունք :

Տայց նուիրագործէ նուանց զմահանն ամէղէն, որ անշուշտ առնէ խաղաղ հաւանեցելոց զյաղթութիւն ընդդէմ՝ նոր ժողովրդոց. կայցէ 'ի պահպանութեան այնր զքուրմն զօրս սաղմոսս սնուցանէ :

Օ՜ կնի բարեպաշտական հոգատարութեան այսոցիկ, պատրաստի դառնալ յանտառն եղեռնից, ամէ ընդ խուր զկամիլս և զէշս : Իսկ երկուցեալ գուցէ ոհամնեալն չնծութեան, թողու զնոսս խոտն ինչ հեռի յաղբերէն :

Ընդ ժամանելն անդրէն կարդայ զեզերից, ցաւի վասն հարուստ ժամանակաց անցանելոյ՝ յորմէ հեռու ոչ է լուեալ զձայն նորա, և տայ զհամար ամի զոր միանգամ՝ արարն : Շատոյեալ ես՝ ասէ դարձեալ երկիւղախառն և պատկառուկ ձայնիւ : Այո՜ պատասխանէ ձայն, հաճ և հաւան եմ, յորժ սոսի յայտնանէ հանդերձեալ զքեզ իբրև զնա մեծագոյն թագաւորաց : Կատարեցեր և լցուցեր դու զյոյս իմ, մինչ ինձ կատարել զերդմունս իմ, ծանիր 'ի վերջնումն զեգերից :

Ու այս բան ելանէ նա յանտառէն, և նուանց տեսանէ զանասուն : Նուանց փորեալ՝ ամենեցուն՝ բեռնաբարձել՝ և բաղկատարած կառուցեալ արձանանց : Միանգամայն թառաչս արձակելով ամենայն առ ուս անասունս, ընդ փոյթ ջանայ բարբառել, զայլ ինչ ոչ զօրէ առնել, բայց 'ի հեղլոյ զարտասուս :

Որ՜ յանն կայ՝ ասէ մնա անասունս, չեմ ես չնծուհին եգերից. սակայն մնհեմնացու ում եմ, և պատիժք չնծութեան նոցայ հաճոյ եղեւեին ինձ քան զանուանն սիրելոյ քո : Պատմեալ էիր դու ինձ զերագն քո երազեալ առ աղբիւրն դիցն Պանայ, զյոյն զոր պահէիր հրահանգելոյ քո յաւուր միում առ 'ի յե յեգերիայ․ հաստատեսցի ՚ի միտս իմ՝ ընդ հօր իմում ճշմարտել զայս յոյս ։ Ինձ ստուգապատեալ մեր անջատիլ ՚ի քէն , զի հաւանեսցիս լինել բարերարին ժողովրդեան քո․ եկայք թաքուցանել զմեզ յանտառս յայս , ուրանօր գիտէի անշուշտ թէ ոչ դանդաղեսցիր գալ ։ Ամենայն առաջնորդութեամբ մեր էառ զկատարումն ։ Նոուքեզ խորհուրդս , որք թելադրեցան ինձ առ ՚ի խորին իմաստունէ հօր իմոյ ։ Հաւանեցայ լսել դիցուհւոյն , այդ վերջականութեան՝ փառաց քոյ շահընծայ , քաղցր եղև սրտի իմոյ ։ Տեսանէի զքեզ ՚ի միջոյ սաղարթապաճոյճ ծառոց այսոցիկ , յորժամ՝ թոռէր քեզ խօսիլ ընդ եգերիայ․ երջանկագոյն քան զքեզ՝ առընթեր քո էի յորժամ՝ ողբայիր զքոյն անայիս ։

Նումայ լսէ յիմարեալ և այլ յայլմէ եղեալ ։ Տեսանէ միանգամայն զՕրհեամն երկնից անդրէն , յարձակի առաջնագոյն ՚ի գիրկս նորա․ բռնելով ընդգրկէ զնա , և արտասուեալ ՚ի գրկաց նր վազս առնու խնդրել զԿամիլլա և զԼէօ ։ Ո՛ւր է՝ աղաղակէ առ նոսա ՚ի հեռուստ , ուր է ։ Փութա՛ եկ՝ հայր քո և քոյր քո սպասեն քեզ ։

Լէօ ոչ իշխէ հաւատալ բանիցս այսոցիկ , սակայն աճապարէ հաստանիլ անդրէն ։ Օրհեամն առընկալնու զնա ՚ի գիրկս իւր , սեղմէ զնա ՚ի վերայ լանջաց իւրոց․ որդեակ իմ՝ անգին՝ որդեակ իմ՝ ասէ , միաւորեսցուք դարձեալ ընդ միմեանս , ոչևս անջատեսցուք ՚ի միմեանց մինչև ՚ի մահ ։ Լէօ փոխանակ ընդ պատասխանւոյն յարտասուս լուծանի․ սիրատարփին Կամիլլա ընդգրկէ զամուսին ։ Ցնծութիւնն՝ սէրն՝ բարեկամութիւնն՝ թուէր խնկայնորել զհայլն գալարաղէն , և զչորեսին սիրահարս ։

Հուսկ յետոյ՝ իբրև յարտասուաց անտի սփոփեցան , տանի զնոսա զլոման ՚ի հիւղն իւր ։ Նանոր՝ տայ ցնոսա, զոհեցուք մեզ, անդէն վախճանեսցուք զաւուրս մեր ։ Նումայ առ՛ քեզ զԱնայիս, բայց մի՛ երբէք գիտասցէ ժողովուրդն Հռովմայ զայս լծակցութիւն, մի՛ երբէք մնասցէ Անայիս ՚ի Հռովմ ։ Ո՛ ով ամենայն պատճառանօք գալոյ անդէն խորհրդակցել ընդ դիցուհւոյն, եկեսցես տեսանել զամուսինն քո, և փոխարէնն բարի գործոյ քոյ՝ եղիցի հաճութիւն մեզ զայնս պատմելոյ ։ Այնպիսունակ դաւատրն խնկայցէ հաւատարիմ՝ առ դենն իւր ․ ծածկութիւն յաւելցէ զխորհուրդ վայելչանս երջանկութե՛ նուամսցի ․ և զբօսանս պանծացեալ ընդ այս երջանկութե՛, անցուսցէ խաղաղութե՛ ՚ի մէջի ձերում՝ զաւակս աւուրսն, զորս արմնոցն սահմանէ նմա տակաւին ։ Հաւանիմ ընդ այս առաջարկութիւն ։

Նումայ ընդ պատասխանւոյն փոխանակ անկանի առ ոտս նորա ․ Անայիս ժպտի ակնկորելով ․ Կամիլլա և Լէօ գովէն զառատարութիւնն ։

Ի հետևեալ յաւուրն հարսանիք Անայիսոյ և Նումայի կատարեցան ՚ի խաղի անդ, առանց շքոյ առանց հանդիսի՝ և առանց այլոց վկայից, բայց ՚ի զբօսանայ Կամիլլայ և Լէօյ ։ Գեղեցկանոյքն Նումայ յամենայնում՝ աւուր գայ ՚ի հիւղս յայս ։ Առաքինազարդն Անայիս և հայր նորա ևս քան զևս աճեցուցանեն ՚ի նա զբաղձանս և թելադրեն նմա զերանական լինելոյ առաւել արդարոյն և առաւել բարերարոյն ՚ի Թագաւորս ։

Օ՛ րուճան ՚ի մէջի նոցա յէնու յայլս խորին ծերութե՛ ։ Լէօ եղեալ սպարապետ Հռոմայեցւոց, հաստատի ՚ի Հռոմ՝ ընդ ամուսնոյն իւրոյ, և առնու անուն զմականունն Կամիլլա ․ որ եղև սկիզբն դիւցազնաւոր տոհմիս այսորիկ, որոյ գերահռչակ դիւցազունքն ազատեցին զՀռոմ՝ ՚ի Գաղղաց ։ Նումայ միշտ կաթոգին դին անայխայ , և յորժամ պաշտեալ անոր՝ Թագաւորեալ զամս քառասուն և հինգ ։ 'Ի միջոցի հոլովմանն հարուստ ամենակալս այսոցիկ , ոչ երբէք երևեցաւ թշնամի յերկրին հռովմայ , երբէք ոչ բացաւ տաճարին յանոսի , և 'ի թագաւորութեանն Նումայի ոչ ոք գտաւ և ոչ մի տառապեալ 'ի հարստահարութէ , կամ 'ի վատթար օրինաց ։

ՎԵՐՋ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԳՐՈՑ ԵՒ ԲՈԼՈՐ ՄԱՏԵՆԻՆ

Ցա.

Ծանօթութիւնք յատուկ անուանց՝ պարունակելոց յայս Տաղարան :

Աթենաս · աստուածուհի իմաստութեան՝ պատերազմի և ամ ազատական արուեստից, զոր առասպելէին հեթանոսք արտադրեալ յուղղոյ արամազդայ առանց մօր :

Ակտէոն · էր սա մեծանուն որսորդապետ ոք՝ որդի արիստէոսի, և աւտոնոյեայ դստերն կադմոսի, ուստի և կոչեցաւ աստանէոս դիւցազն : Ետես սա զարտեմիս և զծառայս նր լոգանալ մերձ ՚ի ծոցն գարգափիայ, որոյ վն յեղջերու փոխարկեցաւ, և պատառեցաւ յիւրոց անտի շանց որսորդաց :

Ակրոն · էր թագաւոր կենինեայ · սպանաւ սա ՚ի հռոմուղոսէ ՚ի մենամարտութեան, յետ զսաբինացիս յափշտակելոյ : Կապուտ կողոպուտք սորա փերետրեանն արամազդայ նուիրեցան :

Ալկիտէս կամ՝ ալկիդէս · է անուն հերակլէս դիւցն, ՚ի յոյն (ալքոս) բառէս առեալ, որ ոյժ ստուգաբանի, կամ ՚ի հաւու նորուն ալկէոսէ :

Ամարիլլաս · անուն շինական կնոջ ուրուք ՚ի հռովմէական քերթուածս վիրգիլեայ · բզմ՝ մեկնաբանք ՚ի կարծիս գնային թէ զհռովմայ խօսի բանաստեղծն ընդ կեղծ անուամբս ընդ այսորիկ :

Ամիտերնացիք · ժողովուրդք ամիտերնա քաղաքին իտալիոյ, ուր ծնաւ հռչակաւոր մատենագիրն սալուստիոս :

Անիո · է մի ՚ի գետոց անտի իտալիոյ, որ ՚ի հիւսիսոյ հռովմայ հոսեալ գայ խառնի ՚ի տիբերիս գետ :

Անտեմնացիք · էին սոքա բնակիչք անտեմնայ քաղաքին սաբինացւոց, որ ընդ մէջ հռովմայ և անիոս գետոյն :

Անտիղոքոս · էր սա երէց որդի Նեստորի, որ չոգաւ 'ի պատերազմն տրովադայ, և սպանաւ անդ 'ի մեմնոնէ որդւոյն աւրորայ ։

Անտիոպէ · էր դուստր Նիկտէոս արքային Թեբայ · Հարաւ 'ի սէր սորա արամազդ, որ առ 'ի խաբդաւանել զնա փոխարկեցաւ յայծամարդ ։

Ապենինք · են բարձրաբերձ լերինք իտալիոյ ։

Ապողոն · էր սա որդի արամազդայ և լատոնեայ, կոչէր և փեբոս · յաճախ առեալ լինի սա 'ի քերթողաց փոխանակ արեգականն ։ Անձինք չորք եղեն անուամբս այսոցիկ ըստ կիկերոնի 'ի գիրս՝ որ յաղագս բնութեան ա՟ծոց ։ Այսու ամ՟ն երևի թէ ամ՟ գործք այլոց՝ որդւոյն արամազդայ և լատոնեայ են ընծայեալք ։

Աստրեայ · դուստր աստրէոսի արքային արկադիոյ, կամ ըստ այլոց եղբօրն սատուռնոսի ծնելոյն յաւրօրայ, Բազումք ասեն զնմանէ դուստր արամազդայ և թեմեայ լինել ։ Կոչեցաւ սա արդարութիւն՝ որոյ առաքինութեանն եղև չա՟ծուհի ։ Քաղաքավարեաց սա 'ի վերայ երկրի ըստ առասպելեաց բանաստեղծից՝ ցորչափ տևեաց դարն ոսկեղէն, բայց չարութիւն և անիրաւութիւն ազգի մարդկան առիպեցին զնա 'ի պղնձի և յերկաթի դարուն յերկինս վերանալ, որ և զետեղեցաւ 'ի մէջ զոդիակոսին համաստեղութեանց անուանակոչութեամբս կոյս ։ Ցուցանի սա իբրև զկոյս մի խոժոռ բայց վսեմ դիմօք՝ 'ի մի ձեռին զկշիռ և 'ի միւսումն զսուր մի ունելով ։

Ավեռնոս կամ ավեռնայ · էր սա լիճ մի կամպանիոյ մերձ 'ի բայիէ քաղաք, որոյ ջուրք այնքան վնասակար և ժահահոտ էին, մինչև թռչնոց ևս ոչ երևիլ յափունս նորա, և յայսմանէ էառ զանուն իւր նախ

Նախնական (աօռնօս) որ 'ի բարբառ յունաց ստուգաբանի կարօտ 'ի թռչնոց : Նախնի առասպելութիւնք մուտ դժոխոց արարին զայս : Այս ևս գիտելի է, զի ամենայն լիճք կամ կուտակք ջուրց նեխեալք և ապականեալք անխտիր աօռնոս կոչէին :

Արամազդ · էր սա հզօրագոյն քան զամենայն դիս ըստ առասպելաբանից , և որդի սատուռնոսի և ռեայ : Մայր սորա ոպս ապրեցոյց զնա 'ի սատուռնոսէ , և յանձն արար խնամոց կորիբանդեսս քրմացն կիբելեայ աստուածուհւոյն : Քանզի սատուռնոս հայր սորա՝ որ էր ընկալեալ զթագաւորութիւն աշխարհի յեղբօրէն իւրոյ տիտանայ դաշամբ ոչ յարուցանելոյ զզաւակ արու , անդէն ընդ ծնանելն կլանէր զամենայն զորդիս իւր · բայց թագոյց ոպս զարամազդ , և մատոյց սատուռնոսի զվէմ մի , զոր նոյն եկուլ արու զաւակ գոլ զայն կարծելով : Սնուցաւ արամազդ 'ի քարանձաւ մի 'ի լերան իդայ 'ի կրետէ 'ի ձեռն ամալթեայ դստերն մելիսսոսի արքային կրետոյ , որ դիեցոյց զնա կաթամբ այծու : Իբրև յարբունս եհաս արամազդ , և հաստատեցաւ կորովութեամբ , մարտ մղեաց տիտանեանց , որք կալեալ զհայր իւր ունէին զսատուռնոս , վասն պահելոյ նորա զզաւակս արուս ընդդէմ՝ դաշինն եդելոյ 'ի մէջ իւրեանց : Յաղթահարեցան տիտանեանք , և թափեաց արամազդ 'ի ձեռաց նոցա զհայր իւր : Այսու ամենայնիւ ոչ յետ բազմաց խանդացեալ սատուռնոսի ընդ կարողութեան արամազդայ որդւոյ իւրոյ , դարանակալ եղև կենաց նորա , և յաղագս նենգամտութեան իւրոյ վանեալ հերքեցաւ 'ի թագաւորութենէ իւրմէ , և հարկաւորեցաւ անկանիլ գաղթական 'ի լատիոն : Եղեալ արդէն արամազդայ միահեծան տէր և տիեզերական աշխարհի , բաժանեաց զայն 'ի մէջ եղբարց իւրոց :

Պա

Պահեաց վասն իւր զերկնից թագաւորութի՟, և զծովուն տէրութի՟ ետ նեպտոնի, և զսանդարամետականացն պղուտոնի։ Սկզբնաւորութի՟ն անդորր թագաւորութեան իւրոյ վաղ խռովեցաւ 'ի փառասիրութէ՟ անտի սկայից, զորս նուաճեաց օգնականութեամբն հերակլեայ։ Պաշտօն դիցս այսորիկ էր ընդհանուր առ ամ՟ ազգս։ Էր սա ամմոնն ափրիկեցւոց, բէլն բաբելացւոց, և օսիրիսն եգիպտացւոց, և այլն։ Իսկ վ՟ խոհերական բարուց և պղծախառնութե՟ց սորա բազում ինչ առասպելաբանեն քանաստեղծք և մատենագիրք հեթանոսաց, զոր անպէտ վարկաք գրել աստանօր։

Արամազդ ստատոր, կամ՝ ստակ ստատոր. որ էր մականուն արամազդայ առեալ նմա 'ի հռոմելոսէ, և ստուգաբանի կայուցանող, զի ըստ առասպելեաց հեթանոսաց կայոյց և նհանջեաց զհռովմայեցւոյն զփախուստ 'ի պատերազմի իւիք որ ընդդէմ սաբինացւոց։ Տիրապետեան հռոմելոս կանգնեաց նմա ըզ տաճար մի անուամբս այսուիկ։

Արամազդ փերետրեան, կամ՝ փերետրիոս, էր այս մականադրական անուն արամազդայ կուռց, ծագի սա 'ի բայէս (Ֆէռօ) որ 'ի բարբառ լատինացւոց նշանակէ բերել, զի արամազդ բերէր հռովմայեցւոց զօգնութիւն. կամ՝ 'ի բայէս (Ֆէրիօ) որ 'ի նոյն բարբառ ստուգաբանի սրով հարկանել, վ՟ զի եհար զթշնամիս նց՟ 'ի ձեռն հռոմելոսի։

Արգոնաւդք կամ՝ արգոնաւորդք. էր անուն ինչ ընծայել նախնի դիւցազանց այսոցիկ, որք ընդ յասոնի եկին արգոս նաւաւն 'ի կողքիսէ եօթանասուն ամօք յառաջ քան զառումն տրովադայ, կամ՝ հազար երկերիւր վաթսուն և երեք ամօք նախ քան զՔ՟ս։

Արիկիայ. էր սա 'ի Տաւմի քաղաք մեծ և երևելի

յի

յիտալիոյ մերձ 'ի Հռովմ՝ շինեալ 'ի Հիպպոլիտոսէ որդւոյ տեսէոսի · Իսկ այժմ է գիւղաքաղաք մի փոքր ։

Արտեմիս · չաստուածուհի որսորդութեան ։ Ըստ կիկերոնի երեք էին անուանեալք այսպիսիկ , մին դուստր արամազդայ 'ի պրոսերփինեայ , միւսն նոյնպէս դուստր արամազդայ 'ի լատոնեայ , և երրորդն դուստր ուպիսայ 'ի կղաւկոյ ։ Երկրորդն 'ի սոցանց է յոյժ բարգաւաճանուն , և ամենայն նախնիք զնմանէ խօսին ։ Ծնաւ նա երկուորեակ ընդ ապողոնի 'ի դելոս կղզւջին , և ցաւքն՝ զորս ետես մօր իւրոյ կրել 'ի ժամանակի երկանց ծննդեան իւրոյ , զայնպիսի ատելութիւն առ ամուսնութիւնն պատճառեցին նմա , մինչև ընկալնուլ 'ի հօրէ իւրմէ կեալ 'ի մշտատև ամուրութեան , և լինել տեսուչ և խնամատար երկանց կանանց ։ Առ 'ի խորշիլ յընկերակցութենէ մարդկան նուիրեաց զանձն որսորդութեան , և եղև միշտ ընկերշակեալ 'ի թուոյ ինչ ընտրեալ կուսանաց , որոց էր նմին նմա յամուսնութենէ հրաժարեալ ։ Ցուցանի նա կապարճ մի զուսովք արկեալ , և դէտակն եղեալ ընդ շանց , և մերթ նստեալ 'ի կառս յերկուց շանց ձգեալ եղջերուօք հանդերձ ։ 'Ի մէջ բազում՝ տաճարաց յանուն սորա կանգնելոց 'ի հեթանոսաց՝ յոյժ հոյակապն և շքեղագոյնն էր տաճարն եփեսոսի , որ և էր մին 'ի յեօթն զարմանալեաց աշխարհի ։

Աքիլլէս կամ աքիլլէս · էր սա որդի պեղեոսի և տետեայ · գերազանց գտաւ արութեամբ քան զամենայն յոյնս 'ի տրոյական պատերազմին ։ Մինչդեռ տակաւին մանուկն էր՝ ընկղմեաց զնա (ըստ հեթանոսացն առասպելեաց) տետի մայր իւր 'ի հեղեղատն ստիւգէ , և զամենայն մարմին նորա անխոցելի գործեաց՝ բայց 'ի կրնկանէն զորմէ ունէր մայրն ։ Յանձն եղև հրա-

հան

հանգութիւն սորա մարդացուլ հրեշին կերոնի , որ ուսոյց սմա զպատերազմին զարհեստ , և այսր վարժապետ երաժշտութեան , ուսաւ և 'ի փիւնիկեաց զարհեստ ճոռոմաբանութեան , յորմէ և սիրեցաւ միշտ յառասպելս : Առ 'ի խոտորեցուցանել զնա անտի 'ի մարտ պատերազմին տրովադայ գնալոյ , ուր գիտէր անշուշտ թէ հանդերձեալ էր մեռանել , առաքեաց զանխլաբար յաղջկունս լիկոմեդէս արքային 'ի հանդերձս կանացիս յապատեալ : Անդատին ընտելութբ՟ իւրով ընդ դստերացն արքային առնէ սա զդէիդամիա մայր նէոպտողեմոսի : Այլ զի չէր հնար առնել զտրովադա առանց աքիլլեայ , գնաց ուլիսէս յաղջկունս լիկոմիդեայ 'ի կերպարանս վաճառականի , և արկ անդ 'ի վաճառ զզարդս կանացիս և զզէնս : Յայտնեաց աքիլլէս զսեռն իւր զանօթս պատերազմականս ընտրելով , և չոգաւ 'ի պատերազմ , ուր մեռաւ վէրս 'ի կրունկն ընկալեալ :

Բակտրիաց ․ է սա յոյժ ընդարձակ և արգաւանդահող աշխարհ ինչ ասիոյ : Էր սա երբեմն մասն միապետութե՟ պարսից , յարեւելս կոյս որոյ է զետեղեալ : Զրուան էր յոյժ հնագոյն թագաւորն աշխարհիս այսորիկ , որ ուսոյց ժողովրդեան իւրոյ զմոգութ՟ և զաստղագիտութիւն :

Բանակետղ մարտի ․ էր սա ընդարձակ դաշտ մի 'ի հըռովմ արտաքոյ պարսպաց քաղաքին , ուր երիտասարդք հռովմայեցիք մարզէին յըմբշամարտութի՟ 'ի տիգախաղացութի՟ և յայլ պատերազմականս կըրթութիւնս : Բանակետղ կամ դաշտ մարտի վասն այն կոչէր՝ զի էր մարտի դիցն պատերազմի նուիրեալ :

Բրամինք ․ որ և բրակմանք ․ են սոքա իմաստասէրք հնդկաց , և են զանձինս բոլորովին 'ի պաշտօն դիցն նուիրեալք , մանաւանդ 'ի մանկութէ իւրեանց հրա-

հան

հանգին 'ի խիստ ճգնութիւն , սակաւապէտք են և ժուժկալք յոյժ 'ի կերակուրս . ոչ երբէք ուտեն ըզմիս և ոչ ըմպեն գինի , և հրաժարին 'ի մարմնական հեշտութեանց : Յետ անցուցանելոյ զամն երեսուն և եօթն 'ի փորձ անձնարին և խիստ ճգնութեանց , հրամայեալ է նոցա յայնժամ՝ կին առնել , և տալ զանձն ամենաձարքձակ յօ և իյէ զեղխութիւն :

Գանգէս . է հռչակաւոր գետ հնդկաց , զորոյ զյատկութիւնս սեպեն 'ի բազաւորանի յատուկ անուանց :

Գարգանոս . է սա բարձրաբերձ լեառն մի ապուլիոյ , որ 'ի ձև պարանոցի ձգի 'ի ծովն ադրիական :

Գարգափիայ . է ձոր ինչ առ երի պղատէայ կղզւոյն որ յեզերս ափրիկէի 'ի միջերկրական ծովուն հանդերձ համանուն իւր աղբերաւ , ուրանօր գիշատեցաւ ակտէոն 'ի շանց իւրոց :

Գերոս . է մի 'ի յոգնաթիւ կղզեաց անարի եգէոն ծովուն՝ այն է արքիպեղագոսի :

Եգէոն . նոյն որ բրիարէոս . էր սա մեծանուն և ցուցանքաւոր սկայ որդի երկնի և երկրի , զորմէ առասպելեն հեթանոսք թէ ունէր զձեռս հարիւր և գլուխս յիսուն , և կոչեցեալ 'ի մարդկանէ եգէոն , և 'ի դից բրիարէոս : Յորժամ յունոն նեպտուն , և աթենաս երդմնակցեցին ընկենուլ յաթոռոյ զարամազդ , եկ բրիարէոս յերկինս և նստաւ առընթեր նր̄ , և զարհուրեցոյց զերդմնակիցսն սաստկաբարուռ և խորոխտ հայեցուածովք իւրովք , զի կասեսցեն 'ի խորհրդոց իւրեանց :

Եգերիայ . էր սա յաւերժահարսն մի արիկիոյ քաղաքին որ յիտալիայ մերձ 'ի հռովմ՝ : Սիրեցաւ սա 'ի նումայէ , և ըստ ովիդիոսի եղև կին նր̄ : Իշխանս այս յաճախակի այց առնէր նմա , և առ 'ի կարող լինել զնոր օրէնս և զսահմանադրութիւն մուծանել 'ի տէրութեան, յայտ առնէր հրապարակաւ առաջի ժողովրդեան հռովմայ թէ էին այնք սրբեալ յառաջագոյն, և վերընկալեալ յաւերժահարսնէն եգերիայ ։ Ովիդիոս ասէ թէ այնչափ անմխիթար եղև եգերիայ 'ի մահուան նումայի մինչև յարտօսր լուծանիլ գլխովին, և փոխարկեցաւ յաղբիւր ինչ յարանուն դից անտի ։

Եղևսիս · էր մի 'ի քաղաքացն ատտիկէ նահանգին յունաստանի ։

Ենդիմիոն · էր սա հովիւ ոմն որդի եթլիոսի և կալիկեայ ։ Առասպելեն զսմանէ թէ խնդրեաց յարամազդայ շնորհել նմա միշտ յառողջութեան մնալ, և ննջել որքան և կամէր · ուստի յառակս եւ՝ զքուն ենդիմիոնի ննջել · առ 'ի նշանակել ոճով զերկարատև խոր ննջելն ։ Ասեն զսա սիրեալ մերկամարմին յորժամ զքնով անկաւ 'ի լեառն լատմոս, և այնչափ հարաւ 'ի սորին գեղեցկութի՛ն, զի իջանէր յերկնից 'ի խոնարհ զնա՛ գիշեր կենցաղակցել ընդ նմա ։ Առասպելն սիրահարութեց ենդիմիոնի ընդ սելենեայ կամ լուսնի, ծագի 'ի հմտութէ նորա յաստեղաբաշխութե՛ արհեստին, և յատկապէս 'ի նկատմանց անտի նր՛ շարժման՝ ընթացից՝ փոփոխութեց՝ և այլն, մոլորակիս այսորիկ ։ Ժողովրդք հերակլէոյ պնդէին թէ մեռաւ ենդիմիոն 'ի լեառն լատմոս, իսկ եղէացիք 'ի կարծիս էին՝ թէ շիրիմ նր էր յոլիմպոս լեառն 'ի պեղոպոննեսոս ։

Ենեա · էր սա իշխան ոմն տրովադայի որդի անկիսեայ, և դիցուհւոյն անահտայ ։ Ամուսնացաւ սա ընդ կրեւզայ դստեր պրիամոսի, յորմէ ստացաւ զորդի մի ասկանիոս անուն ։ 'Ի պատերազմին ընդ տրովադայ 'ի սկզբանէ մինչև ցվախճան շահատակեցաւ սրտութ՟բ մեծաւ յաշխարհին իւրոյ պաշտպանութիւն : Հանդերձ այսու ամե՟ն չարախօսեն ըզանմեղ ստրաբոն և այլ մատենագիրք թէ մատնեաց ընդ անտենորայ զերկիր իւր հայրենի յունաց թըշնամեաց իւրոց, և թէ պահպանեաց զկեանս իւր և զգոյս սոյնգունակ նենգաւոր գործով : Որ եւ թէ յորժամ հրձիգն լինէր տրովադայ, խոյս ետ սա 'ի լեառն իդայ, ուրանօր կազմեաց զնաւս քըսան, և առագաստեալ չոգաւ նոքօք 'ի խնդիր բընակութեան իւրիք : Ըստ վիրգիլեայ և այլոց լատին հեղինակաց (որք առ 'ի մխիթար ինչ մտաց առնել կայսերայն հռովմայեցւոց՝ ասացին զնոցանէ յառաջ եկեալ 'ի սերնդոց անտի ենեայ և զժամանումն նորա յիտալիայ իբրև զանշուշտ իմն գրեցին) անկաւ յիտալիայ, ուր՝ յետ եօթնամեայ ճանապարհի, և յետ կորուսանելոյ զնաւս երեքտասան, լատինոս պսակաւորն աշխարհին այն ընկալաւ զնա մարդասիրութ՟բ, և խոստացաւ նմա զդուստրն իւր զլաւինիա, որ էրն յառաջագոյն 'ի մօրէ անտի նորա յամատայ արքային տուռնոսի խօսեցեալ : Որ 'ի խափան առնել զայս ամուսնութ՟ի, մղեաց տուռնոս զմարտս պատերազմի ենեայ, և յետ բազում մրցանաց 'ի մենամարտութ՟ի ինչ բաղդորոշեալ պատերազմի ընդ մէջ երկուց նախանձաւորաց, յորում անկաւ տուռնոս : Ամուսնացաւ ենեա ընդ լաւինիայ, 'ի պատիւ որոյ շինեաց զքաղաքն լաւինիոյ, և յաջորդեաց զաներ իւր : Յետ վաղանցուկ իմն թագաւորութ՟ե սպանաւ ենեա 'ի պատերազմին որ ընդդէմ հետրուրիացւոց, և յաջորդեաց զաթոռ նորա որդի նորա ասկանիոս : Մեծաց գովութ՟եց արժանի գտաւ ենեա վասն բարեպաշտու՟ե իւրոյ և հպատակութեան առ դիս :

302 [illegible]

Ադամայ լեառն. տե՛ս 'ի բառարանի յատուկ անուանց:

Երեբոս. էր սա ըստ առասպելեաց հեթանոսաց աստուածութիւն ինչ դժոխոց, որդի մթութեան և խաւարի:

Լաուռ սա էր կին գեղեցիկ, և ստացաւ անուն ըղձոյս և պտղոյն: Իբր 'ի բազում 'ի կիր արկանեն բանաստեղծք զանունս զայս երբեմն զնոյն ինքն զդժոխքն առնուլ նշանակելով:

Եօլէ կամ Եօլոս. էր սա առասպելեալ թագաւորն ալէկոծութեանց և հողմոց՝ որդի Հիպպոտայ: Թագաւորեաց սա 'ի մէջ Եօլեայ աշխարհին փոքուն ասիոյ, և վասն լինելոյ իւր գտող առագաստից նաւուց, և երևելի աստեղաբաշխ, 'ի բանաստեղծից աստուած հողմոց կոչեցաւ:

Օրոման՝ որ և Զրադաշտ. հռչակաւոր մոգպետ և թագաւոր բակտրիացւոց: և այլն տե՛ս 'ի բառարանի յատուկ անուանց:

Իլիթեայք. առասպելեալ աստուածուհիք վերադիտողք երկանց ծննդեան կանանց:

Լաւինիա. է սա քաղաք մի Իտալիոյ շինեալ յԵնեայ: տե՛ս և զԵնեա:

Լատին՝ որ և Լացիում. է սա գաւառ մի Իտալիոյ առ գետովն Տիբերեաւ: Լատինի բնակիչք աշխարհիս աբորիգինեսք եղեն կոչեցեալք, և զանունս Լատին 'ի թագաւորէ իւրեանց Լատինոսէ առին: Բայց ասելոյ այլոց ոմանց անունս այս է 'ի բայէս (լաթէօ) ածանցեալ, որ 'ի բարբառ Լատինացւոց թաքչել նշանակէ, քանզի անդ թագեաւ Սատուռնոս յորժամ փախչէրն 'ի յերեսաց որդւոյն իւրոյ Արամազդայ: Նախնական մայրաքաղաք նահանգիս եղև Լաւրենտոս 'ի թագաւորութեան Լատինոսի:

Լատոնա. էր սա դուստր Կէոսի, կամ ըստ Հոմերոսի դուստր Սատուռնոսի: Հռչակաւոր է սա մն

պակ

[illegible]

պաշտպանութեանց իւրոյ ընդ Արամազդայ, որոյ կնիքն յունան լինել մերձ 'ի նախանձու էր, առաքէ զօձն վիթոփին հալածել զկատոգին : Թափառէր և տատանէր սա անդ֊ուստ 'ի տեղի 'ի ժամանակի յղութեան զոր եամ խուճապեալ յերկիւղէ անտի վիթոփին : Մանեցաւ մերժեցաւ սա յերկնից, և յուրասա եկաց երկիր տաղնաու կղզի մի, ուր կարասցէ կալ և ծնանել : 'Ի գութ շարժեալ նեպտունի եհար երեքարձենին իւրով, և արար անշարժական զկղզին Դելոս, որ յառաջին զերեսօք եգեան ծովուն տատանէր : Յաւուրս փոխարկեալ լատոնայ 'ի յորամազդայ գայ 'ի Դելոս, ուրանօր զգենու մերկին զառաջին իւր կերպարան, և ծնանի միանգամայն զապողոն և զարտեմիս : Բայց սակայն զնա յունոն խոյս տայ 'ի Դելոսէ : Զկնի ընդերկար Թափառելոյ ընդ մեծ մասն երկրի, և տանելոյ բազմազբօսութեան նիոբայ և ոխակալի, 'ի վախճանի Թեպէտև փառաւորին յաւանան յունոնի, եղև չաստուածութե ամն հզօր, եւեւ զորդիս չաստուածականն ընկալնուլ զպատիւ :

Լաւրենտինք • ժողովուրդք լատինի • նոյն որ լատինացիք :

Լեմնոս • է սա աշխարհ մի յարգաղխ նահանգի, և հռչակաւոր վասն անդ ապաստանելոյ հեփեստոսի դհնդկրայն անուանի :

Լիկոմեդէս • էր արքայ Սկիւռոս կղզւոյն որ 'ի ծովն եգէան, որում յանձն եղև զանխլաբար հօրն և խնամակալութե աքիլլեսայ, զոր յարուցեալ մօրն նոր տեսեալ 'ի զգեստս կանացին էր յարքունիս առաքեալ առ 'ի նահանջել զնա 'ի պատերազմէն տրովադայ, յորում անշուշտ մեռանելոց էր : Հանդերձ հաբու Լիկոմեդէս վասն ուխտադրժութեան իւրոյ առ տեսիլս, որ էին ընդ հովանեաւ նորուն պաշտպանութեան ամփոփեալ, յորժամ՝ ընկեցաւ յաթոռոյ իւրմէ որ յաթէնս՝ 'ի բռնակալէ անտի Մնեսթէոսէ : Լիկոմեդէս՝ կամ խանդացեալ ընդ փառս անուանն տեսէոսի, կամ կաշառաբեկ եղեալ 'ի Մնեսթէոսէ, եհան զտեսէոս 'ի բարձրաւանդակ ինչ զառածութիւն տեղւոյն իւրոյ ցուցանել նմա կամելով, և նենգաւորաբար գահավէժ արարեալ զնա սատակեաց :

Լիրիոէս. է գետ ինչ կամպանիոյ գաւառին :

Կակոս. էր սա գող անուանի՝ որդի վուլկանոսի և մեդուսայ, ձևանայր իբրև զհրէշ մի եռագլխեան և ժայթքօղ զբոց հրոյ : Որջանայր յայրի միում յիտալիոյ, որոյ մուտք էին մարդկային կմախիւք ծածկեալ : Յորժամ՝ դարձ առնէր Հերակլէս 'ի յաղթութէ անտի գերիոնի արքային սպանելոյ, գողացաւ կակոս զումանս 'ի կովուց նորա, և ձգեաց զնոսա յետս կոյս 'ի փապար իւր առ 'ի թագուցանել 'ի հերակլեայ : Անց ընդ այն Հերակլէսն յաղթական առանց գիտելոյ զայս գողութիւն. բայց 'ի բառաչել եզանց նր, բառաչանաց նց պատասխանեցին և կովքն 'ի յայրէ անտի կակոսի, ուստի ծանեաւ դիւցազն զիւրոյ կովուցն կորուստ : Սմին իբր յարձակեցաւ 'ի վերայ կակոսի, և հեղձամուղձ արար զնա 'ի գէնս նր, թէև հուր և ծուխ ժուայթքէր 'ի բերանոյ : Կանգնեաց անդէն Հերակլէս զսեղան մի յարամազդայ փրկողին 'ի յիշատակ յաղթութեան իւրոյ :

Կամպանիոյ. է ընդարձակ աշխարհ ինչ իտալիոյ, որոյ մայրաքաղաքն էր կապուայ. ունի իւր սահմանակից զլատին՝ զսամնի՝ և զլիկէն. և մասն ինչ միջերկրական ծովուն : Անուանի և բարգաւաճանուն է աշխարհս այս վն̃ բերկրաբերձ տեսլեան եւ արգասաւորութեան իւրոյ :

Կապուայ • էր մայրաքաղաք կամպանիոյ յիտալիոյ, կարծէր շինեալ 'ի կապիւոյ յընկերակցէ անտի անկիսեայ : Այնքան ճոխ եւ մեծագանձ էր քաղաքս այս, զի երկրորդ հռոմ կոչեցաւ : Աստասին ջլատեալ լուծան զօրք աննիբաղայ 'ի փափկութեանց գրգանաց եւ 'ի հեշտութեանց՝ յետ սերբալուր պատերազմին կաննայ :

Կերես • էր սա ա̃ծուհին արմտեաց եւ հնձոց դուստր սատուռնոսի եւ վեստայ դից :

Կիկղոպք • ազգ էին առասպելեալ սկայադիմոց վիթխարի արանց որդիք երկնի եւ երկրի գոլ փորկուցեալք : Առասպելաբանէին զոցանէ հեթանոսք թէ ունէին զմի միայն ակն եւ այն 'ի մէջն ճակատուն : Առասպելաբանք տարաձայնին շուրջ ըզ թուոյ նց̃ • հեսիոդոս զերիս յիշատակէ՝ զարգէս՝ զբրոնտէս՝ եւ զստերոպէս, յաւելու վիրգիլիոս ըզ չորրորդ մի՝ այն է պիրակմոն : Առ ժամանակօք ուլիսեայ եղեւ պողիփեմոս թագաւոր նց̃ : Բնակէին նք̃ յարեւմուտս կղզւոյ սիկիլիոյ, եւ վն̃ լինելոյ նոցա բիրտ եւ վայրագ յոյժ 'ի բերմունս իւրեանց պատճառս տային աստի բանաստեղծք խօսել զն̃ցէ իբրեւ զմարդակերաց : Աւանդութիւնն զունելոյ նց̃ զմի միայն ակն՝ սկիզբն էառ 'ի կրելոյ նց̃ զվահան մի փոքրիկ, որ ունէր 'ի միջակէտն ծակ մի, որ ամենեւին ական նմանէր : Առ մօտակայս լինելոյ նոցա լերին ետնայ, կարծեցեալ եղեն գործաւորք վուլկանի լինել, եւ կազմօղք շանթից արամազդայ : Սկուանդն պղուտոնի եւ երեքարձէնն նեպտունի են գործք վաստակոց նց̃ : Ընդ ա̃ծս էին համարել կիկղոպք, եւ հանդիսիւ մեծաւ լինէին նց̃ մատուցեալ ղոհք 'ի կորնթոս ։ Կիկլոպքն և հետախաղաղարար կամենեսեան զն̃ս ապողոն, վ̃զի գործ ձեռաց նց̃ էր շանթն, որով եհարն արամազդ և սատակեաց զորդի նորա եսկուլապիոս ։

Կինթոյ · տեղի ծննդեան արտեմեայ դից ։

Կիւրէս · էր քաղաք մի սաբինացւոց, որոյ արքայն էր տատիոս ։ Ժողովուրդք քաղաքիս այսորիկ քանի վիրք անօրինեալք, տարեալ եղեն 'ի հռոմ՝, որոյ եղեն քաղաքացիք ։

Կիւրենեա · էր սա դուստր ովկիանոսի և տետեայ սիրեցեալ յապողոնէ ։

Կոնսոս · աստուածութիւն ինչ պաշտեալ 'ի հռոմ վերադիտող խորհրդեան ։

Կուրիատեանք · էր տուն մի ալբայ քաղաքին, որ 'ի տուղղոս հոստիլիոսէ 'ի հռոմ՝ փոխադրեցաւ, և համարեցաւ 'ի թիւն պատրկաց ։ Երեք կուրիատեանք՝ ոյք ընդ երից ոհրատեանց գուպարեցան, 'ի տանէ աստի էին ։

Հեսխիւղոս · մին 'ի բռնաւորացն յատուկ անօրինաց ։

Հետրուրիայ · անուանի աշխարհ ինչ իտալիոյ յարեւմտից գետոյն տիբերոսի ։ Սա 'ի ժմ̃ս պարունակէր յերկոտասան գաւառական ազգս, իւրաքանչիւր յորոց ունէր առանձին զիւրն պատկաւոր ։ Բնակքին սորա էին հզօր և անհաշտելի թշնամիք նորածին իշխանութեան հռոմայեցւոց, և հուսկ յետոյ պարտեցան նուաճեցան 'ի հռոմայեցւոց անտի անհնարին արեան ճապաղեօք ։

Հերակլէս կամ Հերքիւլէս, նոյն որ առ մեզ վահագն, որդի արամազդայ ։

Հերակլիոտեայք · ընծայեցին զայս անուն նախնիք անձանց բազմաց, յոյժ բարգաւաճմամբն որոց էր իմաստասէր ոմն 'ի հերակլեայ որ 'ի պոնտոս, միան-

գա

գաւառոյն և աշակերտ արիստոտէլի իմաստասիրին ։

Հեսփերիացիք • էին սոքա ժողովուրդ ինչ կամպանիոյ սերաղուլք յաղագս անձնարին թշնամեաց իւրեանց՝ որք առ նորածին զօրութիւն Հռովմայ ։

Հերսիլեայ • էր սա մի 'ի կանանց սաբինացւոց 'ի Հռովմայեցւոց անտի յափշտակելոց 'ի հանդիսի անդ կոնսոս կռոյն ։ Զսա առ Հռոմուլոս և ամուսնացաւ ընդ նմա , և անմահացեալ էր 'ի ձեռն յունոնի , ընկալաւ զդիցն պատիւ ընդ անուամբ (Հօրայ) այն է ժամ ։ ('ի մատենանս յայս կեղծի դուստր Հռոմուլոսի ։)

Հինդոս • է գետ մի մեծ ասիոյ , յորմէ աշխարհն մերձ առեալ է զանունն Հնդիկ ։ Ելանէ սա յեմաւոն լեռնէ յարևմտից գանգէս գետոյ և յերկուս յառուս բաժանեալ , երթայ անկանի յովկիանոսն Հնդկաց ։

Հոմերոս • տես 'ի բառարանի յատուկ անուանց ։

Մարսք • էին սոքա ազգ ինչ գերմանիոյ , որք յետոյ հարգունեայն յիտալիայ յաշխարհ մի լի կծծիւք և այլ ամեհի կենդանեօք ։ Հանդիսացան սոքա տիրապէս 'ի պատճառս քաղաքական պատերազմին , զոր հարկեցան մղել , և որ 'ի սոցունց անուն էառ զանունն (մարսիական մարտ ։)

Մարս • էր սա չաստուածն պատերազմի՝ որդի արամազդայ և յունոնի , կամ միայն յունոնի , որ ցանկացեալն էր մայր լինել առանց գիտելոյ զայր , նման արամազդայ՝ որ էր արտադրեալ յուղղոյ զաթենաս համակ սպառազինեալ ։

Մարրուբիոյ • էր սա վայր ինչ յիտալիայ մերձ 'ի գետն լիրիսոս ։

Յանոս • էր սա ևս հնագոյն թագաւորն՝ որ թագաւորեաց յիտալիա , և էր 'ի թեսաղիայ ծնեալ և որդի ապողոնի ։ Եկն սա յիտալիայ՝ ուր առ եղերբ

տի

տիբերոսի շինեայ զքաղաք մի փոքրիկ , զոր յանիկուլս անուանեայ : Յետ մեռանելոյ իմ կարգեցին զիս հեթանոսք 'ի դասս դից : Տաճար իմ բացեալ կայր միշտ 'ի ժամանակի պատերազմի • երկից անգամ՝ եւեթ փակեցաւ յընթացս հոլովման ամաց եօթն հարիւրոց • ընդ թագաւորութ̄ Նումայի երկերիւր երեսուն եւ չորս ամօք նախ քան զծնն̄ փրկչին, եւ ընդ թագաւորութեամբն օգոստոսի կայսեր • եւ 'ի միջոցի երկարաձիգ ժամանակացս շրջանի հռովմայեցիք 'ի պատերազմի կային անընդհատ :

Յունոն • էր սա դուստր սատուռնոսի եւ ոպսայ , ուտի եւ քոյր արամազդայ՝ պլուտոնի՝ նեպտունի՝ վեստայ՝ կերեսայ՝ եւ այլոց : Ծնաւ սա յարգոս քաղաքի, կամ՝ ըստ այլոց 'ի սամոս կղզին , եւ յանձն եղեւ խընամոց չորից եղանակաց , կամ՝ ըստ հոմերոսի եւ ովիդիոսի յիշատակելոյ՝ ովկիանոսի եւ տեթեայ : Կլեալ եղեւ յունոն 'ի սատուռնոսէ որպէս պատմեն առասպելաբանք բազումք • եւ ըստ ասողողութի ընծայեցաւ վերստին աշխարհի 'ի ձեռն ըմպելւոյ իրիք , զոր արբոյց մետիս սատուռնոսի : Օակառեցաւ 'ի սէր յունոնի արամազդ եղբայր նորա , եւ առ 'ի հասանել բաղձանաց իւրոց 'ի ձեռն Տարից՝ փոխարկի 'ի կկու , եւ յետ գամադիաս լինելոյ ամուսնանալոյ ընդ նմա , եւ լինին հարսանիք մեծահանդիսիւ , եւ հրաւիրեալք այսց հարսանեաց՝ դիք՝ ամ̄՝ ազգ մարդկան՝ եւ ամ̄՝ գազանք եւ անասունք : Եւ յաղագս այսր ամուսնութ̄ յունոնի ընդ եղբօր իւրոյ արամազդայ՝ լինի դշխոյ դից ամենեցուն , եւ տիրուհի երկնի եւ երկրի :

Նայադք • էին սոքա ոմանք ստորին ա̃ծութիւնք , որք վերակացուքն էին գետոց՝ աղբերականց՝ ջրհորոց՝ եւ աղբերաց : Նկարէին սոքա հասարակօրէն 'ի չէնս , և յաճախէին յանտառս և 'ի մարգս մերձ յա-ռուս որոց էին սոքա հրամանատարք , յորմէ առեալ է անունս (նայադք) զի 'ի բարբառ յունաց բառս (նաէին) հոսել ստուգաբանի : Կոչին դ̅ք անխարի և յաւերժահարսունք :

Նեմեայ՝ կամ՝ Նումիդիայ • էր սա քաղաք մի յարգո-ղիս նահանգի , ուր հերքիւլէս յարբունս մետասան ամաց սպան զհռչակաւոր առիւծն Նեմեան , զծնեալն 'ի տիփոնէ 'ի հարիւրգլխեան սաստկաբար-սուռ հսկայէն , որ զըղջակալս Նեմեայ յաւէր դար-ձուցանէր՝ յանդադր ահաբեկուն զբնակիչս ունելով:

Նեստոր • էր սա որդի Նեղէոսի և քլորիդեայ՝ քեռոր-դի պեղիասայ և թոռն Նեպտունի : Ունէր զեղբարս մետասան , որք ամենեքեան հանդերձ հարբ իւ-րեանց 'ի մահ մատնեցան 'ի հերակլեայ : Տիրապետս այս խնայեաց 'ի կեանս սորա , և ետ զսա յաթոռն պիղոսի : Ամուսնացեալ սա ընդ եւրիդիկեայ դստերն կղիմենեայ՝ կամ՝ ըստ այլոց ընդ անաքսիբեայ դըս-տերն ատրէոսի : Աշ ուրեմն բարգաւաճեալ հան-դիսացաւ սա 'ի բանակի մարտին , և եղև առաջա-կայ հարսանեացն պերիթեայ , յորժամ արիւնըռուշտ պատերազմ յարեաւ ընդ մէջ լապիթեայ և մարդա-ցուլ յուշկապարկաց : Եղև թագաւոր պիղոսի և մեսսենեայ վարեաց զժողովուրդ իւր 'ի պատերազմն տրովադայ , ուր հոյակապեցաւ 'ի մէջ այլոց առա-ջնորդացն յունաց պերճախօսուբ̅՝ Խորագիտուբ̅՝ իմաստուբ̅՝ արդարութեամբ և անզուգական կորո-վամտութեամբ : Յետ պատերազմին տրովադայ առանձնացաւ նեստոր 'ի յունաստան , ուրանօր վայ-ելեաց 'ի խաղաղուե̅ և յանդորրուե̅ , որ իմաստուե̅ և ալեաց նր̅ պատշաճէր : Տեղանակն և ժամանակ մահուան նեստորի չէ յայտնի , նախանձք ամենեքեան համաձայնին թէ եկեաց զերիս ազգս մարդկան, և տևողութիւն ժամանակիս այսորիկ վարկագրեցին ամենք լինել ամք երեքհարիւր, թէպէտ յոյժ հաւանականագոյն ամք իննսուն ևեթ, ըստ ամենայնիւր ազգ զամ երեսուն հաշուելով։ Էին սորա դստերք երկու՝ պիսիդիկէ և պողիկաստէ, և ուստերք եօթն՝ պերսէոս՝ ստրատիկոս՝ արետոս՝ էքեփրոն՝ պիսիստրատոս՝ անտիլոքոս՝ և թրասիմեդէս։ Ըստ վաղերիոսի՝ փլակկոսի՝ հոմերոսի՝ ովրատիոսի, էր նեստոր մին 'ի յարգոնաւորդաց նաւի։

Ովրատիոս ․ նոյն որ պուպղիոս ովրատիոս կոկղէս ․ էր սա բարգաւաճանուն և հոյակապ հռովմայեցի ոմն, որ մի միայն ընդդէմ եկաց բովանդակ զօրացն պորսէննայ արքային հետրուրիոյ 'ի գլուխ կամրջի միոջ, և խափան արար նոցա զանցս կամրջին ծայրագոյն արիութեամբ, մինչև ընկերք իւր յետուստ կողմանէ իւրմէ խորտակեալ և քանդեալ զկամուրջն անջատեցին զերկուս ափունս գետոյն 'ի միմեանց։ Նա իբրև ետես ովրատիոս թէ աւերեցաւ կամուրջն՝ որում պահէր, թէպէտև վէրս ընկալեալ 'ի նետաձգութենէ անտի թշնամեաց ընկեց զինքն 'ի գետն տիբերիս, և լողեալ՝ յայնկոյս առ իւրսն էանց սպառազինութեամբ իւրով հանդերձ։

Ուլիսէս ․ էր սա թգւր իթակոյ և դուլիխոյ կղզեաց, որդի անտիկղեայ և լաերտեայ, կամ ըստ բազմաց սիսիփոսի։ Հարկանի սա 'ի սէր չքնաղագեղին հեղինեայ, բայց յուսահատ եղեալ 'ի փեսայացուն լինելոյ, խնդրէ 'ի կնութի զպենելոպէ զդուստրն իկարիոսի։ Ոչ միայն յաջողեցաւ ուլիսեայ ընդ պենելոպայ ամուսնանալ, այլև չոքաւ յիթակոյ, ուր հայր նորա կարգեաց զնա թագաւոր փոխանակ իւր։ Հանդերձ այսու ամենայնիւ յափշտա-

կուն

կումն հեղինեայ ոչ եւս նմա թոյլ ընդերկար դեգերել յիթակայ, զի հրաւիրեցաւ 'ի պատերազմ՝ ընդ այլ պսակաւորացն յունաստանի : Կեղծեաց զխելաժեստութիւն առ 'ի չմեկնել 'ի տենչալւոյն իւրոյ պենելոպեայ : Լծէր զձի մի եւ զցուլ մի 'ի միասին, եւ վարէր նոքօք զափն ծովուն, յորում՝ փոխանակ ցորենոյ սերմանէր զաղ : Յայտնեցաւ իսկոյն կեղծիքս այս 'ի պալամեդեայ, որոյ արկեալ առաջի արօրին ուլիսեայ զմանուկ որդին նորա զտելեմաքոս, ակներեւ եցոյց աշխարհի թէ չէր հայրն խելացնոր, զի խնամ տարաւ 'ի բաց խոտորել յակօսէ անտի զարօրն, զի մի՛ փշրեսցէ մանկան իւրոյ : Ուստի հարկաւորեցաւ ուլիսէս գնալ 'ի պատերազմ : Եւայլն :

Պալատին լեառն . է սա մեծագոյնն եւ ընդարձակագոյնն եօթն բլրոց՝ յորոց վ՟ր շինեցաւ հռոմ : 'Ի վ՟ր նր՟ էարկ հռոմուլոս զառաջին հիմն տիեզերահռչակ մայրաքաղաքին իւրոյ, եւ անդստին եւս զարքունիս իւր հաստատեաց, որպէս եւս արարին տուղղոս հոստիլիոս՝ օգոստոս, եւ ամ՟ն յաջորդ կայսերք, եւ 'ի հանգամանաց աստի առեալ անունս այս պալատ տուաւ այնուհետեւ ամ՟ն ապարանից իշխանաց :

Ապողոն որ պաշտեցաւն 'ի հեթանոսաց անտի 'ի պալատին լեառն, կոչեցաւ եւ պալատեան : Տաճար նր՟ անդէն կառուցաւ յօգոստոս կայսերէ, որ բարգաւաճեաց զայն գրատամբ միով ազնուագին յոյժ՝ վ՟ն ազգի ազգի հաւաքեալ յունարէն, եւ լատիներէն ձեռագիր մատենից, զորս պարունակէր :

Պալլադէս՝ կամ պալլաս . նոյն որ աթենաս, էառ սա զայս անուն անտի, վ՟ն զի սպան զսկայն պալլաս, կամ 'ի տիգէն՝ զոր թուէր թէ կրէր 'ի ձեռին իւրում, զի 'ի բարբառ յունաց (պալլէին) տէգ սասուցանել է :

Պան . էր սա աստուածացեալ չաստուածութիւն ինչ հովուաց

որ

ոստրդաց և տա̃ն շինականաց, 'ի մէջոյ 'ի վեր 'ի նմանութի̃ մարդոյ, և 'ի մէջոյ 'ի վայր այծու դրօշեալ:

Պանդարոս · էր սա որդի ալկանորայ, որ սպանաւ եղբարբ իւրով բիտիասաւ հանդերձ 'ի տուռնոսէ :

Պարք · էին սոքա աստուածեալ հզօր և կարօղ չա̃ծուհիք վերադիտողք ծննդեան և մահու ազգի մարդկան : Երեք էին սոքա թուով՝ կղոտոն՝ լաքեսիս՝ և ատրոպոս, դստերք նոքսայ և երեբոսի դից, ըստ ասելոյ հեսիոդոսի մատենագրին · կամ արամազդայ և թեմեայ չա̃ծոյ՝ ըստ այլոց բանաստեղծից : Կղոտոն կրտսերագոյն 'ի քորս իշխէ վայրկենին յորում ծնանին մարդիկ, և ունի զաղեկատ մի 'ի ձեռին · լաքեսիս նիւթէ զթել կենաց մարդկան · և ատրոպոս երիցագոյնն խզէ զայն մկրատաւ :

Պերեննա՝ որ և աննա · էր սա չա̃ծուհի մի 'ի հռովմայեցւոց անուանի պատուականիւն, 'ի պատիւ̃ որոյ էին կարգեալ հանդէսք · ըստ բազում մատենագրաց էր սա դուստր բելայ, և քոյր դիդոնի : Հանդէս որ կատարէին հեթանոսք 'ի հնգետասաներորդում աւուր ամսեանն մարտի, և մատուցանէին սմա զոհս ընդ անուամբս (աննա պերեննայ) առ 'ի ունել զերկայն և երջանիկ զկեանս · քանզի՝ բառս (աննուս) 'ի լատին լեզու ամ նշանակէ, և (փերեննուս) երկայնաձիգ :

Պերսէս · էր մին յորդւոց անուոր արամազդայ :

Պլանդուսիայ՝ կամ Բլանդուսիայ · էր աղբիւր ինչ առ սահմանօք աշխարհին սաբինացւոց :

Պրենեստէ · է սա քաղաք ինչ լատինի քսան և մի մղոնաւ հեռի 'ի հռովմայ՝ շինեալ 'ի տեղեգոնոսէ յորդւոյն ուլիսեայ և կիրկեայ, կամ ըստ այլոց 'ի կեկուղոսէ յորդւոյն վուլկանոսի : Էր 'ի սմա հռչակաւոր մեհեան մի բախտին, և հարցուկ մի ևս 'ի նմա, որ ժամանակս ձիգս եղև 'ի մեծի համարման :

Պրոկաս • Նստաւ սա թագաւոր Ալբայ զկնի հօր իւրոյ Աւենտինոսի • Ամուլիոս և Նումիտոր են որդիք սորա :

Ռամնէս • էր սա թագաւոր ոմն և գուշակ՝ որ օժանդակէր Տուռնոսի ընդդէմ Ենեայ : Սպանաւ սա գիշերայն 'ի Նիսոսէ :

Ռուտուլեանք • էին սոքա ժողովուրդք ինչ Լատինի • յորժամ եկն Ենեաս յԻտալիա՝ թագաւորէր 'ի վերայ սոցա Տուռնոս, որ վարեաց զօրս 'ի մարտ պատերազմի, զոր մղեցին ընդդէմ Ենեայ Իշխանին Տրովադայ • Մայրաքաղաք սոցա Արդեայ կոչէր :

Սաբինք կամ Սաբինացիք • Հին ժողովուրդք Իտալիոյ, առ երի Հռովմայ հարդուանայենք, զորոց ասի լինել կողմնայ ինչ Լակեդեմոնացւոց՝ պարագլուխ իւրեանց Սաբինոս զոմն ունէին :

Սալենտինացիք • են ժողովուրդք ինչ Իտալիոյ մերձ յԱպուլիոյ գաւառ 'ի հարաւակողմն Կալաբրիոյ :

Սամնիացիք • էին և սոքա ժողովուրդք Իտալիոյ բնակիչք Սամնիայ աշխարհին, որ ընդ մէջ Պիկենի՝ Կամպանիոյ՝ Ապուլիոյ և Ջրոյն Լատինի : Համբաւեալ հարան սոքա վասն անհամբոյր և անողոքելի ատելութեան իւրեանց առ Հռովմայեցիս, մինչև հուսկ ապայ լիովին և հետախաղաղ եղեն 'ի նոցունց ամսանի երկերիւր եօթանասուն և երկու ամօք յառաջ քան զՔն, յետ եօթանասուն և մի ամաց պատերազմի : Մայրաքաղաք սոցա անուանեալ Սամնիում, կամ Սամնիս :

Սատուռնոս • առասպելեն զնմանէ հեթանոսք որդի երկնի և երկրի լինել, կամ Ուրանոսի և Տեղայ՝ որ նոյն է : 'Ի բնուստ անուն Կռոնոսից էր սա՝ և նորա տիւք եւ մօր իւրոյ քինախնդիր եղև 'ի հօրէ իւրմէ, որոյ անգթութիւնն առ որդիս էր զցասումն սորա գրգռեալ: Այլ սորա երկիր կամ՝ տէա ետ զանխլաբար 'ի ձեռս սորա զածելի մի, և իբրև եմուտ ուրանոս առ տէայ, եհատ սատուռնոս զանդամ՝ նորա, և զրկեցոյց զնա իսպառ 'ի զթիւ՟ որդւոց իւրոց բազմացուցանելոյ: Յետ այսորիկ պայազատեաց սատուռնոս եղբօր իւր հաւանութ՟ զաթոռ թագաւորութե՟ հօր իւրոյ, և եդ 'ի միտ ոչ սնուցանել բնաւ զզաւակ արու՝ ըստ պայմանին եղելոյ ընդ եղբօր իւրոյ տիտանայ: Այն իսկ կլանէր միշտ սատուռնոս անդէն ընդ ծնանելն զորդիս իւր, մինչև կին նորա ռէա թագոյց 'ի նմանէ զծնունդն արամազդայ նեպտունի և պղուտոնի որդւոց նորա, և ընդ մանկանցն փոխանակ առաջի եդ նմա կլանել զմեծամեծ վէմս: Յետ ժամանակաց ինչ մղեաց տիտան զմարտ պատերազմի եղբօր իւրոյ սատուռնոսի, և ընկեցե՟լ զնա յաթոռոյ՝ կալանաւոր արար զնա կնաւն հանդերձ: Արամազդ՝ որ էր 'ի կրետէ սնուցեալ թագնաբար, փութացաւ զերծուցանել զհայր իւր, որոյ չարաչար վարեալ զորդւոյն իւրոյ զսէր և զգորով, դարանակալ եղև նմա. բայց արամազդ քակեաց զնա յաթոռոյ իւրմէ, որ գաղթեալ ապահովացաւ յիտալիոյ, և վասն այսորիկ կոչեցաւ տեղին այն (լացիում,) որ ծագի 'ի լատին բառէս (լաթէօ) որ նշանակէ թագչիլ: Յանոս արքայն իտալիոյ ընկալաւ զսատուռնոս և արար իւր գահակից: Պարապեցաւ սատուռնոս գլխովին 'ի հրահանգութիւն խուժադուժ և վայրագ բարուց ժողովրդեանն իտալիոյ, և յուսուցանել նոցա զհողագործութի՟: Այնքան բարիս պարգեւեաց սատուռնոսին թագաւորութի՟ անդանօր, մինչև կոչել զայն ժամանակն՝ դար ոսկեղէն, առ 'ի ցուցանել սովու

զեր

զերջանկութիւնն յոր վայելէր երկիրս ։

Սոգդիանայ․ է աշխարհ ինչ ասիոյ՝ որ ունի իւր սահմանն 'ի հիւսիսոյ զսկիւթիա, յարեւելից զսակէս խուժադուժ վրանաբնակ ժողովուրդս, 'ի հարաւոյ ըզբակտրիայ, եւ յարեւմտից զմարգիանայ ։ Այս աշխարհ 'ի նորումս հասարակօրէն եօզպէգ անուանի ։

Վեստա․ էր սա չա̃ծուհի մի դուստր սատուռնոսի եւ ռէայ դստերն երկնից եւ երկրի, եւ քոյր կերեսայ՝ յունոնի՝ պղուտոնի՝ նեպտունի, եւայլն ։ Յորժամ առեալ լինի սա իբրեւ մայր դից, սա մայր ռէայի եւ սատուռնոսի, եւ յորժամ՝ համարի իբրեւ պաշտպանուհի վեստալեան կուսանաց, կոչի դուստր ռէայ եւ սատուռնոսի ։ Անուամբքս այսորիկ էր սա պաշտեալ 'ի հռովմայեցւոց․ զառաջինն ենեաս եմոյծ զառասպելեալ խորհուրդ սորա յիտալիայ, եւ նուման կառոյց 'ի պատիւ սորա զմեհեան մի, ուր արգելեալ էր արանց մտանել ։ 'Ի մեհենի ա̃ր վառ պահէր հուրն հանապազ 'ի յատուկ իմն թեմոյ կուսանաց, որոց էր նուիրել զանձինս 'ի պաշտօն դիցս այսորիկ ։ Եթէ լինէր յերբեմն հրոյն շիջանել, պատուհասեալ պատժէր խստագոյնս կոյսն՝ յանհոգութենէ որոյ լինէր այն պատահեալ, եւ վառեալ լինէր հուրն վերստին արեգականն ճառագայթիւք ։ Տաճարն վեստայ էր բոլորակաձեւ, եւ էր չա̃ծուհին գրօշեալ յերկայնաքղանց ինչ հանդերձս՝ քօղեալ գլխով, 'ի մի ձեռին զկանթեղ մի ունելով, կամ՝ զանօթ ինչ 'ի ձեւ երկուց ականջաց 'ի միասին կցելոյ, եւ 'ի միւսումն զնէգ մի, կամ՝ երբեմն զթերափ մի փոքրիկ՝ դիցն պալլադեայ ։

Վեստալեանք․ էին սոքա առ հռովմայեցւոց քրմուհիք նուիրեալք 'ի պաշտօն վեստայ չա̃ծուհւոյն ։ Պաշտօնս այս յոյժ հնագոյն էր, զի եւ մայրն հռո-

մու

մնալոյ էր մի 'ի վեստալեան կուսանաց : Նախընտրելն վեստալեանց Ենեա գոլ կարծի, Նումայ կարգեաց զչորս թուով, յորս յաւել և զերկուս տարքուինոս : Յետ վանելոյ զտարքուինեանս 'ի Հռովմայ՝ յանձն եղեն սոքա քրմապետին խնամոց : Պաշտօն սոցա էր զգուշանալ հրոյն շարունակութեան վեստայ զի մի՛ շիջանէր : Պահանջիւր ևս զի լինէին 'ի քաղաքահամիկք, և առանց արատոյ և անխեղծութե յամ՝ մատուռս մարմնոյ իւրեանց : Զամս երեսուն կալ ունէին 'ի խոստադրոյն իւրն ողջախոհութե • զառաջին տասնեակն ամս էր նոցա 'ի հրահանգութե և 'ի կրթութե պաշտաւորութեանց կարգին ուսուցանել, զերկրորդն 'ի փորձ և 'ի խնամ՝ ածելն իւրեանց սրբութե, և զտասնեակն վերջին 'ի մարզել զորս միանգամ՝ էին 'ի նորընծայութե մնեալ : Յետ անցից երեսնից ամաց՝ հրամայեալ էր սոցա ազատ լինել, և կամ եթէ 'ի կամակարուց յանձն առնուին յողջախոհութե կալ՝ նախադասութ զայն համարել վերատեսուչք մնացեալ կուսանաց լինէին : Սակաւք 'ի վեստալեանց գտան յանցաւորք անողջախոհութե, և զամս հազար անընդհատ 'ի թագաւորութէ անտի Նումայի մինչեւ հաստատեալ այս կարգ, յորում՝ ընդարձակ միջոցի տասն և ութն միայն եղեն պատուհասեալ 'ի պատճառս կուսութե իւրեանց զուխտն աղարտելոյ : Եբարձ և խափանեաց մեծն Թէոդոս զվեստալեանս, և շիջոյց ըզհուրն վեստայ :

Վոլկք • էին սոքա ժողովուրդ ինչ լատին գաւառին, աշխարհին որոց էր սահմանեալ 'ի հարաւոյ 'ի տիւրենեան ծովէ, 'ի հիւսիսոյ յաշխարհէն հերնիքաց և մարսաց, յարևմտից 'ի լատինացւոց և 'ի ռաւտուլեացւոց, և յարևելից 'ի կամպանիոյ : Նոր-

քայն

քոյն հռովմայեց անկատ՝ մարտ պատերազմի մղեաց ընդդէմ սոցա, և 'ի ժամանակս հասարակապետութեն եղեն սոքա հզօր և ահարկու թշնամիք հռովմայեցւոց, մինչ հասեալ յետոյ նուաճել եղեն ծառայորդովք հնազանդեալ լատինի :

Տելեմաքոս · էր սա որդի ուլիսեայ և պենելոպեայ :

Տեմիս · էր սա դուստր երկնից և երկրի, զոր էառ իւր կին արամազդ յակոբանց կամ Ն՞Ր : Աստուածուհի եղև սա՝ ըստ առասպելեաց, որում բնակիչք երկրի մեհեանս կանգնեցին : Եղև սա հարցուկ հռչակաւոր յատտիկէ քաղաքի 'ի ժամանակս դեւկալիոնի արքային Թեսաղիոյ : Դրօշեն զսա նոքա՝ ունեալ 'ի մի ձեռին զսուսեր, և 'ի միւսումն զկշիռ :

Տենոս · էր սա մին 'ի չա̃ծուհեայ ծովու գաւառըն երեանն և գորեայ :

Տիբերիա կամ տիբերոս · է գետ ինչ ոռոգօղ իտալիոյ՝ առ ափամբ որոյ շինեալ կայ Հռոմ : Սոյն այս գետ յառաջագոյն (ալբուլայ) անուանէր՝ յաղագս ջրոյն իւրոյ սպիտակութեան, և յետոյ կոչեցաւ (տիվերինոս) յանուն արքային տիբերինոսի, որ գետամոյն եղև 'ի նմա :

Տիբուր · է սա հնագոյն քաղաք ինչ սաբինացւոց, շինեալ՝ ոպ̃ ասեն, 'ի տիբուրտոսէ յորդւոյ ամփիարասի · ուստի սա 'ի գետոյն անիանէ որ իջանի 'ի տիբերիս · 'ի նորումն (Թիվօլի) կոչի յիտալացւոց քաղաքս այս :

Տիսիփոն · առասպելեն զսմանէ հեթանոսք լինել մի 'ի կատաղեաց անուն սանդարամետականաց դուստր նոքայ և աքերոնի՝ ստացաւոր ա̃ծայլին վրէժխնդրութե յազգէ մարդկան, որ և պատժէր զչարս 'ի տարտարոսի : Դրօշեալ լինէր սա ձաղկիւ մի 'ի ձեռին, և բազմութիւն օձից զգլխոյ սորա կախեալք

և

Հ12-01

և և

և գալարեալք զբաղեղօք առաս:

Տուռնոս • էր սա պատկաւոր մի ռուտուլեանց որդի Դաւնոսի և Վենիլեայ յաւերժահարսին: Նա սա պատերազմ՝ Ենեայ և ջանացաւ հանել զնա յԻտալիոյ, զի մի յաջողեսցի նմա առնուլ իւր կին զԼաւինիա դուստրն արքային Լատինոսի, որ խոստացեալն էր ինքեան յառաջագոյն: Ի պարտութիւն մատնեցաւ սա, և ի վախճանի սպանաւ յԵնեայ ի մենամարտութեան:

Փեբոս • անուն ինչ Ապողոնի դից ընծայեալ, և յաճախ վարի սա ի բանաստեղծութիւնս փոխանակ արեգական:

*Բաջարշաւք կամ *Բաջանթայք • էին սոքա երեքհարիւր քաջատոհմիկ և կորովի երիտասարդք՝ ի Հռոմուլոսէ ընտրեալք թիկնապահ իւր լինել՝ և արբանեկել նմա ուր ուրեք և երթայր, և պաշտպանել զանձն նորա: Անուանն սոցա արիբուն՝ այն է, հետեւակայեն քաջընթացից կոչեցաւ:

Ֆետենեաք, էին սոքա բնակիչք Ֆիտենայ քաղաքին Լատինի: Պատերազմեցին զայս աշխարհ Հռովմայեցիք չորեքհարիւր երեսուն և հինգ ամօք յառաջ քան զՔրիստոսի փրկչին:

ՎԱԽՃԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ

ՀՍՍՀ ՊԵՏ. ՀԱՆՐ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.